

**ՀՀ ԿՐԹՈՒ ԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒ ԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒ ԹՅՈՒՆ  
Խ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ  
ՀԱՄԱԼ ՍԱՐԱՆ**

**ՇԱՐԻՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ Լ ԵՎՈՆԻ**

**ՍՈՑԻԱԼ ԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒ ՄՆԵՐԻ ԴԵՐԸ ՍՆՆԴԱՅԻՆ ՎԱՐՔԻ  
ՇԵՂՈՒ ՄՆԵՐԻ ՁԵՎԱԿՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒ ԹՅՈՒՆ**

ԺԹ 00.03 «Սոցիալ ական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, տարիքային, մանկավարժական, խմբային գործունեություն)» մասնագիտությամբ հոգեբանական գիտություններին թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտություններին դոկտոր,  
պրոֆեսոր  
**Ն. Ռ. Հակոբյան**

-Երևան 2017-

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆ**

**Ներածող թյ ու ն** .....3

**ԳԼՈՒԽ1. ԱՆՁՆԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ ԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒ ՄԼԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՍՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱՅՈՑԲԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ**

1.1 Դիրքորոշող մաների էությունը, գործառույթները և դրանց հնարավոր ազդեցությունը սննդային վարքի շեղումների առաջացման գործընթացի վրա.....18

1.2 Սոցիալական դիրքորոշող մաների ազդեցության մեխանիզմները՝ որպես սննդային վարքի շեղումների առաջացման դետերմինանտ.....33

1.3 Սոցիալական դիրքորոշող մաների ազդեցությունն անձի ինքնաընկալման, ինքնագնահատականի և ինքնավերաբերմունքի ձևավորման գործընթացի վրա.....45

**ԳԼՈՒԽ2. ԱՆՁԻ ԻՆՔՆԱԸՆԿԱԼ ՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅ ՍՏԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՄՆՆԴԱՅԻՆ ՎԱՐՔԻ ՇԵՂՈՒ ՄԼԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԱԿՈՒՆՔ**

2.1 Սոցիալական պերցեպցիայի և ինքնաընկալման ազդեցությունը սննդային վարքի շեղումների առաջացման գործընթացի վրա .....54

2.2 Մարմնակազմի նկատմամբ վերաբերմունքի ազդեցությունը սննդային վարքի շեղումների առաջացման գործընթացի վրա .....72

**ԳԼՈՒԽ3. ՄՆՆԴԱՅԻՆ ՎԱՐՔԻ ՇԵՂՈՒ ՄԼԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ԴԻՐՔՈՐՈՇՈՒ ՄԼԵՐԻ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ՀՍՏԿԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՊԻ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱՉՈՏՈՒ ԹՅՈՒՆ**

3.1. Հետազոտության ընթացքում կիրառված մեթոդների նկարագրը և արդյունքների վերլուծությունը .....  
..... 79

**ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ** ..... 115

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ** ..... 120

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ** .....

123

**ՀԱՎԵԼ ԿԱՃԵՐ** .....

133

## ՆԵՐԱՃՈՒ ԹՅՈՒՆ

**Թեմայի արդիականությունը.** Պատմական տարբեր

ժամանակահատվածներում կնոջ արտաքին կերպարին բնորոշ չափանիշները և իդեալները տարբեր են եղել: Դրանց ձևավորումը հասարակության տարբեր հարթություններում կախված է եղել գործող հասարակարգի առանձնահատկություններից, կրոնական պատկերացումներից, սոցիալական դերի և դիրքի նկատմամբ հասարակության պահանջներից, ժամանակակից արվեստի յուրահատկություններից և վերջապես անհատի աշխարհայացքի և ընտանեկան դաստիարակության ընթացքում ձևավորված կարծրատիպերից:

Վերջին տասնամյակների ընթացքում արևմուտքում կնոջ կատարյալ կերպարին բնորոշ չափանիշները կայծակնային արագությամբ փոփոխվել են: Դա պայմանավորված է արևմտյան մշակույթում կնոջ սոցիալական դերի և դիրքի նորացմամբ, կանացի ամսագրային մշուկույթի կայացմամբ և նորաձևության ինդուստրիայի թելադրանքով: Որպես այդ փոփոխությունների բնականոն արդյունք՝ եվրոպացի կանանց և աղջիկների զանգվածներում ի հայտ են եկել նախկինում գիտական ասպարեզում քիչ հայտնի սննդային վարքի շեղումներ, որոնք հետագայում տարածվելով՝ համաճարակային բնույթ են ստացել և գրավել ամբողջ արևմուտքը:

Այսպիսով, սննդային վարքի շեղումները մի կողմից անհատի առաջնային խմբում գործող ավանդույթների, մոտեցումների, դիրքորոշումների, ինչպես նաև ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունների արդյունք են, մյուս կողմից՝ դրանց առաջացման գործընթացում արմատային դեր ունի ժամանակակից մասսայական լրատվամիջոցներով, գովազդային և ամսագրային ինդուստրիաների կողմից, ինչպես նաև հեռուստատեսությամբ լայնորեն պրոպագանդվող կանացի կերպարը, որը թելադրում է երեխայի մարմնի բնորոշ չափանիշներ՝ հասուն կնոջ, կամ դեռահասի համար: Այդպիսի չափանիշները միշտ չէ, որ

համապատասխանում են անհատի մարմնակազմին, ինչի արդյունքում դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջկա թերարժեքության զգացումը կապված սեփական արտաքինի հետ սրանում է: Սննդային վարքը սննդի և դրա ընդունման գործընթացի, սեփական մարմնակազմի նկատմամբ վերաբերմունքի և դրա ձևավորմանը ուղղված գործողությունների ամբողջությունն է: Այլ կերպ ասած՝ սննդային վարքը ներառում է սննդի և մարմնակազմի հետ կապված դիրքորոշումները և դրանց նկատմամբ անձի վերաբերմունքը:

Սննդային վարքի շեղումների գաղափարը ծավալուն է, քանի որ այն ներառում է բազմաշերտ երևույթներ՝ սննդակարգի կտրուկ փոփոխություններից մինչև սննդային վարքի նյարդային խանգարումներ: Ատենախոսության շրջանակում քննարկվում են դեռահասության և վաղ պատանեկության փուլերում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի սահմանափակումային, հուզածին և էքստերնալ շեղումները, որոնք սննդային վարքի կտրուկ փոփոխություններ են՝ կախված սոցիալական միջավայրի ազդեցությունից:

Սննդային վարքի սահմանափակումային շեղումը ենթադրում է սննդի ընդունման խիստ սահմանափակում՝ մարմնի քաշի նվազեցման նպատակով, երբ անձը հակված է ինքն իրեն համարելու նորմայից ավելի գեր, կամ ձգտելու ոչ բնական ամսագրային չափորոշիչների:

Սննդային վարքի հուզածին շեղումը ենթադրում է տարաբնույթ սթրեսային պայմաններում սննդի չարաչափական անձի հակվածությունը, ինչպիսիք կարող են լինել ինչպես միևնույն, այնպես էլ մաքսիմալ սթրեսի կամ հուզական լարվածության դրդիչները, կամ իրադրությունները:

Սննդային վարքի էքստերնալ շեղումը ենթադրում է անձի կողմից սննդի ընդունման խիստ սահմանափակում, կամ շատակերության հակվածություն՝ կախված իրավիճակից և սոցիալական միջավայրից:

Ըստ Անդրիենկոյի՝ հաղորդակցումը որպես մասսայական գործընթաց առաջադրել է ընդհանուր տեղեկատվական դաշտի

գաղափարը, որը տեղեկատվության անընդհատ տարածումն է կապի միջոցների օգնությամբ: Այդպիսի միջոցներից է նաև մասսայական լրատվամիջոցներով տարածվող նորածնությանը [11, էջ 126-141]:

Մոդայիկ սոցիալական միտումները նշանակալի են բոլոր տիպի հասարակական հարաբերությունների համար, այդ թվում նաև՝ միջխմբային: Նորածնությանը, անկասկած, սոցիալական կառավարման միջոց է և անկախ դրանից հարատև լինելուց, այն որոշակի դոմինանտ գաղափարների միջոցով ազդում է միջանձնային, կամ անհատի և խմբի միջև հարաբերությունների առանձնահատկությունների վրա:

Ըստ Ա. Վ. Մորոզովի՝ անձի բնավորության առանձնահատկությունների ձևավորումը կախված է այն սոցիալական դասերի և խմբերի առանձնահատկությունների ընդհանրություններից, որոնց նրանք պատկանում են: Իհարկե, ըստ հեղինակի, անձի բնավորության առանձնահատկությունները կախված են այն սոցիալական միջավայրից, որում նա ձևավորվում է, սակայն նրա հիմնական ուղղվածությունը կախված է անձի հարմարվողական, կամ ոչ հարմարվողական կողմնորոշումներից: Եթե անձը հակված է հարմարվողական վարքի, ապա նրա բնավորության առանձնահատկությունները նպաստում են դրան: Հակառակ դեպքում, եթե անձը հակված է ոչ հարմարվողական վարքի, ապա նրա բնավորության առանձնահատկություններն ուղղված են սոցիալական միջավայրի թելադրանքի հաղթահարմանը և դրա փոփոխությանը [36, էջ 86-99]: Միևնույն կերպ անձը հակված է ենթարկվելու մոդայիկ սոցիալական միտումներին, կամ ժխտելու դրանք՝ կախված սեփական բնավորության առանձնահատկություններից:

Ժամանակակից արևմտյան մշակույթին հատուկ «կնոջ կատարյալ կերպարի» գործող կարծրատիպը նույնպես նորածնության արդյունք է:

Նորածնության միտմանը համապատասխանելու համար անհատը կարող է դիմել ծայրահեղ միջոցների: Մասսայական լրատվամիջոցների ազդեցության արդյունքում անձի կողմից նոր վարքաձևերի յուրացման հիմքը Ջ. Կոմստոկը տեսնում է դրանցում

ներկայացվող երևույթների և անձի հուզական վիճակների ընդհանրության մեջ: Որքան ներկայացվող երևույթը մոտ է անձի ապրումների և զգացմունքների ուժորտին, այնքան դրա ազդեցությունն ավելի մեծ է անձի կյանքի և վարքային դրսևորումների վրա [73, էջ 9-22]:

Յետևաբար, որքան դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկն ավելի է տարված սեփական արտաքինի իրական, կամ երևակայական թերությունների մասին ապրումներով, այնքան ավելի հավանական է, որ նա կդիմի սննդային վարքի շեղումների՝ ժամանակակից մշակութային կարծրատիպերին համապատասխանելու համար:

Մյուս կողմից՝ որքան ավելի խորն են դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջկա սոցիալական ադապտացման խնդիրները, այնքան ավելի մեծ է մասսայական լրատվամիջոցների, մասնավորապես հեռուստատեսության դերը նրա առօրյայում և այնքանով ավելի արժեքավոր է դրա միջոցով ստացված տեղեկատվությունը: Այս առնչությամբ Գ. Գերբները, Գ. Գրոսը, Մ. Մորգանը և Ն. Սինյորելին իրենց համատեղ աշխատանքի արդյունքում եզրակացնում են, որ հեռուստատեսության զգալի ազդեցությունը մարդու վրա բացատրվում է դրա կուլտիվացմամբ: Յաղթահարելով պատմական և քաղաքակրթական խոչնդոտները՝ հեռուստատեսությունը դառնում է ոչ միայն տեղեկատվական աղբյուր, այլ և սոցիալականացման միջոց [86, էջ 17-41]:

Յետևաբար նման անհատի համար մասսայական լրատվամիջոցներով արոպագանդվող կնոջ կերպարի չափանիշներին համապատասխանությունը է՛լ ավելի մեծ կարևորություն ունի:

Այսպիսով, մասսայական լրատվամիջոցների ազդեցությունը մեծ է դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջկա աշխարհահայացքի և վերաբերմունքների համակարգի ձևավորման գործընթացում [92, էջ 224-247]: Վերոհիշյալ ազդեցությունների արդյունքում առաջանալով՝ սննդային վարքի շեղումներն ի հայտ են գալիս հասարակության տարբեր սոցիալական խմբերում և դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների շրջանում

համաճարակայնորեն տարածվելու միտում ունեն: Դրանց ազդեցությունը տվյալ տարիքային փուլում գտնվող աղջկա սոցիալական կյանքի ու գործունեության վրա ահռելի է: Մի կողմից սննդային վարքի շեղումների հակվածությունը մեծ է սոցիալական ադապտացման խնդիրներ ունեցող անհատի մոտ, մյուս կողմից դրանց առկայությունը էլ՝ ավելի է խորացնում արդեն առկա հաղորդակցային և շփման խնդիրները՝ վտանգելով անձի զարգացման բնականոն ընթացքը՝ կարևորագույն ճգնաժամային փուլերում:

Դեռահասուն և վաղ պատանեկության շրջանում ներխաձային հարաբերությունների առանձնահատկությունները ենթադրում են ակտիվ ինքնահաստատման գործընթաց, որի գործիքներից է դառնում ժամանակակից սոցիալ - մշակույթային կարծրատիպերին սեփական մարմինը համապատասխանեցնելու անձի ձգտումը: Մյուս կողմից այս փուլերին բնորոշ դիսմորֆիկ երևույթները, դժգոհությունները սեփական մարմնի իրական, կամ երևակայական թերությունների նկատմամբ էլ՝ ավելի են խորացնում այդ ձգտումը: Որպես արդյունք՝ դեռահասուն, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջկա մոտ ի հայտ են գալիս սննդային վարքի շեղումներ, ինչի հանգուցալուծումները կարող են վտանգավոր լինել նրա կյանքի, ինչպես նաև հոգեկան և ֆիզիկական, առողջության համար:

Այսպիսի զարգացումները հանգեցնում են սոցիալական դեստրուկցիայի երևույթների, որոնք մասնավորապես վառ են արտահայտվում հենց դեռահասուն, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող անձանց սոցիալական խմբերում: Հետազոտության օբյեկտն է՝ անձնային բնութագրերի և սոցիալական դիրքորոշումների երևույթի ազդեցությունը դեռահասուն, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի շեղումների առաջացման գործընթացի վրա:

Հետազոտության առարկան է՝ բազային համոզմունքների, իռացիոնալ դիրքորոշումների և անձի ինքնագնահատականի, ինչպես նաև դժվարությունների հաղթահարման մարտավարությունների ընտրության ազդեցությունը սննդային վարքի շեղումների առաջացման



գործընթացի վրա:

**Յետազոտության վարկածն է.**

Դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի շեղումներն առաջանում են կանացի արտաքին կերպարին վերագրվող սոցիալ-մշակութային կարծրատիպերի ու անձի ինքնագնահատման արդյունքի զգալի տարբերության հետևանքով:

**Ենթավարկածներն են.**

• Դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի սահմանափակումային, էքստերնալ և հուզածին շեղումների առաջացման պատճառ է դառնում սեփական Ես-ի արժեքավորության զգացման բացակայությունը:

• Դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի սահմանափակումային, էքստերնալ և հուզածին շեղումների առաջացման հիմքում ընկած են բազային ապահովության զգացման բացակայությունը և աշխարհի նկատմամբ վստահության պակասը:

• Դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի սահմանափակումային, էքստերնալ և հուզածին շեղումները կախված է սեփական անձի և շրջապատի նկատմամբ սպասումների առանձնահատկություններից:

• Սննդային վարքի սահմանափակումային, հուզածին, կամ էքստերնալ շեղում ունեցող, դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ ընդհանուր մտավոր զարգացածության մակարդակը տարբեր է:

Յետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող, սննդային վարքի սահմանափակումային, էքստերնալ, կամ հուզածին շեղում ունեցող աղջիկների անձնային բնութագրերը և սոցիալական դիրքորոշումները, որակներն ու խնդիրները, ինչպես նաև ընդհանուր մտավոր զարգացածության մակարդակը: Յետազոտության վերջնական նպատակն է եղել բացահայտել դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի սահմանափակումային, էքստերնալ, կամ հուզածին շեղման

առաջացմանը նպաստող դիրքորոշումային օրինաչափություններ, ինչը կնպաստի սննդային վարքի շեղումների հետագա զարգացումը կանխարգելելու, կամ հաղթահարելու համար համապատասխան մեթոդների և միջոցների մշակմանը:

**Յետազոտության նպատակներն** իրականացնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ **խնդիրները**.

1. Ուսումնասիրել անձնային և սոցիալական դիրքորոշումների ձևավորման գործընթացի էությունը՝ գիտական մեկնաբանությունների համատեքստում:

2. Ուսումնասիրել գիտական մեկնաբանությունները սննդային վարքի շեղումների առաջացման գործընթացում սոցիալական պերցեպցիայի, ինքնաընկալման և մարմնակազմի նկատմամբ վերաբերմունքի ազդեցությունների վերաբերյալ:

3. Համապատասխան հոգեախտորոշիչ մեթոդների կիրառման միջոցով բացահայտել դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող, սննդային վարքի սահմանափակումային, հուզածին, կամ էքստերնալ շեղում ունեցող աղջիկների ինքնագնահատականի, բազային համոզմունքների, իռացիոնալ դիրքորոշումների համակարգերի, դժվարությունների հաղթահարման մարտավարությունների առանձնահատկությունները, ինչպես նաև ընդհանուր մտավոր զարգացածության մակարդակը:

4. Պարզել, թե որքանով են տվյալ հատկանիշներն ազդում դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սահմանափակումային, հուզածին, կամ էքստերնալ շեղումների առաջացման գործընթացի վրա:

5. Ստացված օրինաչափությունների հիման վրա մշակել գործնական առաջարկներ՝ դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի շեղումների առաջացումը կանխելու, կամ հաղթահարելու նպատակով:

**Յետազոտության ընթացքում կիրառված մեթոդներն են.**

Յետազոտության ընթացքում մեր առջև դրված խնդիրների առավել մանրակրկիտ ուսումնասիրման և արդյունքների համեմատության համար կիրառվել են դիտման, գրույցի և

հոգեբանական թեսթավորումների հոգեախտորոշիչ մեթոդները: Յետագոտու թյուրում կիրառված թեսթերը մշակված են հանրաճանաչ հոգեբանների կողմից: Դրանք են.

- Տ.Վան Շթրեյնի գլխավորությամբ մշակված «Սննդային վարքի հոլլանդական հարցաշար»,

- Ջ. Բաթլերի և Գ.Յայդի կողմից մշակված «ԵՍ իրականի» և «Ես կատարյալի» տարբերությունները բացահայտող թեսթ,

- Ռ. Ջանոֆֆ-Բուլլմանի մշակած բազային համոզմունքների հարցաշար,

- Ա.Էլլիսի կողմից մշակված իռացիոնալ դիրքորոշումների առկայություն և արտահայտվածություն ախտորոշման հարցաշար,

- Ռ. Լազարուսի և Ս.Ֆոլքմանի մշակած դժվարությունների հաղթահարման մարտավարությունների որոշման «Գերակշռող վարքի միջոցներ» թեսթ,

- Ջ.Ռալենի ընդհանուր մտավոր զարգացածություն աստիճանի չափման

«Պրոգրեսիվ մատրիցաների աղյուսակը»:

***Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներն են.***

1. Դեռահասուն թյան, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի սահմանափակումային, հուզածին, կամ էքստերնալ շեղման առաջացումը կանացի արտաքին կերպարի վերաբերյալ սոցիալ-մշակույթային կարծրատիպերի և անձի ինքնագնահատականի ու ինքնավերաբերմունքի տարբերությունների արդյունքն է:

2. Դեռահասուն թյան, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի սահմանափակումային, հուզածին, կամ էքստերնալ շեղումներն առաջանում են բազային ապահովության զգացման բացակայության արդյունքում:

3. Դեռահասուն թյան, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի սահմանափակումային, հուզածին և էքստերնալ շեղումներն ի հայտ են գալիս որպես սեփական Ես-ի արժեքավորության զգացման ցածր մակարդակի հետևանք:

4. Սննդային վարքի սահմանափակումային, հուզածին և էքստերնալ շեղումների առաջացման հիմքում են ընկած սեփական

անձի և շրջապատի նկատմամբ սպասուներին առանձնահատկությունները:

5. Սննդային վարքի սահմանափակումային, հուզածին, կամ էքստերնալ շեղում ունեցող, դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների ընդհանուր մտավոր զարգացածության մակարդակը տարբեր է:

**Չետազոտության տեսական նշանակությունը.** Չետազոտության շրջանակում իրականացվել է անձնային և սոցիալական դիրքորոշումների վերաբերյալ լայնածավալ գրականության ուսումնասիրություն: Պարզաբանվել է, թե ինչպես են վերջիններն ազդում անձի անձնային և սոցիալական ինքնագնահատականի ձևավորման վրա: Քննարկվել են դրանց հնարավոր ազդեցության մեխանիզմները սննդային վարքի շեղումների առաջացման գործընթացի վրա:

**Չետազոտության կիրառական նշանակությունը** կայանում է իրականացված թեսթավորումների արդյունքում ստացված օրինաչափությունների դուրս բերման և համապատասխան հոգեբանական հանձնարարականների մշակման մեջ, որոնց կիրառումը կնպաստի դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող, սննդային վարքի սահմանափակումային, հուզածին, կամ էքստերնալ շեղում ունեցող աղջիկների մոտ առավել կայուն ինքնագնահատականի, բարենպաստ անձնային և սոցիալական ինքնաընկալման ձևավորմանը, ինչպես նաև դժվարությունների հաղթահարման նոր մարտավարությունների մշակմանը և ընդհանուր մտավոր զարգացածության մակարդակի բարձրացմանը:

**Չետազոտության տեսական և մեթոդաբանական** հիմք են ծառայել Ա. Ադլերի, Է. Էրիկսոնի, Կ. Ռոջերսի, Ա. Մալոույի, Է. Ֆրոմմի, Ֆ. Սքինների, Լ. Ֆեստինգերի, Դ. Ուզնաձեյի, Ն. Լանգեյի անձի և դիրքորոշումների մասին տեսությունների միջարք դրույթներ:

Ա. Ադլերի «անհատական հոգեբանություն» տեսության համաձայն՝ մարդու կյանքը ինքնակատարելագործման ակտիվ գործընթաց է և դրա դրդիչ ուժը անձի թերարժեքության զգացումն է: Ադլերն անձը դիտարկում է որպես զուտ սոցիալական

փոխներգործության արդյունք: «Արտաքին աշխարհը ձևավորում է մարդուն, բայց և մարդը ձևավորում է արտաքին աշխարհը», - ասում է Ադլերը [59, էջ 321]:

Տվյալ տեսությանը նաև արտացոլվում է դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սեփական մարմնակազմի նկատմամբ վերաբերմունքի, ինքնաընկալման և կնոջ արտաքին կերպարին բնորոշ չափորոշիչների տարբերության արդյունքում ի հայտ եկող սննդային վարքի ծայրահեղ փոփոխություններում, որոնք սերում են սեփական արտաքին թերաթեթության զգացումից և պայմանավորվում սոցիալական փոխներգործության արդյունքում ստացված կանացի գեղեցկության մասին պատկերացումներով:

Է. Երիկսոնի անձի զարգացման մասին տեսության համաձայն, անձի ինքնագնահատականը կախված է սեփական կյանքի կառավարման զգացումից: Արտաքին ազդեցությունների ներքո այդ զգացման թուլացումը՝ ինքնակառավարման զգացողությունը և ինքնագնահատականը հավասարակշռելու նպատակով, հանգեցնում է ինքնասահմանափակման հակվածության [76, էջ 286-292]:

Երիկսոնյան տեսության արմատները դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի շեղումների առաջացման գործընթացում գտնում ենք կնոջ արտաքին կերպարի նկատմամբ գոյություն ունեցող սոցիալական կարծրատիպերի և սեփական մարմնակազմի նկատմամբ ինքնաքննադատական վերաբերմունքի արդյունքում առաջացող սեփական կյանքի կառավարման զգացողության թուլացման երևույթում: Այսպիսի հանգամանքներում անձի մոտի հայտե գալիս սեփական կյանքի կառավարման զգացողությունը վերականգնելու և ինքնագնահատականը բարձրացնելու բնական պահանջ և նա՝ ձգտելով համապատասխանել սոցիալ-մշակույթային չափանիշներին, խիստ սահմանափակում է սննդի ընդունումը, ինչի արդյունքում առաջանում է սննդային վարքի սահմանափակումային շեղում:

Ա. Մասլոույի անձի հումանիստական տեսության համաձայն՝ անձը ինքն իր կենսափորձի արդյունքն է և դրա հիմքում է ինքնիրացման միտումը [95, էջ 45]: Այսպես սննդային վարքի

շեղու մների առաջացումը դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ հանդիսանում է կենսափորձի արդյունքում կնոջ արտաքին կերպարի վերաբերյալ ձևավորված պատկերացումների, սննդային վարքի վերաբերյալ յուրացված դիրքորոշումների և սեփական մարմնակազմի նկատմամբ բացասական վերաբերմունքի արդյունքում առաջացած ինքնիրացման պահանջի արդյունք:

Դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի շեղումների առաջացման բացատրություններից ենք գտնում Է. Ֆրոմմի անձի հումանիստական տեսության դրույթներում:

Ըստ Է.Ֆրոմմի անհատը սոցիալական ազդեցությունների ներքո դադարում է լինել այնպիսին ինչպիսին, որ նա կա: Նա դառնում է այնպիսի անհատ ինչպիսին, որ պահանջում է մշակութային մոդելը: Տվյալ մշակույթին հատուկ սոցիալական սպասումներին համապատասխանելու համար նա փոփոխությունների է ենթարկում սեփական անձը [83, էջ 208]:

Այսպիսով սննդային վարքի շեղումների առաջացման գործընթացը կանացի արտաքինին վերագրվող սոցիալ-մշակույթային չափանիշների արդյունքում առաջացող երևույթ է: Բիհեյվիորիստական ուղղության ներկայացուցիչ Ֆ.Սքինների անձի տեսության համաձայն, անհատի վարքի և գործունեության հիմքում միանշանակ ընկած է հասարակության ազդեցությունը [106, էջ 12-13]:

Այսպես, մի կողմից սննդային վարքի շեղումների ձևավորումը հանդիսանում է կանացի կատարյալ արտաքին կերպարին վերագրվող սոցիալ-մշակույթային կարծրատիպերի, մյուս կողմից սոցիալական խմբերում գործող սննդային վարքի մոդելների և ավանդույթների ազդեցության արդյունք:

Դիտարկելով սննդային վարքի շեղումների առաջացման երևույթը սոցիալական դիրքորոշումների ազդեցության տեսանկյունից՝ դրա հիմնավորումը գտնում ենք դիրքորոշումների ձևավորման մասին Դ. Ուզնաձեյի տեսության դրույթներում: Վերջինը անձի դիրքորոշումը բնութագրում է

որպես մարդու կյանքում համընդհանուր երևույթ, որը մարդու կենսագործունեության մեջ կենտրոնական դեր ունի և ընկած է մարդու ներքին ու արտաքին ամբողջ ակտիվության հիմքում: Ցանկացած վարքային ակտից առաջ սուբյեկտի մոտի հայտ է գալիս յուրահատուկ դինամիկ վիճակ՝ դիրքորոշում, որն ուղղորդում է մարդու հակազդումները [40, էջ 35-36]: Միևնույն ժամանակ, ըստ հեղինակի, որոշակի խմբում որոշակի դեր ստանձնելով՝ մարդը սովորում է այդ դերին բնորոշ վարքածներին, ինչի արդյունքում յուրացվում են որոշակի վարքային դիրքորոշումներ: Այսպես, ձգտելով համապատասխանել կնոջ արտաքին կերպարին վերագրվող սոցիալ-մշակութային կարծրատիպերին, կամ սոցիալական խմբում գործող սննդային վարքի դիրքորոշումներին՝ անձը կտրուկ փոփոխության է ենթարկում սեփական սննդային վարքը, ինչը հանգեցնում է նաև սոցիալական խմբում անձի դերային փոփոխությունների:

Այսպես, դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ բնականոն ֆիզիոլոգիական փոփոխությունների պարագայում առկա է սննդի գերպահանջ, սակայն անհատը՝ դիմելով սննդային վարքի կտրուկ փոփոխությունների, հիմնականում անտեսում է այդ պահանջը՝ գերադասելով, որպես օրինակ, սննդի ընդունման խիստ սահմանափակման միջոցով սեփական մարմնի պատկերը համապատասխանեցնել կանացի արտաքին կերպարին և սննդային վարքի առանձնահատկություններին թելադրվող սոցիալ-մշակութային պահանջներին: Յետաբերքի է Դ. Ռոբինսոնի հայեցակետը անձի վարքի և համոզմունքների կապի վերաբերյալ: Այդ կապը նատեսում է որպես հաստատուն դրական կամ բացասական կարծիքի արդյունքում ձևավորված դիրքորոշում: Ռոբինսոնը համարում է, որ դիրքորոշումների և դրանք ձևավորող համոզմունքների առաջացման գործընթացի վրամեծ ազդեցություն ունեն կարծրատիպերը [45, էջ 167-184]: Այսպես սննդային վարքի շեղումների առաջացման պատճառ են դառնում մի կողմից կնոջ արտաքին կերպարի, մյուս կողմից տվյալ անհատների սոցիալական խմբերում գործող սննդային վարքի մոդելների վերաբերյալ

սոցիալ -մշակութային կարծրատիպերը:

Լ.Ֆեստինգերի «կոգնիտիվ դիսոնանսի տեսություն» համաձայն, մարդու դիրքորոշումներին չհամապատասխանող վարքածնը ստիպում է փոփոխություն ենթարկել դրանք, որպեսզի անձն ազատվի բացասական զգացողություններից [36, էջ 136]: Այսպիսով, եթե դեռահասություն, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկն ունի ինքնաքննադատման բարձր հակվածություն, բավարարված չէ սեփական մարմնակազմով, հակված է դիսմորֆիկ երևույթների, ապա այդ ամենի արդյունքում նրա մոտ առաջացող խիստ բացասական զգացումներից նա ձգտում է ազատվել սննդային վարքի խիստ փոփոխությունների միջոցով, ինչը հանգեցնում է արտաքին կերպարի փոփոխությանը, թուլացնում է սեփական մարմնի նկատմամբ տիպիկական զգացումը և թույլ է տալիս բարձրացնել ինքնագնահատականն ու ինքնարևակալման մակարդակը:

Ըստ Ն. Լանգեի հայեցակետի, ուշադրության և դիրքորոշման երևույթները սերտորեն կապված են միմյանց հետ և անձն իր ուշադրությունը հակված է սևեռելու այն վարքային դրսևորումների նկատմամբ, որոնք իր սեփական դիրքորոշումների

արդյունք են հանդիսանում [26, էջ 137-138]: Այսպես, կանացի կերպարին վերագրվող սոցիալ - մշակութային կարծրատիպերի և անձի սոցիալական խմբում գործող սննդային վարքի մոդելների արդյունքում ձևավորված դիրքորոշումները որոշիչ են դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի շեղումների առաջացման գործում: Վերջինների ուշադրությունը սևեռվում է սեփական մարմնի պատկերի և դրա փոփոխությանն ուղղված սննդային վարքի դրսևորումների վրա, ինչի արդյունքում սննդային վարքի փոփոխությունները վերածվում են շեղումների:

**Յետազոտությունն իրականացվել է 2009-2014 թվականների** ընթացքում, որի շրջանակում կատարվել են տեսական վերլուծություններ և գիտափորձեր: Կատարված աշխատանքների արդյունքներն ամփոփվել են գիտական հոդվածներում: Յետազոտության գիտական նորույթը. Ատենախոսության շրջանակում կատարված ուսումնասիրությունները թույլ են տվել



որոշակիորեն լուսաբանել այնպիսի երևույթներ, որպիսիք են՝ սննդային վարքի սահմանափակումային, հուզածին, կամ էքստերնալ շեղում ունեցող, դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ առկա դժվարությունների հաղթահարման մարտավարությունների առանձնահատկությունները, իռացիոնալ դիրքորոշումներն ու դրանց ազդեցությունը անձնային և սոցիալական ինքնագնահատականի և, որպես արդյունք, նաև սննդային վարքի շեղումների ձևավորման գործընթացի վրա: Որոշակիորեն պարզաբանվել է նաև սննդային վարքի սահմանափակումային, հուզածին, կամ էքստերնալ շեղում ունեցող, դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների ընդհանուր մտավոր զարգացածության օրինաչափային առանձնահատկությունների խնդիրը: Կատարված հետազոտությունների արդյունքների օրինաչափությունները հիմնավորում են հիմնահարցի հետագա բազմակողմանի և առավել խորը ուսումնասիրության անհրաժեշտությունը:

**Հետազոտության արդյունքների փորձաքննությունը և տվյալների հուսալիությունը.** Աշխատանքի փորձարարական փուլի արդյունքները քննարկվել են «Հայ պետժամանակակից անասնաբույժական» ՀԿ-ում կազմակերպված գիտական սեմինարների ընթացքում և մի շարք գիտական հոդվածներում: Ստացված արդյունքների հավաստիությունը պայմանավորված է կիրառված մեթոդների հուսալիության և վալիդայնության բարձր աստիճանով, ինչպես նաև համապատասխան մեթոդական ապարատով: Աշխատանքի մեթոդական ապարատը կազմված է դիտման, զրույցի և հոգեբանական թեսթավորումների մեթոդներից: Դիտման մեթոդի կիրառման միջոցով որոշակի տեղեկատվություն է ստացվել սոցիալական խմբերում հետազոտվողների վարքային ինքնադրսևորման մոդելների վերաբերյալ: Չրույցի մեթոդի կիրառումը նպատակ է հետապնդել հետազոտվողների սննդային վարքի յուրահատկությունների, դրանց հնարավոր շեղման, մարմնակազմի նկատմամբ վերաբերմունքի և թերարժեքության զգացողության մակարդակի, տվյալ երևույթների առաջացման

սոցիալական բնույթի պատճառների, ընտանեկան և այլ սոցիալական խմբերում հարաբերությունների աանձնահատկությունների, անձնային և սոցիալական ինքնաընկալման, անձնային հատկանիշների վերաբերյալ համակարգված տեղեկատվություն ստանալու: Իրականացված հոգեբանական թեսթավորումներում կիրառվել են սննդային վարքի աանձնահատկությունների, անձնային հատկանիշների և ընդհանուր մտավոր զարգացածության մակարդակի բացահայտման թեսթեր: Դրանց կիրառման արդյունքում անհրաժեշտ տեղեկատվություն է ստացվել հետազոտության մասնակիցների մոտ սննդային վարքի սահմանափակումային, հուզածին, կամ էքստերնալ շեղման առկայության մասին, տվյալներ են հավաքագրվել նրանց անձնային հատկանիշների, ինքնաընկալման և ընդհանուր մտավոր զարգացածության մակարդակի վերաբերյալ:

Ստացված տվյալների համեմատական վերլուծության արդյունքում պարզ է դարձել, թե ինչպես են նշված գործոններն ազդում դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի շեղումների առաջացման գործընթացի վրա: Հետազոտության արդյունքների քանակական արժանահավատության ապահովման համար հիմք է ընդունվել Կ.Ա.Օտդելևոյի մշակած հետազոտության ճշգրտության չափման աղյուսակը:

**Հիմնախնդրի մշակվածության աստիճանը.** Սննդային վարքի շեղումներն ուսումնասիրվել են հոգեբանական գիտությունների տարբեր ճյուղերի առաջատար ներկայացուցիչների կողմից: Խնդրին տրվել են բազմաթիվ անվանումներ և առաջարկվել են դրանց առաջացման ու լուծման վերաբերյալ տարբեր հայեցակետեր: Այնուամենայնիվ, խնդրի ծավալունությունը, դրա առաջացման և զարգացման բազմաշերտ պատճառահետևանքային կապերի ինքնությունը թելադրում է դրա առավել մանրակրկիտ ուսումնասիրության անհրաժեշտությունը տարաբնույթ տեսանկյուններից:

Մասնավորապես արդիական է սննդային վարքի շեղումների առաջացման և զարգացման նկատմամբ առեղծվածի ազդեցություն

ունեցող սոցիալական դիրքորոշումների և կարծրատիպերի ազդեցություները անձի անձնային հատկանիշների, ինքնագնահատականի, ինքնավերաբերմունքի տեսանկյունից: Տվյալ երևույթների մասնակի ուսումնասիրություններ կատարվել են միջաբնականառու հոգեբանների կողմից: Սոցիալական դիրքորոշումների, անձնային հատկանիշների, ինքնագնահատականի և սննդային վարքի խնդիրներին անդրադարձ են կատարել հոգեբաններ՝ Ի. Մալկինա-Պիխը, Ա. Դեվյատկինը, Ա. Կոլիշկոն, Ե. Սոկոլովան, Գ. Օլպորտը, Ա. Ադլերը, Ս. Աշը Լ. Ավալոսը, Դ. Բեմը, Թ. Քեշը, Գ. Քոմսթոքը, և այլոք: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Ս. Ֆիշերի մարմնի պատկերի և ինքնագնահատականի վերաբերյալ հետազոտությունները, Գ. Գերբների, Լ. Գրոսսի, Մ. Մորգանի և Ն.Սինյորելլիի համատեղ հետազոտությունը անձի վարքի և դիրքորոշումների նկատմամբ մասսայական լրատվամիջոցների ազդեցության վերաբերյալ, Լ. Գրոսսի, Մ. Լեվինի և Ս. Մուրենի սոցիալական կարծրատիպերի և անձի ինքնագնահատականի կապի վերաբերյալ հետազոտությունը: Այնուամենայնիվ, սննդային վարքի շեղումների խնդիրը շատ ծավալուն է և առայժմ բավարար չափով ուսումնասիրված չեն դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի սահմանափակումային, հուզածին և էքստրենալ շեղումների առաջացման անձնային և սոցիալական բնույթի դիրքորոշումային պատճառներն ու գործոնները: Ատենախոսության շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները հիմք են հանդիսանում առաջարկված սննդային վարքի շեղումների առաջացման պատճառահետևանքային ակունքների խնդրի նորովի մեկնաբանության համար:

**Ատենախոսության կառուցվածքը.** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, ընդհանուր եզրակացություններից, գործնական առաջարկներից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ներկայացված են 11 աղյուսակ, 2 նկար: Ատենախոսությունը շարադրված է 156 տպագիր էջերի վրա, առանց հավելվածի՝ 132 էջ: Օգտագործվել է 115 աղբյուր՝ հայերեն և օտար լեզուներով:



**ԳԼՈՒԽ 1. ԱՆՁԼԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ ԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒ ՄԼԵՐԻ  
ՏԵՍՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊՍՏՄԱՅՈՒԹԵԲԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ**

**1.1 Դիրքորոշումների եռլայնությունը, գործառույթները և դրանց  
հնարավոր ազդեցությունը սննդային վարքի շեղումների  
առաջացման գործընթացի վրա**

Սննդային վարքի շեղումներն՝ իրենց տարբեր դրսևորումներով, այսօր ամբողջ աշխարհում բավականին տարածված խնդիր են: Դրանց առաջացման նախապայմանները հետազոտվել են տարբեր հոգեբանների կողմից և առ այսօր բնագավառի մասնագետների համար հետաքրքրության առարկա են հանդիսանում: Սննդային վարքի շեղումներ առաջացնող դիրքորոշումային դետերմինանտները պարզելու համար անհրաժեշտ է նախևառաջ պատմական և կոնցեպտուալ հարթություններում պարզաբանել, թե ինչ ասել է «անձնային դիրքորոշում» և «սոցիալական դիրքորոշում» տերմինները, ինչպիսի երևույթներ են դրանք բնութագրում:

և ինչ մեխանիզմներով են ձևավորվում ու ազդում անձի վարքային դրսևորումների վրա: Հայտնի է, որ դիրքորոշման երևույթի ուսումնասիրությունը սկսվել է գերմանացի հոգեբան Լյուդվիգ Լանգեի (1888) աշխատանքներից, որտեղ նա փորձել է հետազոտել սենսորային և մոտորային հակազդումների ժամանակային տարբերությունները և դրանց կախվածությունը հետազոտվողի դիրքորոշումից: Լանգեն դիրքորոշումը դիտարկել է որպես անցյալի փորձի վրա հիմնված որոշակի հակազդում իրականացնելու անձի պատրաստություն: Ավելի ուշ՝ 1894 թվականին, ականավոր ֆրանսիացի հոգեբան, սոցիոլոգ և բժիշկ Ալֆրեդ Բինեն իր ուսումնասիրություններում բացահայտել է կրկնվող իրադրություններում անձի վարքի օրինաչափային դրսևորումները, որոնք անվանել է անձի հակազդման պատրաստություն: Ընդ որում, մտավոր պատրաստության վիճակը նաև ույնացրել է ֆիզիկական պատրաստության վիճակի հետ: Ասել է, թե

դիրքորոշման երևույթի բացահայտումը պատկանում է տասնիններորդներորդ դարի գիտնականներին, թեև նրանց անունները պատմությանը քիչ հայտնի են:

Չաջորդիվ, ընդհանուր հոգեբանության ասպարեզում դիրքորոշման երևույթը դարձել է մտածողության գործընթացների ուսումնասիրմանն ուղղված վյուրցբուրգյան դարոցի հետազոտական խմբի ուսումնասիրությանն ենթի հիմնական օբյեկտը: Այստեղ բազմաթիվ ուսումնասիրությանն ենթարդյունքում առաջատար մասնագետները՝ Օ. Կյուլպեն, Ն. Ախը և Կ. Բյուլերը կենտրոնացել են դիրքորոշման, նրանց կարծիքով, երկու հիմնական հատկանիշների՝ դրա ակտիվության և ինտենսիվության ուսումնասիրման վրա: Վյուրցբուրգյան դարոցի ներկայացուցիչները դիրքորոշումը դիտարկում են և՛ որպես գիտակցված և՛ չգիտակցված երևույթ:

Դիրքորոշումների առաջին իսկ ուսումնասիրությանն ենթարդյունքում երևույթին վերագրեցին մի շարք առանձնահատկություններ: Նախ դիրքորոշման հասկացությունը տվյալ ժամանակահատվածում արդեն սերտորեն կապվեց ակտիվության հասկացության հետ: Վերջապես, դիրքորոշումն առաջին անգամ դիտարկվեց որպես անձի հոգեկան գործընթացների բնույթը որոշող գործոն:

Դիրքորոշման հոգեբանությանն ուսումնասիրող հետազոտությանն ենթարկվեցին իրականացվել են կոգնիտիվ և բիհեյվիորիստական ուղղությանն ենթարկվող շրջանակներում:

Դիրքորոշման մասին հետազոտությանն ենթարկվեցին, հետևաբար, դրա սահմանումն իր ոճային առումով միանշանակ չէ, սակայն կոնցեպտուալ առումով միևնույնն է: Դ. Ռոբինսոնն՝ իր «101 հիմնական գաղափար» գրքում դիրքորոշումը սահմանել է որպես որևէ անձի, առարկայի, երևույթի մասին անձի հաստատուն դրական կամ բացասական կարծիքը և տվյալ կարծիքին համապատասխան վարքած և դրսևորելու նրա ձգտումը: Այսպես, կանացի արտաքին կերպարին թելադրվող չափանիշների և կարծրատիպերի սոցիալ-մշակութային քարոզի արդյունքում, դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջկամոտ ձևավորվում է դրանց մասին որոշակի հաստատուն կարծիք և այդ չափանիշներին

համապատասխանելու ձգտումը կարող է հանգեցնել սննդային վարքի կտրուկ փոփոխության և ներքին շեղումների առաջացմանը:

Տարրանշատելով դիրքորոշումը երեք գործոնների՝ որոնք են համոզմունքը, գնահատումը և որոշակի վարքային մոդելի դրսևորումը, Ռոբինսոնը կարծում է, որ միշտ է, որ մարդու վարքը համապատասխանում է նրա համոզմունքներին: Նա համոզված է, որ վարքի և համոզմունքների միջև կապը կախված է մի շարք գործոններից: Այստեղ որպես կարևորագույն գործոն նատեսնում է համոզմունքների ձևավորման պայմանները: Քանի որ սեփական փորձի վրա հիմնված համոզմունքները կողմնակիորեն ձեռք բերվածներից ավելի ազդեցիկ են, հետևաբար այդպիսի համոզմունքների և վարքի համապատասխանությունն առավել հավանական է: Ըստ նրա, անձի համոզմունքների ձևավորման, ինչպես նաև դրանց համապատասխան վարքածների դրսևորման համար չափազանց կարևոր է նրա համար հեղինակություն ունեցող անձանց կարծիքը: Այսպես, դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջկա ընտանիքում և առաջնային սոցիալական խմբերում գործող սննդային վարքի և արտաքին կերպարի մասին համոզմունքները զգալիորեն ազդում են նրա մոտ սննդային վարքի առանձնահատկությունների ձևավորման վրա: Բացի այդ, վարքի դրսևորման վրա մեծագույն ազդեցություն ունի անձի կողմից ենթադրվող արդյունքի գնահատումը: Եթե անձը՝ գնահատելով որոշակի վարքի դրսևորման ենթադրվող արդյունքը, գալիս է այն եզրակացության, որ տվյալ վարքի դրսևորումը չի բխում իր շահերից, ամենայն հավանականությամբ տվյալ իրադրությունում նրա վարքը չի համապատասխանի այդպիսի համոզմունքին: Հակառակ դեպքում, երբ անձը որոշակի վարքի ենթադրյալ արդյունքը գնահատում է որպես իր շահերից բխող, սակայն իր համոզմունքներին հակառակ, մեծ է հավանականությունը, որ նա այնուամենայնիվ կդրսևորի նման վարքած [45, էջ 183-184]:

Սննդային վարքի շեղումների առաջացման գործում սննդակարգի կտրուկ փոփոխության արդյունքի գնահատումն իրականացվում է սոցիալ-մշակութային կարծրատիպերին համապատասխանելու շահադիտական տեսանկյունից: Եթե այն անհատի

կողմից գնահատվում է որպես շահավետ, ապա նրա մոտ ձևավորվում է նման վարքի դրսևորման դիրքորոշում:

Դ.Ռոբինսոնը համարում է, որ դիրքորոշումների և դրանք ձևավորող համոզմունքների առաջացման գործընթացի վրա որոշակի ազդեցություն ունեն նաև կարծրատիպերը: Կարծրատիպերի գոյությունը արագացնում է ադապտացիոն երևույթները նոր իրադրությունում, քանի որ անձը՝ հենվելով որոշակի կարծրատիպերի վրա, գնահատում է իրեն շրջապատող անձանց և, փորձելով կանխատեսել նրանց վարքաձևը՝ դրսևորում է համապատասխան վարք [45, էջ 167]:

Այս տեսակետը հաստատում է այն ենթադրությունը, որ դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջկա սննդային վարքի առանձնահատկությունները, դրանց կտրուկ փոփոխություններն ու շեղումները սոցիալական միջավայրին ադապտացվելու, սոցիալական խմբում գործող սննդային վարքի և կանացի արտաքին կերպարի վերաբերյալ գործող կարծրատիպերին համապատասխանելու միջոց են:

Դիրքորոշումներին վերաբերող ուսումնասիրությունների թվում հատուկ տեղ ունի վրաց հոգեբան Ուզնաձեի տեսակետների համակարգը, որը հայտնի է «դիրքորոշման տեսություն» անվամբ: Ուզնաձեյի տեսությունը նշանակալի դեր ունի մարդու հոգեկանում անգիտակցական երևույթների ուսումնասիրության ասպարեզում, որի հիմնական կոնցեպցիան դիրքորոշման հասկացությունն է: Ուզնաձեն իր տեսության մեջ դիրքորոշման երևույթը անմիջականորեն կապում է մարդու հոգեկանում անգիտակցական գործընթացների ուսումնասիրության հետ:

Ըստ Ուզնաձեի՝ դիրքորոշման ուղղվածությունը, դրա նպատակայնությունը նախևառաջ հոգեկան հատկանիշ է, որն առավել վառ կերպով արտահայտվում է ասոցիատիվ մտածողության երևույթում [19, էջ 13]:

Չնայած Ուզնաձեի դպրոցը դիրքորոշման ուսումնասիրության ասպարեզում համարվում է դասական, այնուամենայնիվ, ինչպես պարզեցինք, դիրքորոշման երևույթի մասին մի շարք հոգեբաններ խոսել են շատ ավելի վաղ: Սակայն Ուզնաձեի տեսության մեջ



դիրքորոշման երևույթը իրենից ներկայացնում է ոչ թե ընկալման և գործունեության ընթացքում առաջացող հատուկ երևույթ, այլ համահոգեբանական երևույթ: Դիրքորոշումն ընկալվում է որպես մարդու կյանքում առկա համընդհանուր երևույթ, որը մարդու կենսագործունեության մեջ կենտրոնական դեր ունի: Ուզնաձեյի առաջադրած դիրքորոշման կոնցեպցիան դառնում է մարդու վարքի և գործունեության բնույթի բացատրության հիմնական երևույթ: Դիտարկելով դիրքորոշման երևույթը, որպես անգիտակցական ակտիվության դրսևորում՝ Ուզնաձեն ասում է, որ դիրքորոշումը սուբյեկտի գիտակցության մեջ չի արտահայտվում որպես որոշակի առանձին ապրում և գիտակցական ակտ չի հանդիսանում:

Օ. Ն. Պերվուշինան՝ զարգացնելով Ուզնաձեյի գաղափարները, ասում է. «Մարդու ենթագիտակցականի գործունեության ասպարեզն այնքան ընդարձակ է, որ այն ընկած է մարդու ամբողջ ներքին և արտաքին ակտիվության հիմքում: Ցանկացած վարքային ակտից առաջ սուբյեկտի մոտի հայտ է գալիս յուրահատուկ դինամիկ վիճակ՝ դիրքորոշում, որը մնալով չգիտակցված՝ նպատակայնորեն, տվյալ իրադրության բովանդակությանը համապատասխան, ուղղորդում է մարդու հակազդումները: Այսպիսով, անգիտակցականը, որն ընկած է հոգեկան կյանքի և գիտակցական գործընթացների հիմքում, գոյություն ունի և ուղղորդում է մարդու կենսագործունեությունը դիրքորոշումների ձևով» [40, էջ 35-41]: Ուզնաձեյի կարծիքով՝ հոգեբանության կենտրոնական կետը ոչ թե հոգեկան գործընթացների համակարգն է, այլ անձը՝ որպես այդ համակարգի կրող: Նա մարդու կենսագործունեության ուսումնասիրության հիմքում տեսնում է անձի պահանջմունքների ուսումնասիրությունը: Պահանջմունքի առկայության և դրա բավարարման հնարավորության պարագայում սուբյեկտի մոտի հայտ է գալիս տվյալ պահանջմունքի բավարարման համար որոշակի գործողություններ իրականացնելու պատրաստություն: Հենց այս երևույթը կարելի է բնութագրել որպես դիրքորոշում: Դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջկա մոտ՝ սննդային վարքի շեղումների առաջացման պարագայում, առաջանում է հոգեբանական և

Ֆիզիոլոգիական պահանջմունքների բախում: Մի կողմից նա ունի սննդի ընդունման որոշակի ֆիզիոլոգիական պահանջմունք, մյուս կողմից, ինչպես հայտնի է՝ սոցիալական խմբին պատկանելու, դրա կողմից ընդունված լինելու հոգեբանական պահանջմունք: Եթե վերջինիս սոցիալական խմբում գործող սննդային վարքի և կանացի արտաքին պատկերի մասին կարծրատիպերը հակասում են նրա ֆիզիոլոգիական կազմվածքին, վերջինը դիմում է խիստ սահմանափակումային սննդային վարքի շեղման՝ անտեսելով սննդի ընդունման սեփական պահանջմունքն ու սովորությունները իշահ սոցիալական կարծրատիպերին համապատասխանելու ձգտմանը: Մյուս կողմից՝ եթե տվյալ անձի ընտանիքում և այն սոցիալական խմբերում, որոնց նա պատկանում է գործում են սննդային վարքի և կանացի արտաքին կերպարի վերաբերյալ տարբեր կարծրատիպեր, ապա նրա սննդային վարքը՝ կախված անձնային հատկանիշներից, կարող է կրել էքստերնալ, կամ հուզածին շեղման բնույթ: Ընդ որում, առաջինի դեպքում անձը հակված է հարմարվողական սննդային վարք դրսևորել՝ կախված այն միջավայրից, որում նա գտնվում է: Երկրորդ դեպքում՝ անձը որպես առաջացած ներքին բախումը հաղթահարելու միջոց, ընտրում է հուզածին տիպի սննդային վարքի շեղումը, ինչը ենթադրում է սթրեսային պայմաններում սննդային վարքի կտրուկ փոփոխություն: Դիրքորոշումը որոշիչ գործոն է արտաքին ազդեցությունների և մարդու հոգեկան գործունեության միջև կապի համար: Ուզնաձեն իրականացրել է մի շարք հետազոտություններ դիրքորոշումների, դրանց ձևավորման և անձի վարքային դրսևորումների ասպարեզում, ինչի արդյունքում նա դիրքորոշումը բնութագրել է որպես սուբյեկտի ամբողջական չգիտակցված վիճակ, որն արտահայտվում է որոշակի ուղղվածության գործողությունն իրականացնելու նրա պատրաստությամբ:

Բացի ֆիկսված դիրքորոշման եզրույթից, Ուզնաձեն առաջադրել է նաև դիֆուզիոն դիրքորոշման և այսպես կոչված նախնական կամ առաջնային դիրքորոշման տերմինները: Ըստ նրա տեսության, նախնական դիրքորոշումը ձևավորվում է իրացված պահանջմունքի և դրա բավարարումը հնարավոր դարձնող իրադրության հատման

կետում: Մինչ դեռ դիֆուզիոն դիրքորոշում կոչվում է սուբյեկտի համար դեռևս անորոշ դիրքորոշումը, որն ի հայտ է գալիս, երբ սուբյեկտն առաջին անգամ է հանդիպում դիրքորոշումը ձևավորող օբյեկտին: Դիֆուզիոն դիրքորոշումը առավել հաստատուն է դառնում տվյալ օբյեկտի հետ հետագա հանդիպումների արդյունքում [47, էջ 239-240]:

Իր հետազոտության ներքում Ուզնաձեն շեշտը դրել է նաև անձի հակազդելու, կամ գործելու պատրաստակամության երևույթի ուսումնասիրության վրա: Նա հանգել է այն եզրակացության, որ հակազդման արագությանը և հստակությանը կախված են որոշակի գործողության ներքին իրականացման համար անհրաժեշտ ունակության հից: Ուզնաձեն հոգեկանի անգիտակցական դրսևորումների խնդիրներն ուսումնասիրել է դիրքորոշումային օրինաչափության ներքին կոնտեքստում: Այս ավանդույթը թելադրում է ուսումնասիրել անձի ակտիվության դրսևորումներում անգիտակցական մղումների դերն ու նշանակությունը, որն ամենից առաջ բացատրվում է դիրքորոշումների երևույթով: Այսպես

դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջկամոտսնոյային վարքի սահմանափակումային, հուզածին և էքստերնալ շեղումների առաջացումը կնոջ արտաքին կերպարին վերագրվող չափանիշների ներքո ի հայտ եկած սոցիալական դիրքորոշումների նկատմամբ հակազդման տեսակ է, որի առանձնահատկությունները կախված են անհատի անձնային հատկանիշներից: Դիրքորոշման երևույթը, ինչպես պարզեցինք,

իրենից ներկայացնում է որևէ հակազդում, կամ գործողություն իրականացնելու համար անձի պատրաստությունը, որն էլ որոշում է անձի վարքի բնույթը և նրա հոգեկան գործընթացների էությունը: Իհարկե, չենք կարող անտեսել այն փաստը, որ դիրքորոշումներն առաջանում են արտաքին միջավայրի ազդեցությունների և անձի հակվածությունների համադրությունից, ինչի շնորհիվ էլ մարդու վարքը նպատակայնորեն ընթացող բացատրելի երևույթ է:

Այսպիսով, դիրքորոշումային վարքը իրականացվում է մարդու պահանջմունքներին և արտաքին միջավայրի պահանջներին

համապատասխան :

Դիրքորոշման երևույթի ուսումնասիրությանը պարտադրում է դրա երկու հիմնական տարատեսակների՝ ակտուալ-իրադրային և դիսպոզիցիոն-ամրապնդված դիրքորոշումների առանձին ուսումնասիրություն :

Ակտուալ-իրադրային դիրքորոշումը ենթադրում է որևէ կոնկրետ վարքաձև, կամ հակազդում դրսևորելու անձի պատրաստության հատուկ հոգեկան վիճակ, ընդ որում արտաքին միջավայրի ազդեցությունները և անձի ներքին պահանջմունքները սելեկտիվորեն ընտրված և արտահայտված են :

Այսպես, դիրքորոշումը որևէ իրադրության նկատմամբ անձի ներքին նախնական հակազդումն է, որում էսկիզային կերպով ներկայացված է նրա հետագա վարքը և որի հիման վրա զարգանում է նրա հետագա ակտիվությունը : Անձի վարքը նշանակալիորեն որոշվում է դիրքորոշման կառուցվածքի և բովանդակության առանձնահատկություններով : Այսպիսով, ակտուալ-իրադրային տիպի դիրքորոշման ուսումնասիրությունը հնարավոր է միայն մարդու սոցիալական ակտիվության և դրդապատճառային գործընթացների բացահայտման արդյունքում :

Ինչը վերաբերվում է դիսպոզիցիոն, կամ ֆիկսված դիրքորոշումներին, ապա դրանք ձեռքբերովի, անձի կողմից յուրացված երևույթներ են, որոնք անձի հոգեկան հնարավորությունների համակարգի մի գործիք են հանդիսանում : Այսպիսի դիրքորոշումների պահպանումն ու ամրապնդումն իրականացվում է ընտրողականորեն՝ որոշակի օրինաչափությունների համաձայն : Դիսպոզիցիոն դիրքորոշումների համակարգն առավելապես վերաբերվում է անձի արժեքային համակարգին : Վերը նշվածի արդյունքում դիսպոզիցիոն դիրքորոշումը դիտարկվում է ոչ միայն որպես կախյալ երևույթ՝ ընկած անձի վարքի և դրա դրդիչների միջև, այլև որպես անկախ երևույթ, որն ընդհանուր առմամբ որոշում է անձի վարքաձևը տարբեր հանգամանքներում : Այս դիրքորոշումների համակարգի իմացությունը թույլ է տալիս կանխատեսել անձի վարքային հակազդումները այս կամ այն ապագա իրադրությունում : Այսպես

դեռահասու թյան, կամ վաղ պատանեկու թյան փուլում գտնվող աղջկա մոտ սննդային վարքի շեղումների առաջացմանը նպաստող դիրքորոշումների ձևավորման հակվածությունը կախված է նրա արժեքային համակարգում կանացի արտաքին պատկերին վերագրվող սոցիալ-մշակութային կարծրատիպերի նշանակությունից:

Քանի որ մարդն օժտված է տարաբնույթ դիսպոզիցիոն գոյացությունների համակարգով, որոնք կառավարում են նրա վարքը և գործունեությունը, ուրեմն դիսպոզիցիոն դիրքորոշումները անձի սոցիալական վարքի կառավարման գործոն են հանդիսանում: Այդ դիսպոզիցիոն դիրքորոշումները կառուցված են աստիճանակարգ կերպով: Յադովն առաջարկել է դիրքորոշումների հիերարխիկ դասակարգման դիսպոզիցիոն մոդել, որն ունի չորս մակարդակ.

- տարրական \$իկսված դիրքորոշումներ,
- սոցիալական \$իկսված դիրքորոշումներ, կամ ատիտյուններ,
- բազային սոցիալական դիրքորոշումներ,
- անձի արժեքային կողմնորոշումներ [34, էջ 62]:

Ամերիկացի հոգեբան Մ. Կորդուելի հոգեբանական տերմինների տեղեկատու բառարանում դիրքորոշման եզրույթը բաժանված է երեք բաղկացուցիչների: Դրանք են՝ կոգնիտիվ, զգացմունքային և վարքային գործոնները: Ըստ ձեռնարկում տրված բացատրության, դիրքորոշման կոգնիտիվ բաղկացուցիչն իրենից ներկայացնում է մարդու կարծիքը օբյեկտի մասին, զգացմունքայինը՝ ներառում է մարդու զգացմունքները օբյեկտի նկատմամբ և վարքայինը՝ նրա փաստացի վարքը օբյեկտի նկատմամբ: Ընդ որում ենթադրվում է, որ նոր օբյեկտի նկատմամբ որոշակի դիրքորոշումներ չունենալու պարագայում, մարդը որոշակի վարք դրսևորելու համար հենվում է զգացմունքային գործոնի վրա: Ըստ Կորդուելի՝ դիրքորոշումները մի շարք դրդապատճառային գործառույթներ ունեն:

Պաշտպանական գործառույթ՝ դրանք այն դիրքորոշումներն են որոնք պաշտպանում են մարդուն սեփական անձի նկատմամբ տածած բացասական զգացմունքներից, երբ դրանք անձի կողմից պրոեկտվում են շրջապատի հարթություն,

Էքսպրեսիվ-գնահատման գործառույթ, երբ դիրքորոշումները

հանդիսանում են անձի համար գերնշանակալի առարկաների, կամ երևույթների նկատմամբ վերաբերմունքի արտահայտման միջոց:

Ինստրուկցիոնալ գործառույթ, երբ անձն՝ ընդունելով որոշակի դիրքորոշումներ, արտահայտում է դրանք որպես իր վերաբերմունքի ձևեր, եթե դրանք օգնում են խուսափել շրջապատի բացասական գնահատականից:

Ճանաչողական գործառույթ, երբ դիրքորոշումներն օգնում են որոշակի վերաբերմունք ձևավորել երևույթների նկատմամբ և կազմել ներքին սպասման մոդելներ: Տվյալ տեսակետի շրջանակում դեռահասուն, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջկա մոտ սննդային վարքի շեղումների առաջացումը խթանող դիրքորոշումների գործառույթները համապատասխանաբար կարելի է դիտարկել որպես պաշտպանական գործառույթ՝ երբ սննդային վարքի շեղումն առաջացնող դիրքորոշումը սեփական մարմնի պատկերի նկատմամբ թերարժեքության զգացումից ազատվելու միջոց է:

Եթե սպեսիվ-գնահատման գործառույթ, երբ սննդային վարքի շեղումը առաջանում է որպես անձի կողմից կնոջ արտաքին կերպարին վերագրվող չափորոշիչների գերազնահատման և դրանց գերնշանակությունն տալու արդյունք:

Ինստրուկցիոնալ գործառույթ, երբ դեռահասուն, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջկա մոտ սննդային վարքի շեղումն առաջանում է որպես իր սոցիալական խմբում գործող սննդային վարքի և կնոջ արտաքին պատկերի մասին կարծրատիպերին համապատասխանելու և դրանով իսկ շրջապատի բացասական գնահատականից խուսափելու միտման արդյունք:

Ճանաչողական գործառույթ, երբ սննդային վարքի շեղումների առաջացումը դեռահասուն, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջկա մոտ սկսվում է սննդային վարքի կտրուկ փոփոխություններից, որոնք շրջապատի կողմից խիստ դրական գնահատական են ստանում: Այսպես անձը սննդային վարքի կտրուկ փոփոխությունների արդյունքում ինքնահաստատման սուր դրական զգացողություն է ապրում և այդպիսի վարքածևի հետագա դրսևորումը \$իկսվում է որպես դիրքորոշում:

Դիրքորոշում տերմինը բացի իր դասական բացատրությունից, նշանակում է ցանկացած տիպի սպեցիֆիկ հակազդում իրականացնելու անձի հակվածություն: Այսպիսի դիրքորոշումները հարկ է առանձնացնել գիտակցված դիրքորոշումներից, որոնք արտահայտում են օբյեկտի նկատմամբ անձի վերաբերմունքը:

Կորդուելը տվել է դիրքորոշումների տարատեսակների դասակարգման իր մոդելը, որն ունի հետևյալ տեսքը.

Պերցեպտուալ դիրքորոշումը՝ օբյեկտները որոշակի ձևով ընկալելու անձի հակվածությունն է:

Շարժողական դիրքորոշումը՝ որոշակի գործողությունը միևնույն ձևով իրականացնելու անձի հակվածությունն է, չնայած այն փոխելու գիտակցված նպատակին:

Ֆունկցիոնալ դիրքորոշումը որոշակի օբյեկտները միայն մեկ ձևով դիտարկելու և կիրառելու, կամ օգտագործելու անձի հակվածությունն է [27, էջ 92]:

Այս գաղափարը ենթադրում է, որ դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջկա մոտ սննդային վարքի շեղումների առաջացումն ուղղակիորեն կախված է անձի արտաքին կերպարին վերագրվող այն սոցիալական խմբի սպասումներից, որին նա պատկանում է:

Անձը հակված է այլ անձանց ընկալելու և գնահատելու որոշակի դիրքորոշումների ազդեցության ներքո: Այդ դիրքորոշումը կարող է լինել կայուն, կամ փոփոխական՝ կախված իրադրություններից և անձանց ընկալման առանձնահատկություններից:

Դիրքորոշումների սերտ կապվածությունը անձի հոգեկան գործընթացների հետյուրովի է պարզաբանում Ս.Լ.Ռուբինշտեյնը: Նա դիրքորոշումների ձևավորման գործընթացի հիմքում է տեսնում անձի զգացմունքային ոլորտը: Ըստ Ռուբինշտեյնի՝ այս ոլորտն ունի երեք մակարդակ, որոնցով մեծապես պայմանավորված է անձի դիրքորոշումների ձևավորումը:

Առաջին մակարդակում հաճույքի և տհաճության ֆիզիկական զգացողություններն են: Երկրորդին նա վերագրում է անձի վերաբերմունքը աշխարհին: Երրորդում գտնվում են անձի

ընդհանրացված զգացմունքները, որոնք արտահայտում են նրա աշխարհայացքային դիրքորոշումները:

Ռուբինշտեյնը զգացմունքները տեսնում է որպես անձի ապրումներ՝ կապված պահանջմունքների բավարարման և չբավարարման հետ: Եթե այս տեսությունը համադրենք դիրքորոշումների ձևավորման մասին վերը հիշատակված այլ տեսությունների գաղափարախոսությունների հետ, ապա պարզ է դառնում, որ քանի որ անձի դիրքորոշումների ձևավորման համար անհրաժեշտ գործոն է պահանջմունքը, հետևաբար դրա ծագման հիմքում ընկած է զգացմունքային ոլորտը: Այս երևույթը Ռուբինշտեյնը հիմնավորում է հետևյալ կերպ. «Մարդու զգացմունքներն արտահայտում են նրա անձի կառուցվածքը՝ բացահայտելով նրա ուղղվածությունը և դիրքորոշումները:

Անձի էությունը բացահայտվում է այն երևույթներում, որոնք արթնացնում են նրա զգացմունքները, կամ թողնում են անտարբեր, ինչն ուրախացնում, կամ տխրեցնում է նրան» [54, էջ 71]:

Այսպես, դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջկա մոտ սոցիալական խմբին պատկանելու, դրա կողմից ընդունված լինելու պահանջը և սեփական մարմնակազմի ընկալումից առաջացած բացասական զգացմունքները հանգեցնում են սննդային վարքի շեղումներ առաջացնող դիրքորոշումների ձևավորմանը: Այս տեսանկյունից անձի դիրքորոշումների և զգացմունքների փոխկապակցվածության խնդրին անդրադառնում է կիրառական և զարգացման հոգեբանության ասպարեզներում զգալի հետազոտություններ իրականացրած՝ շվեյցարացի հոգեբան Էդուարդ Կլապարեդը (1873-1940): Կլապարեդը պնդում է, որ զգացմունքները օրգանիզմի գլոբալ դիրքորոշման գիտակցում են հանդիսանում: Անհատին չպետք է հետաքրքրեն զգացմունքի բաղկացուցիչ ներքին զգացումների մանրամասները, քանի որ այն ինչ գիտակցությունը ցուցաբերում է որպես զգացմունք, իրենից ներկայացնում է օրգանիզմի դիրքորոշում [23, էջ 95-96]:

Խնդրի առնչությամբ հետաքրքիր է Ջերոմ Բրունների տեսությունը, որի համաձայն դիրքորոշումների ձևավորման հիմքում ընկած հոգեկան գործընթացներից կարևորագույնն



ընկալու մն է, մասնավորապես՝ անձի կողմից որոշակի երևույթների, կամ օբյեկտների դիրքորոշումային ընկալման պատրաստությունը: Այս գործընթացում Բոյուները մասնավոր նշանակություն է տալիս ընկալման գործընթացի փուլերին: Ընդ որում, ըստ հեղինակի՝ որքան անհատի համար ավելի մեծ է օբյեկտի նշանակությունը, այնքանով ավելի մեծ է ընկալման մեջ վարքային դետերմինանտների դերը [15, էջ 74-75]: Դիրքորոշումների բովանդակության և անձի վարքի դրսևորման կապի հիմնական գործոններից է անձի իմաստային արժեքների համակարգը: Այս բնագավառում է. Շարանգերը խոսում է ենթա-անհատական իմաստի մասին, որն ընկած է իմաստային կապերի հիմքում: Օբյեկտի ենթա-անհատական իմաստը որոշվում է գիտակցական տարաբնույթ դիրքորոշումների հետ դրա իմաստային կապերով: Ըստ Շարանգերի, անձի և նրա վարքը կառավարող դիրքորոշումների էությունը բացահայտելու համար անհրաժեշտ է պարզել անձի մոտ առկա իմաստային կապերը և դրանց հետ կապված նրա սուբյեկտիվ ապրումները [30, էջ 23-25]:

Անձի վարքը նրա ներաշխարհի, կենսական դիրքորոշումների համակարգի, իդեալների և արժեքների արտահայտումն է: Ընդ որում անհատի կողմից որոշակի ընդունված վարքային նորմերի և օրենքների իմացությունը բավարար չէ վարքի կառավարման համար քանի դեռ դրանք նրա կողմից գիտակցաբար յուրացված չեն և ընդունված չեն որպես սեփական համոզմունքներ: Միայն վերածվելով իրական վարքի՝ ներքին դիրքորոշումները կարող են ձեռք բերել իրական համոզմունքների հատկանիշներ: Ցանկացած մարդու վարքի մեջ արտահայտվում են նրա անհատական հոգեբանական առանձնահատկությունները՝ զգացմունքային

կայունությունը, բնավորության գծերը, հակումները և այլն [50, էջ 454-455]: Միևնույնը վերաբերվում է նաև դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջկա մոտ սննդային վարքի շեղումներ առաջացնող դիրքորոշումների ձևավորման գործընթացին: Դրանց առաջացման հավանականությունը և տեսակը անմիջականորեն կախված են անձի հոգեբանական առանձնահատկություններից՝ զգացմունքային կայունությունից,

վարքի կառավարման մոդելներից, կամայի՛ն հատկանիշներից և այլն:  
Ըստ Ադլերի տեսության, անձի վարքի դրսևորումների, դիրքորոշումների, հոգեկան գործընթացների և բնավորության գծերի հիմքում ընկած է հենց կյանքի իմաստի գաղափարը: Անհատի գործողությունների իմաստը որոշել կարողանալու համար պետք է կարողանալ ճիշտ գնահատել նրա գոյության իմաստը [30, էջ 31-33]:

Ըստ Լ. Վ. Զապորոժեցի մարդու անհատական իմաստային հարաբերությունները դրսևորվում են դիրքորոշումների ձևով:

Այս հարցի առնչությամբ Նասինովսկայան ասում է. «Եթե իմաստաձևավորող դրդապատճառները իրենցից ներկայացնում են հարաբերականորեն կայուն իմաստային գոյացություններ, որոնք բնորոշում են անձի կառուցվածքը, ապա իմաստային դիրքորոշումները և անհատական գերարժեք զգացմունքային ապրումները՝ դինամիկ իրադարձային իմաստային գոյացություններ են, որոնք գոյություն ունեն որոշակի պայմաններում և դադարում են գոյություն ունենալ այդ պայմանների վերացման հետմեկտեղ» [30, էջ 93-94]:

Իմաստային դիրքորոշման կայունացնող ազդեցությունները առավելապես հետազոտված են Ա. Գ. Ասմոլովի կողմից (1979), որը իմաստային դիրքորոշման հիմնական գործառույթ է համարում դրականացնող ազդեցությունը: Նա կարծում է, որ այս երևույթն արտահայտվում է անձի առարկայական-պրակտիկ և ուսուցողական գործունեություններում: Դիրքորոշումների կայունացնող ազդեցությունները Ասմոլովը դասակարգում է հետևյալ կերպ.

Առաջին հերթին դրանք ընտրասերման և ֆիլտրացման երևույթներն են, որոնք պարփակված են այն օբյեկտների և երևույթների նկատմամբ ուշադրության ընտրողականության և սուբյեկտի հակազդման մեջ, որոնց նկատմամբ ուղղված են անձի ակտուալ գործողությունները:

Երկրորդը՝ զգայողունակության աստիճանի բարձրացման երևույթն է, որը ենթադրում է ռելեվանտ դրդիչների նկատմամբ սենսիբիլիզացիա, ինչը մասնավորապես արտահայտվում է սենսորային սահմանների ընտրողական իջեցմամբ: Երևույթի մասին խոսելիս Ասմոլովն անդրադառնում է Մոուլտոնի իրականացրած

հետազոտության արդյունքներին, որոնք ցույց են տվել, որ արտահայտված հաջողության հասնելու պահանջմունքով անձանց մոտ համապատասխան դրդապատճառների իրացման պայմաններում ցածրանում է հաջողությունը բնորոշող խոսքերի նկատմամբ ընկալունակությունը: Ընդ որում հաջողության հասնելու ցածր պահանջմունքով, կամ նեյտրալ դիրքորոշման անձանց մոտ նման երևույթ չի հայտնաբերվել:

Երրորդը՝ զգայական տվյալների համակարգման երևույթն է:

Չորրորդը՝ գործունեության իներցիոն դրսևորումն է, որի մասին խոսելիս Ասմունովն անդրադառնում է 1960-ականներին Ջ. Բրաունի, Դ. Ադլերի, Մ. Յենլեյի կողմից իրականացված մի շարք հետազոտություններին, որոնք ցույց են տվել, որ հետազոտվողների համար իմաստային գունավորում ունեցող և չավարտված գործողությունները հանգեցնում են շատ ավելի ինտենսիվ լարվածության և ավելի պարզ են պահպանվում հիշողության մեջ, քան քիչ իմաստավոր գործողությունները:

Վերջապես հինգերորդը՝ արտաքին խանգարիչ


գործոններից պաշտպանման երևույթն է: Ա.Վ.Չապորոժեցի տեսակետի համաձայն, իմաստային դիրքորոշումը իրենից ներկայացնում է իրականության մեջ անձի անհատական իմաստի արտահայտում և դրան համապատասխան որոշակի գործողության պատրաստություն [30, էջ 182-183]: Դիրքորոշումների ակտուալ

արտահայտումն, ինչպես պարզ դարձավ,

իրականացվում է անձի վարքի և գործունեության միջոցով:

Օ. Ն. Պերվուշինան իր «Ընդհանուր հոգեբանություն»-ում ներկայացնում է ներքին և արտաքին գործունեությունների միանման կառուցվածքը (նկար 1).

Նկար 1.



Գործողությանը մտածողության հիմքն է, իմաստների ձևավորման և զարգացման ու խորացման համար անհրաժեշտ պայման է», - ասում է նա [40, էջ 37]:

Որոշ հոգեբաններ անհերքելի են համարում կապը դիրքորոշումների և դրդապատճառների միջև: Անձի վարքը և այն առաջացնող դիրքորոշումները պայմանավորված են անձի դրդապատճառային ոլորտով: Յեղիևակները տեսնում են անձի վարքի դրսևորման երկու հնարավոր մոդել: Առաջին դեպքում այն ավտոմատացված է՝ դրդապատճառներով հիմնավորված և յուրացրած: Երկրորդ դեպքում այն իմպուլսիվ է՝ դրդապատճառներով չհիմնավորված, այլ արտաքին անժանոթ ազդեցության ներքո ձևավորված: Այսպես դրդապատճառի բացատրությունը սուբյեկտի կողմից սեփական գործողությունների հիմնավորումն է իր և իր խմբի համար սոցիալապես ընդունելի իրավիճակների միջոցով, որոնք նրան դրդում են այս կամ այն տեսակի գործողությունների իրականացման:

Կարլ Գուստավ Յունգը անձի վարքի դրդապատճառային ոլորտի մասին խոսում է հոգեկան դիրքորոշման տեսանկյունից: Քննարկելով դիրքորոշման երևույթը անձի վարքային դրսևորումներում՝ Յունգը դրանք առաջացնող դրդապատճառային գործոնների թվում է տեսնում անձի բնածին, ինչպես նաև դաստիարակության ընթացքում առաջացած հատկանիշները, անձնային-անհատական համոզմունքները, որոնք ձևավորվում են կուլտիվ պատկերացումների յուրացման արդյունքում:

Ընդ որում՝ այդպիսի կուլտիվ պատկերացումները ներառում են անձի ներքին սուբյեկտիվ և արտաքին օբյեկտիվ իրականության ասպարեզները: Այս երկու գործոնների համադրությունը որոշում է անձի ընդհանուր հոգեկան դիրքորոշումը: Յունգն առաջարկում է իր անձի տեսության համատեքստում դիրքորոշման երևույթի մեկնաբանություն, ըստ որի անձը կարող է ունենալ ներքին, կամ արտաքին աշխարհի նկատմամբ հետաքրքրության ուղղվածություն, որն էլ իր հերթին արտահայտվում է էքստրավերտ և ինտրավերտ դիրքորոշումներում: Պարզ է, որ այս պարագայում էքստրավերտ

դիրքորոշման անձի մոտ սոցիալական ազդեցությունների արդյունքում առաջացած դիրքորոշումներն առավել բազմազան և ազդեցիկ են, քան ինտրավերտդիրքորոշման անձանց մոտ [46, էջ 54-55]:

Վերը քննարկված տեսակետները, տեսություններն ու մոտեցումները մասնավորապես վերաբերվում էին անձի ներքին դիրքորոշման երևույթին, դրա բովանդակությանը և այն մեխանիզմներին ու հոգեկան գործընթացներին, որոնք անմիջականորեն կապված են ներքին դիրքորոշման երևույթի ձևավորման և դրա վարքային արտահայտումների հետ: Սակայն դիրքորոշման երևույթը՝ լինելով բազմաշերտ ու բազմաբովանդակ, ի հայտ է գալիս և դրսևորվում է ոչ միայն անձի ներքին հոգեկան գործընթացների, այլև սոցիալական ազդեցությունների ներքո, որոնց անձն անխուսափելիորեն բախվում է իր կենսագործունեության ընթացքում: Այսպիսի ազդեցությունների ներքո ի հայտ եկող դիրքորոշումները դիտարկվում են որպես առանձին երևույթ՝ կրելով «սոցիալական դիրքորոշում» անվանումը:

## **1.2 Սոցիալ ական դիրքորոշումների ազդեցության մեխանիզմները՝ որպես սննդային վարքի շեղումների առաջացման դետերմինանտ**

Մարդկանց մեծամասնությունն այս կամ այն կերպ կախված է խմբային ազդեցություններից: Իհարկե այդ ազդեցությունների աստիճանը կախված է մի շարք գործոններից, ինչպիսիք են անձի անձնային հատկանիշները՝ սեռը, տարիքը, ազգությունը, ինտելեկտը, տազնապայնություն աստիճանը և ներշնչվողականության մակարդակը: Բացի այդ այն կախված է ազդեցությունն իրականացնող սոցիալ ական խմբի հատկանիշներից, որոնք են՝ խմբի մեծությունը, համախմբվածությունը և այլն: Վերջապես ազդեցության մակարդակը որոշվում է նաև նրանով, թե անհատը տվյալ խմբում ինչպիսի դեր ու դիրք ունի: Այս բոլոր գործոնների ազդեցության ներքո անձի մոտ ձևավորվում են սոցիալ ական դիրքորոշումներ, որոնցով որոշվում են նրա վարքային մարտավարությունները:

Սոցիալ ական դիրքորոշում է գրույթն առաջին անգամ առաջարկվել է 1918 թվականին և բնորոշվել է որպես սոցիալ ական միջավայրի նկատմամբ անձի վերաբերմունքների ամբողջություն, որի առաջացման համար կարևորագույն գործոն է հանդիսանում սոցիալ ական արժեքների երևույթը: Սոցիալ ական դիրքորոշումը գործում է միևնույն ժամանակ որպես և՛ անձի հոգեբանական կառուցվածքի, և՛ սոցիալ ական համակարգի գործոն, քանի որ անձի հոգեբանական ապրումները պայմանավորված են սոցիալ ական օբյեկտներով ու դրանց նշանակությամբ: Եգրույթի ի հայտ գալու պահից (1918) մինչև 1940-ական թվականները դրա քննարկումը կրում էր զուտ տեսական բնույթ: 1960-ականների վերջին սոցիալ ական դիրքորոշման եգրույթն արդեն հաստատուն կերպով կիրառվում էր սոցիալ ական հոգեբանության մեջ [12, էջ 364- 365]:

Սոցիալ ական դիրքորոշումների ձևավորման գործոն է անձի սոցիալ ական կողմնորոշման համակարգը, որը հոգեկան ֆունկցիոնալ համակարգերի ամբողջությունն է: Դրա օգնությամբ

անձն ընտրում և իրականացնում է որոշակի վարքային մոդելներ: Այս համակարգի նպատակն է անձի պահանջմունքների իրականացումը՝ սոցիալական միջավայրի հետ փոխազդեցության միջոցով [21, էջ 14-16]:

Կարևոր է առանձնացնել սոցիալական դիրքորոշման և անձնային դիրքորոշման երկու յթևերը: Անձի ներքին դիրքորոշումը որոշակի իրադրությունում որոշակի վարքածն դրսևորելու օրգանիզմի հոգեֆիզիոլոգիական պատրաստությանն է: Ի սկզբանե մարդն ուղղորդվում է ներքին դիրքորոշումներով:

Ըստ Ուզնաձեի՝ որոշակի դիրքորոշման առկայությունը ենթադրում է որոշակի ապրումների առկայություն, ինչի շնորհիվ անձի ուշադրությունը սևեռվում է այն առաջացնող երկու յթևերի նկատմամբ [52, էջ 142]:

Սոցիալական դիրքորոշումն անձի մոտ, կամ խմբում ձևավորված պատրաստության վիճակն է, որն ուղղորդում, խեղաթյուրում, կամ որևէ այլ կերպ ազդում է անձի, կամ սոցիալական խմբի վարքի վրա: Գ. Օլպորտի տեսակետի համաձայն՝ դիրքորոշումը հոգեֆիզիոլոգիական պատրաստության վիճակն է, որն ի հայտ է գալիս անձի նախկին փորձի արդյունքում և նրա վարքի նկատմամբ դինամիկ ազդեցություն ունի: Սոցիալական դիրքորոշումն, ըստ Օլպորտի, կարելի է դիտարկել որպես կայուն դրական և բացասական հուզական հակազդումների, գնահատումների, զգացմունքների և դրական, կամ բացասական վարքային միտումների համակարգ, որը ձեռք է բերվում սոցիալական փորձի արդյունքում և արտահայտում է մարդկանց համոզմունքները: Ըստ հեղինակի՝ անձն օժտված է ընդունակությունների, դիրքորոշումների, դրդապատճառների համակարգով, որոնք պայմանավորված են այն իրադարձություններով, որոնք նրան շրջապատում են: Այդ համակարգի վերծանման համար նախևառաջ անհրաժեշտ է պարզել այն մշակույթային և ընտանեկան ավանդույթները, որոնցում տվյալ անձը ձևավորվել է [38, էջ 70-71]:

Այսպիսով, սոցիալական դիրքորոշումների ձևավորման հիմքում ընկած են անձի կրոնական և ազգասիրական գաղափարները, լիբերալ, կամ կոնսերվատիվ աշխարհայացքը, ավտորիտար,

Եսակենտրոն, կամ ավանդապաշտական ուղղվածությունը: Վերջինները՝ լինելով սոցիալական դիրքորոշումների ձևավորման գործոններ, բացահայտում են անձի բնավորության տարաբնույթ կողմերը:

Ըստ Օլարտի, խմբային դիրքորոշումների ձևավորման գործում ապրումակցումն այն գործոնն է, որի շնորհիվ անձը համբերատարությամբ է ընդունում իր սեփական և այլ անձանց արժեքներն ու դիրքորոշումները: Այսպիսի վերաբերմունքի հիմքում անձի ինքնաճանաչումն ու ինքնընդունումն է այնպիսին ինչպիսին, որ նա կա [58, էջ 330-354]:

Այսպիսով, սոցիալական դիրքորոշումները սոցիոմիզարգացման արդյունք են, որում դրանք որոշիչ դեր ունեն:

Ըստ Վ.Գ.Կռիսկոյի, դիրքորոշումը որոշում է անձնաց գործողությունների, ակտիվության ուղղվածությունը միևնույն ժամանակ հանդիսանալով ընկալման և մտածողության միջոց: Սակայն տարբեր դիրքորոշումները տարբեր կերպ են ազդում մարդու վարքի վրա: Անձի ուղղվածությունը որոշվում է տարաբնույթ սոցիալական դիրքորոշումներով, որոնք առնչվում են հասարակական կյանքի տարբեր ասպարեզների հետ: Կռիսկոն սոցիալական դիրքորոշումների կարևորագույն գործառնությունները դասակարգում է հետևյալ կերպ.

- Ադապտատիվ գործառնություն, ըստ որի սոցիալական դիրքորոշումները ուղղորդում են անձանց դեպի այնպիսի օբյեկտներ, որոնք ծառայում են նրանց նպատակների իրականացման համար:

- Կոգնիտիվ գործառնություն, ըստ որի դիրքորոշումը անձին տալիս է այս կամ այն օբյեկտի նկատմամբ համապատասխան վարքի դրսևորման համար պարզեցված հրահանգներ:

- Կարգավորիչ գործառնություն, ըստ որի դիրքորոշումը հանդիսանում է ներքին լարվածությունից ազատվելու միջոց:

- Պաշտպանական գործառնություն, ըստ որի դիրքորոշումը նպաստում է անձի ներքին և ներխմբային կոնֆլիկտների լուծմանը:

- Կայունացնող գործառնություն, ըստ որի դիրքորոշումը որոշում է անձի գործունեության կայուն, փոխկապակցված, նպատակաուղղված



բնույթը և ապահովում է դրա ուղղվածության անփոփոխ  
ապահպանումը փոփոխվող իրադրություններում:

-Ավտոմատացման գործառույթ, ըստ որի դիրքորոշումն ազատում  
է սուբյեկտին որոշումներ կայացնելու և գործունեությունը  
գիտակցաբար կառավարելու անհրաժեշտությունից՝ ստանդարտ,  
նախկինում արդեն հանդիպված իրադրություններում:

Սոցիալական դիրքորոշումների ձևավորման վերաբերյալ  
Կռիսկոյի ուսումնասիրությունների արդյունքում նրա տված  
ձևակերպումներն այդ երևույթների մասին կարելի է ընդունել  
որպես «դիրքորոշում» տերմինի դասական մեկնաբանություն:  
Այսպես, ըստ հեղինակի՝ սոցիալական դիրքորոշումները  
ձևավորվում են մարդկանց շփման և փոխազդեցության ընթացքում,  
որտեղ դրանք հանդիսանում են նշանակալի օբյեկտներ:  
Սոցիալական դիրքորոշման օբյեկտը սուբյեկտի մոտ որոշակի  
զգացմունքային հակազդումներ է առաջացնում:

Ըստ Կռիսկոյի սոցիալական դիրքորոշումները բաղկացած են  
կոգնիտիվ, հուզական և վարքային գործոններից: Ընդ որում՝  
կոգնիտիվ գործոնը ներառում է անձի կողմից որոշակի գիտելիքի  
առկայությունն օբյեկտի մասին: Հուզական գործոնը ենթադրում է  
սուբյեկտի զգացմունքային վերաբերմունքը օբյեկտի նկատմամբ,  
որը ձևավորվում է դրա մասին ստացվող տեղեկատվության հիման  
վրա: Վարքային գործոնը ենթադրում է օբյեկտի նկատմամբ որոշակի  
գործողություններ իրականացնելու անձի պատրաստությունը՝  
հենվելով դրա մասին առկա տեղեկատվության վրա: Այսպիսով,  
սոցիալական դիրքորոշումների ծագումն ու արտահայտումը  
հիմնվում են օբյեկտի մասին որոշակի նախնական տեղեկատվության  
վրա, որի արդյունքում անձի մոտ օբյեկտի մասին որոշակի  
պատկերացում է ձևավորվում: Հաջորդիվ, սուբյեկտի մոտ  
առաջանում է օբյեկտի նկատմամբ զգացմունքային վերաբերմունք և  
դրան համապատասխան գործելու պատրաստություն: Այսպիսի  
մեխանիզմով ձևավորվում է անձի նախնական դիրքորոշումը, որը  
հետագայում կարող է մնալ կայուն, կամ փոփոխվել կախված հաջորդ  
տեղեկատվությունից, որ սուբյեկտը ստանում է օբյեկտի մասին:

Ըստ Կռիսկոյի, սոցիալական դիրքորոշումները ամրապնդվում

են պատմական զարգացմանը զուգընթաց: Արդյունքում ձևավորվում են այդպիսի դիրքորոշումների ամբողջական համակարգեր, որոնք անընդհատ ակտուալացվելով կառավարում են հոգեկան գործընթացների ուղղվածությունը, անձանց և խմբերի վարքը, փոխազդեցություններն ու հարաբերությունները խմբերում և ձևավորում որոշակի վարքային կարծրատիպեր որոշակի իրադրություններում: Սոցիալական դիրքորոշումների

համակարգերը ապահովում են անհատի վարքի ներքին ամբողջականությունը և դրա արտաքին դրսևորումների կառավարումը [28, էջ 93-95]: Ռուս սոցիոլոգ և փիլիսոփա Վ. Ա. Յադովնա առաջարկել է «անձի սոցիալական վարքի կառավարման կոնցեպցիան»:

Ըստ նրա՝ անձի տարաբնույթ հոգեկան հատկանիշների և գործընթացների հիմքում, որոնց թվին է դասվում դիրքորոշման երևույթը, գոյություն ունեցող օրինաչափությունն այն փաստն է, որ դրանց հիմնական բնորոշիչը անձի վերաբերմունքն է գործունեության իրադրային վիճակի նկատմամբ, որը ձևավորվում է նախկին փորձի շնորհիվ: Անձի կողմից որոշակի վարքածև դրսևորելու պատրաստությունը Յադովը բնորոշում է որպես դիսպոզիցիաների համակարգ, որոնք ձևավորվել են նրա սոցիալական փորձի արդյունքում առաջացած գործունեության պայմանների ընկալման և գնահատման հետևանքով և վերածվել են որոշակի վարքածևեր դրսևորելու դիրքորոշումների [56, էջ 10]:

Ե.Պ.Բելինսկայան և Օ. Ա. Տիխոմանդրիցկայան անդրադառնում են Յադովի տեսության դրույթներին, որոնք ներառում են դիրքորոշումների դիսպոզիցիոն մակարդակների մասին գաղափարը: Այսպես, ըստ հեղինակի, գոյություն ունի դիսպոզիցիաների չորս մակարդակ.

- սովորական դիրքորոշումներ (ըստ Ուզնաձեի),
- փոքր խմբերում գործող սոցիալական դիրքորոշումներ,
- անձի ընդհանուր ուղղվածություն (մասնագիտություն, հասարակական գործունեություն, հետաքրքրություններ),
- արժեքային կողմնորոշումների համակարգ [12, էջ 421-423]:

Սոցիալական դիրքորոշումը անհատի կայուն ներքին

վերաբերմունքն է որևէ երևույթի, կամ այլ անձի նկատմամբ: Այն ներառում է տվյալ օբյեկտների նկատմամբ անձի մտքերը, զգացմունքները և գործողությունները:

Սոցիալական դիրքորոշման երևույթին համապատասխան միջազգային տերմինաբանության մեջ կիրառվում է «ատիտյուդ» տերմինը, որն առաջացել է լատիներեն aptitude արմատից, ինչը նշանակում է վերաբերմունք: Ֆրանսերենում attitude նշանակում է դիրք: Համեմատական հոգեբանության մեջ այս տերմինը կիրառվում է որոշակի շարժումներ կատարելու անձի պատրաստությունը, կամ դրանք իրականացնելու միտումը բնորոշելու համար: Ավանդական անձի հոգեբանության մեջ ատիտյուդը դիտարկվում է որպես ներքին աֆեկտիվ նախաորամադրվածություն, որը կախված է անձի նախկին փորձից: Սոցիալական հոգեբանության մեջ այս տերմինը նշանակում է որոշակի սոցիալական վարք դրսևորելու սուբյեկտի հակվածությունը:

Բ. Գ. Մեսչերյակովն ու Վ. Պ. Չինչենկոն իրենց համատեղ աշխատանքի արդյունքում լույս տեսած «Մեծ հոգեբանական բառարանում» տերմինը բացատրում են այսպես.

«Ատիտյուդն ունի բարդ կառուցվածք և ներառում է մի շարք գործոններ, ինչպիսիք են ընկալելու, գնահատելու, սոցիալական օբյեկտները գիտակցելու և դրան համապատասխան որոշակի վարքային ակտեր իրականացնելու անձի ընդունակությունը» [34, էջ 60-62]:

2005 թվականին Մոսկվայում տպագրված հոգեբանական հանրագիտարանում ատիտյուդ տերմինը բացատրվում է որպես զգացմունքայնորեն գունավորված վերաբերմունք որոշակի անձանց, կամ երևույթների նկատմամբ, որը հանգեցնում է անձի կողմից որոշակի վարքային դրսևորումների: Այլ կերպ ասած՝ ատիտյուդը բացատրվում է որպես անձի որոշակի սոցիալական վարքի դրսևորման հակվածություն, որը թելադրվում է նրա սուբյեկտիվ վերաբերմունքով [50, էջ 68-70]:

Ատիտյուդի երևույթի վերաբերյալ հայեցակետերի թվում է հետաքրքրական են Ս. Ստեպանովի հոգեբանական հանրագիտարանում ներակայացված հայեցակետերը: Ատիտյուդ տերմինն առաջին անգամ

սոցիալական գիտություններում կիրառվել է Ու. Թոմսոնի և Ֆ. Չևանեցկիի կողմից, որոնք այն բնութագրել են որպես անձի վարքի ուղղվածություն այն խմբային արժեքների նկատմամբ, որոնք որոշում են սոցիալապես ընդունված վարքաձևերը:

Չետաքրքրական է ատիտյունների վերաբերյալ Ա. Ուիլկերի եզրահանգումը, ըստ որի անձի վարքի և ատիտյունների միջև առկա կապի հավանականությունը ցածր է: Նմանատիպ տեսակետի է հարում է Արոնսոնը, որը հակված է անձի վարքը բացատրել առավելապես իրադրային գործոնների ազդեցությամբ, որտեղ ատիտյունների դերը համարում է բավականին աննշան: Թեմայի վերաբերյալ իր հետազոտությունների արդյունքում Արոնսոնը եկել է հետևյալ եզրահանգումների.

- Աննշան, հաճախ գրեթե անտեսանելի իրադրային փոփոխականները իրականում անձի վարքի դրսևորումների համար առեւելի դետերմինանտ են հանդիսանում, որոնք շատ ավելի ծանրակշիռ են, քան անձի ներքին սոցիալական դիրքորոշումները:

- Մարդկանց մեծամասնությունը հակված է չնկատել իրադրային գործոնների նշանակությունը անձի վարքի դրսևորումների բացատրության համար՝ գերադասելով դրանց բացատրությունը հիմնավորել անձնային հատկանիշներով և ատիտյուններով [50, էջ 50-51]: Այս պարագայում դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջկա սննդային վարքի առանձնահատկությունները որոշվում են այն սոցիալական խմբերում ընդունված մոդելներով, որոնց նա պատկանում է: Մյուս կողմից, եթե դրանք խիստ հակասության մեջ են համընդհանուր սոցիալ-մշակութային կարծրատիպերի հետ, ապա անձի մոտ ներքին կոնֆլիկտ է առաջանում իր առաջնային սոցիալական խմբում գործող ավանդույթների, սոցիալ-մշակութային կարծրատիպերի և սեփական մարմնի պատկերի նկատմամբ վերաբերմունքի միջև: Այս կոնֆլիկտի լուծման հետագա զարգացումը կախված է արդեն անհատի անձնային հատկանիշներից և որակներից, արժեքային համակարգի յուրահատկություններից:

Դիրքորոշումների երևույթը որպես հոգեկան ակտիվության տարատեսակ, ձևավորվում է վաղ մանկության շրջանում: Ֆրանսիացի

հոգեբան Ժ. Գոդֆրուան իր ուսումնասիրություններում եկել է այն եզրակացության, որ վաղ մանկությունից անձի մոտ ձևավորվող դրոպապատճառները, դիրքորոշումները, արժեքները, ինչպես նաև վարքային նորմերը, մեծապես կախված են այն բանից, թե ինչպես է տվյալ մշակույթը որոշում կնոջ և տղամարդու սեռային դերերը: Այս դիֆերենցիացիան իրականացվում է անմիջապես երեխայի ծննդյան պահից, երբ ամեն սեռի ներկայացուցիչ երեխային տրվում է որոշակի տիպի հագուստ, խաղալիքներ և այլն [18, էջ 277-278]:

Այսպիսով, Գոդֆրուան սոցիալական դիրքորոշումների ձևավորման հարցում մասնավոր նշանակություն է տալիս երեխայի առաջնային սոցիալական փորձին:

«Վաղ մանկության շրջանում, երբ երեխայի հիմնական շփումն իրականացվում է ընտանիքում, դրանում առկա պայմանները, նորմերը և դիրքորոշումները երեխան ընդունում է և դրանք որոշիչ են նրա անձի և ինտելեկտուալ ու ստեղծագործական հատկանիշների զարգացման համար: Յաջորդիվ, որպես այդպիսի դետերմինանտ է հանդիսանում դպրոցը, կամ մանկապարտեզը, ուսումնական հաստատությունը, որը երեխան հաճախում է: Այստեղ արդեն ձևավորվում են երեխայի ինքնագնահատականը, հետաքրքրասիրությունը: Ծնողների և ուսուցիչների վերաբերմունքը երեխային կախված է նրա սեռային պատկանելիությունից, անձնային առանձնահատկություններից, խառնվածքից և բնավորությունից: Այստեղ նույնպես գործի են անցնում դիրքորոշումները, ընդ որում՝ ինչպես անհատական այնպես էլ խմբային», - ասում է նա [18, էջ 455-456]:

Վիգոտսկին և Լուրիան նույնպես անդրադառնում են դիրքորոշումների ձևավորման ակունքներին վաղ մանկության տարիքում՝ նշելով, որ երեխայի մոտ դիրքորոշումների ձևավորման գործընթացն ուղիղ հարաբերական է ուշադրության զարգացմանը: Քանի դեռ երեխան գտնվում է սոցիալական պահանջներից դուրս, նա ունի ուշադրության որոշակի ձև, որն ակտիվանում է ցանկացած ուժեղ արտաքին ազդեցությունից, ինչպես օրինակ ուժեղ լույսը: Այստեղ որոշակի դիրքորոշումներ դեռ չկան, և լինել չեն կարող: Սակայն ժամանակի հետ, երբ երեխան

մեծանում է և դառնում սոցիալականացման սուբյեկտ, արդեն ստիպված է իրականացնել որոշակի սոցիալապես ընդունվող նորմերին համապատասխան վարք, որն իրականացվում է կամային ակտի միջոցով և ձևավորում է դիրքորոշումներ [17, էջ 175-176]:

Ծնողների և երեխաների միջև նմանությունը վարքային մոդելների, միմիկայի, ժեստերի, բնավորության գծերի և մարդկային բնույթի նրբագույն դրսևորումներում՝ ըստ Տ. Ի. Կուլեսնիկովայի, սոցիալական դիրքորոշումների վառ օրինակ է: Այսպիսի բնորոշ գծերը փոխանցվում են սերնդեսերունդ: Ըստ հոգեգեներտիկայի, ԴՆԹ-ում կոդավորված տվյալների միայն մեկ երրորդ մասն է կրում կենսաբանական բնույթ, մնացած մասերը կազմում են հոգեբանական գծերը, հոգեբանական դիրքորոշումների, կենսակերպի, անձնային գործոնների և հիմնական ապրումների մասին տեղեկատվությունը, որոնք փոխանցվում են ժառանգաբար [25, էջ 67-68]:

Միևնույն կերպ անձի կողմից յուրացվում են ծնողների սննդային վարքի առանձնահատկությունները: Յետևաբար սննդային վարքի շեղումների առաջացումը խթանող դիրքորոշումների ձևավորմանն առավել ապես հակված են այն դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկները, որոնց ծնողների մոտ առկա են այդպիսի շեղումներ: Այսպես, մարմնի պատկերի նկատմամբ վերաբերմունքը, որը վերջիվերջո որոշիչ է հանդիսանում սննդային վարքի շեղումների առաջացման գործում, նույնպես յուրացվում է ընտանիքում: Եթե դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջկա մայրը տառապում է սեփական արտաքինի նկատմամբ թերաբեքության զգացումից, ապա մեծ է հավանականությունը, որ վերջինը նույնպես կունենա սեփական մարմնի պատկերի նկատմամբ բացասական վերաբերմունք:

Ամերիկացի հոգեբան Ռոբերտ Չալդիսին (1945), սոցիալական դիրքորոշումները դիտարկում է որպես անձի կողմից որոշակի մարդկանց, իրադարձությունների, առարկաների և երևույթների գնահատում: Այդ գնահատման հիմքում նա տեսնում է սոցիալական կարծրատիպերի և անձի զգացմունքների փոխազդեցության երևույթը:

Ըստ Չալ դիևիի՝ դիրքորոշումները քիչ թե շատ բազային զգացմունքներ են, որոնք արտահայտվում են դրական և բացասական կոնտինուում: Ընդ որում սուբյեկտի կողմից դեպի ինքն իրեն ուղղված որոշակի դիրքորոշումը նա անվանում է ինքնագնահատական, որը համապատասխանաբար կարող է ունենալ տարբեր մակարդակներ և համապատասխանել, կամ չհամապատասխանել անձի իրական հատկանիշներին: Այսպիսի անձի ինքնագնահատականը որոշող դիրքորոշումների ձևավորման հարցում Չալ դիևին հատուկ նշանակություն է տալիս արտացոլված գնահատականի երևույթին, երբ մարդը սկսում է ինքն իրեն պատկերացնել, կամ ճանաչել՝ հետևելով, կամ ենթադրելով, թե ինչպես են իրեն վերաբերվում ուրիշները: Մյուս կողմից՝ անձի ինքնընկալման համար որոշիչ է սոցիալական նույնականացման երևույթը, այն թե ինչպես է անձը վերաբերվում, ինչ է մտածում, կամ զգում այն սոցիալական խմբի նկատմամբ, որին նա պատկանում է: [53, էջ 115] Այսօրինակ կերպով դեռահասուն լինել, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջկա վերաբերմունքը սեփական մարմնի պատկերի նկատմամբ ձևավորվում է ամսագրային կարծրատիպերի հետ այն համեմատելու և դրա հիման վրա սեփական արտաքինի մասին շրջապատի կարծիքը ենթադրաբար պատկերացնելու արդյունքում:

Ըստ Չալ դիևիի, մարդու սոցիալական վարքը որոշող դիրքապատճառների թվին են դասվում սոցիալական հարաբերությունների կառուցումը, սեփական անձի սոցիալական դիրքի հաստատումը, ինքնապաշտպանությունը և սեռական գուգընկերների գրավումը: Ընդ որում, տարբեր մարդիկ հակված են տարբեր կերպ հակադրել միևնույն իրադրությունը: [53, էջ 236-238]:

Քանի որ մարդու սոցիալական վարքը պայմանավորված է զգացմունքներով, հետևաբար զգացմունքները՝ զգայությունները, ինչպիսիք են վախ, զայրույթի, ուրախության զգացումները և այլն առավել ամուր են դիրքորոշումներից, քանի որ բացի դրական կամ բացասական բնույթից, դրանք նաև ունեն ֆիզիոլոգիական գրգռման գործոն: Վերջապես տրամադրությունները իրենց առավել հարատև լինելու շնորհիվ ավելի կայուն ազդեցություն ունեն անձի վարքի վրա: Իհարկե, Չալ դիևին չի անտեսում և այն փաստը, որ

միևնույն տեսակի զգացմունքների հանդեպ տարբեր մարդիկ կարող են ունենալ տարբեր հակազդումներ: Այս մոտեցումն իրավացի է նաև հակառակ տեսանկյունից, քանի որ տարբեր մշակույթներից սերող մարդիկ միևնույն տեսակի զգացմունքներին կարող են լրիվ նույն կերպ հակազդել:

Որոշ հեղինակներ պնդում են, որ մարդու դիրքորոշումները կարող են ձևավորվել նույնիսկ ասոցիացիաներով, որոնց գոյություն մասին մարդը ենթադրում է իրադարձությունը գնահատելիս:

Այս երևույթը Չալդինին բացատրում է նրանով, որ մարդը հակված է նոր իրադրությունները և օբյեկտները արդեն առկա զգացողությունների հետ կապելու:

Ա. Ա. Դերկաչի և Վ. Գ. Չալիգինի տեսակետների համաձայն, սոցիալական դիրքորոշումների հիմնական տարատեսակներն են՝ դոմինանտ, պլտրուիստական, եսասիրական և հաջողության, կամ անհաջողության դիրքորոշումները: Ըստ այդմ՝ դոմինանտ դիրքորոշումների համար բնորոշ է սուբյեկտի հակվածությունը, պատրաստությունը որոշակի հատուկ հակազդումներ իրականացնելու, որոնք տարբեր իրադրություններում անփոփոխ են: Ալտրուիստական դիրքորոշման երևույթը ենթադրում է սեփական շահերն անտեսելով ուրիշների շահերին համապատասխան վարքածներ դրսևորելու անձի հակվածությունը: Եսասիրական դիրքորոշման համար բնորոշ է միայն սեփական շահերին, հետաքրքրություններին, պահանջմունքներին համապատասխան վարքածներ դրսևորելու սուբյեկտի հակվածությունը: Հաջողության հասնելու դիրքորոշումը այնպիսի վարքածներ դրսևորելու սուբյեկտի հակվածությունն է, որոնք անխուսափելիորեն հանգեցնելու են հաջողության, որպիսին էլ որ լինի դրդապատճառային ասպարեզը: Ընդ որում այս կամ այն տիպի դիրքորոշումների դոմինանտությունը որոշվում է դիրքորոշումների այն տեսակով, որոնք անձի մոտ գերակշռում են [43, էջ 207]:

Դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի մասնավորապես



սահմանափակումային շեղման առաջացումը կարելի է դիտարկել որպես հաջողության հասնելու դիրքորոշման արդյունք, երբ անհատը՝ անտեսելով սննդի ընդունման սեփական ֆիզիոլոգիական պահանջմունքը, ամեն գնով ձգտում է համապատասխանել կնոջ արտաքինին վերագրվող սոցիալ - մշակութային կարծրատիպերին:

Բ. Ի. Դոդոնովը սոցիալական դիրքորոշումների ձևավորման խնդրի առնչությամբ ունի հատուկ մոտեցում: Նա ենթադրում է, որ մարդու ապրումների բնույթը որոշվում է անձի կենսափորձի ընթացքում ձևավորված որոշակի զգացմունքային գոյացություններով, որոնք կարելի է անվանել ծրագրային զգացմունքային դիրքորոշումներ: Երազանքը Դոդոնովը դիտարկում է որպես սոցիալական դրդապատճառներով հիմնավորված, դրական հույզերի գունավորմամբ երկարաժամկետ դիրքորոշում, որն ուղղված է դեպի ապագա և հատուկ է գրեթե բոլոր մարդկանց [43, էջ 425-427]:

Սոցիալական դիրքորոշումների, մասնավորապես գենդերային դիրքորոշումների ձևավորման գործընթացն, ըստ Ի. Գ. Մալկինա-Պիխի, կայանում է նրանում, որ անձի կողմից յուրացվում են հենց այն դիրքորոշումները, որոնք հատուկ են անձի համար հեղինակավոր, կամ նշանակալի մարդկանց, մասնավորապես նրասեր տղջապատին: Դրանց յուրացման հիմքում հեղինակը տեսնում է ծնողական վարքային մոդելների յուրացման գործընթացում [31, էջ 279-282]:

Այսպիսով, դիրքորոշման ձևավորման նկատմամբ անձնային ազդեցությունն ուղիղ համեմատական է սոցիալական դիստանցիային: Այնուամենայնիվ, սոցիալական դիրքորոշումների ծագման գործում կարևորագույն դերը պատկանում է անձի անհատական փորձին: Չետաքրքրական է, որ անհատի կողմից այլ անձանց սոցիալական դիրքորոշումների յուրացումը Մալկինա Պիխը համարում է փոքր խմբերում միջանձնային հարաբերությունների բաղկացուցիչ: Դեռահասույթյան, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկները՝ յուրացնելով սննդային վարքի շեղումների հանգեցնող դիրքորոշումները, առաջնորդվում են սննդային գործընթացի և կանացի արտաքինին

վերագրվող չափանիշների նկատմամբ իրենց առաջնային սոցիալական խմբերում գործող վերաբերմունքների առանձնահատկություններով: Իտալացի հոգեբան Ա. Պալմոնարին՝ տալով ատիտյուդի մասին իր ուսումնասիրությունների արդյունքում ստացված եզրակացությունները, ասում է,- «Կարծիքները, դիրքորոշումները և կարծրատիպերը այնքանով են կառուցողական, որ օգնում են մարդուն արտահայտել իր սոցիալական վերաբերմունքների համակարգը: Անձի սոցիալական վարքի դինամիկան, կոգնիտիվ գործընթացների համակարգը յուրաքանչյուր անհատի համար անհատական է, որևէ ենթատեքստից ազատ է և այդ պատճառով էլ չափելի է: Այս գործոնները սոցիալապես կառավարվող երևույթներ են և գտնվում են սոցիալական ազդեցությունների դաշտում» [99, էջ 187-202]: Ռ. Կարլին 1980-ականների վերջին և 1990-ականների սկզբին առաջադրեց ատիտյուդի եզրույթի վերաբերյալ նոր մոտեցում, ըստ որի սոցիալական դիրքորոշումների ձևավորման գործում բացի վերը նշված գործոններից նշանակալի դեր ունի անձի կրթվածության աստիճանը և լեզվի միջոցով սոցիալ-կոգնիտիվ նորմերի արտահայտումը [71, էջ 282-296]:

Այսպիսով, սոցիալական դիրքորոշման ձևավորումը միանշանակ ենթադրում է սոցիալական փոխներգործություն անձի և այն խմբի միջև որին նա պատկանում է: Հետևաբար այն պարտադիր կերպով ենթադրում է նաև տվյալ խմբի համար հատուկ վարքային նորմերի ընդունում: Սոցիալական դիրքորոշումները ապահովում են մարդկանց և խմբերի վարքի կառավարումը և սերտորեն կապված են սոցիալական կարծրատիպերի երևույթի հետ:

### **1.3 Սոցիալ ական դիրքորոշումների ազդեցությունն անձի ինքնաընկալման, ինքնագնահատականի և ինքնավերաբերմունքի ձևավորման գործընթացի վրա**

Անձի ներքին հոգեբանական և սոցիալ ական դիրքորոշումների ազդեցության ներքո նրա մոտ ձևավորվում են որոշակի վարքային մոդելներ, որոնք հիմնականում կարծրատիպային բնույթ ունեն: Այս գործընթացին մասնակցում են անձի զգացմունքները, այն սոցիալ ական խմբի մշակութային առանձնահատկությունները, որին նա պատկանում է, ինչպես նաև դրան հատուկ ավանդույթները, բարոյական նորմերը և օրենքները: Իհարկե, չնայած այդ գործոնների մեծազույն ազդեցությանը, անձի վարքային մարտավարությունների և դրանց հիմքում ընկած դիրքորոշումների առաջացման դետերմինանտ են հանդիսանում նաև սոցիալ ական դերերի ու դրանց նկատմամբ սոցիալ ական սպասումների, ինչպես նաև անձի ինքնաընկալման և ինքնագնահատման երևույթները իրենց բազմակողմանիության մեջ:

Անձի վարքածեղը որոշող դիրքորոշումների ձևավորման հիմքում մի շարք մասնագետներ տեսնում են սոցիալ ական փոխազդեցության երևույթը: Ինչպես օրինակ Ջորջ Յոմանսի (1910-1989) տեսության համաձայն՝ մարդիկ միմյանց հետ փոխազդեցության մեջ են մտնում իրենց նախկին փորձի հիման վրա՝ կանխատեսելով փոխազդեցության արդյունքում ստացվող ձեռքբերումները և կորուստները: Ջորջ Միդի (1863—1931) և Յերբերտ Բլումերի (1900-1987) առաջարած սիմվոլիկ ինտերակցիոնիզմի տեսության համաձայն, մարդու վարքը միմյանց և շրջապատող աշխարհի նկատմամբ որոշվում է այն նշանակություններով, որոնք անձը տալիս է դրանց [55, էջ 112]:

Մ. Ռ. Բիտյանովան սոցիալ ական փոխազդեցության հիմքում տեսնում է անձի դրդապատճառային համակարգը, որը ներառում է ընդհանուր շահի, անձնային շահի, համեմատական շահի երևույթները, ինչպես նաև անձի ալտրոնիստական, ագրեսիվ, կամ դեմոկրատական վարքային մոդելները [13, էջ 42-44]:

Ըստ Ա. Վ. Մորոզովի, անձի գործունեության հիմքում ընկած է սոցիալական դերի երևույթը: Սոցիալական դերն է որոշում անձի դիրքորոշումները և աշխարհայացքները: Մորոզովն առանձնացնում է անձի վարքի դերային մոդելների ձևավորման սոցիալական դետերմինանտների երեք մակարդակ: Ըստ հեղինակի, անձի վարքի դերային մոդելը նախ ձևավորվում է նրա սոցիալական դիրքին թելադրվող համապատասխան սպասումներից: Հաջորդիվ, անձի վարքի առանձնահատկությունները որոշվում են դերային պարտականություններով: Վերջապես անձի վարքը որոշվում է իր դերային պարտականությունների մասին նրա սեփական վերաբերմունքի և այլ անձանց վերաբերմունքի համատեղելիությամբ: Այսպես վարքի դերային մոդելները յուրացվում են անձի կողմից և որոշում նրա վարքային մարտավարությունը: Անձի վարքային առանձնահատկությունները որոշող դետերմինանտների շարքին են դասվում նաև մոդայիկ սոցիալական տենդենցները: Կնոջ արտաքին կերպարին վերագրվող սոցիալ-մշակութային կարծրատիպերը նույնպես ձևավորվում են մոդայիկ սոցիալական տենդենցների ազդեցության ներքո: Այսպիսով, անձի վարքային մոդելների ձևավորման գործընթացում կարևորագույն նշանակություն ունի սոցիալական դերերի երևույթը և դրանց նկատմամբ սոցիալական սպասումները: Այս երևույթներն անձի կողմից յուրացվում են սոցիալական ընկալման միջոցով, որը ներառում է միջանձնային ընկալման, ներխմբային ընկալման և ինքնաընկալման երևույթները: Տվյալ երևույթներն անմիջականորեն կախված են մոդայիկ սոցիալական տենդենցների ազդեցությունից: Այսպես անձի սեփական մարմնակազմի ընկալումը, ինչպես նաև միջանձնային ընկալումը և գնահատումը ձևավորվում է սոցիալ-մշակութային կարծրատիպերի հետ համեմատության արդյունքում:

Սուլոմոն Աշը (1907-1996) անձի վարքային դրսևորումների և ներխմբային ընկալման հարաբերակցության հիմք է համարում սոցիալական կարծրատիպերի երևույթը, որոնք ձևավորվելով տարբեր սոցիալական խմբերում և փոխանցվելով սերնդեսերունդ անձին որոշակի վարքային մոդելների դրսևորում են թելադրում

[60, Էջ 145-146]:

Այսպես սննդային վարքի առանձնահատկությունները նույնպես ավանդաբար փոխանցվում են սերնդեսերունդ և որոշում են անձի վերաբերմունքը սննդի ընդունման գործընթացի նկատմամբ:

Անձի վարքային մոդելների ձևավորման գործընթացի վրա, ինչպես վերը նշվեց, նշանակալի ազդեցություն ունեն նաև անձի ինքնաընկալման և ինքնագնահատման երևույթները:

Ըստ Մալկինա Պիլի՝ անձի ներքին կոնֆլիկտների համակարգը ձևավորվում է նրա արժեքային-դրդապատճառային ոլորտի հիման վրա: Հիմնվելով տվյալ տեսության վրա՝ նա առանձնացնում է ներքին կոնֆլիկտների հիերարխիկ համակարգ, որում կենտրոնական դեր ունի տարբեր հարթություններում անձի ինքնագնահատման մակարդակը [32, Էջ 319- 321]: Այսպես, անձը ինքնագնահատման և ինքնաընկալման միջոցով է պարզում, թե որոնք են իր իրական արժեքները, դրդապատճառները, դիրքորոշումները, կամ ինչպիսին դրանք պետք է լինեն՝ հիշելով իր վարքը տարբեր իրադրություններում: Ընդ որում, ինքնագնահատումը դիրքորոշումների ձևավորման և փոփոխման համար առկա մեխանիզմներից է:

Սոցիալապես թելադրվող կանացի արտաքին կերպարի չափանիշները և անձի ինքնագնահատման հակվածությունը հանգեցնում են այդ չափանիշների հետ ինքնահամեմատության և կախված դրա արդյունքից ու անհատի անձնային հատկանիշներից՝ կարող են դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի շեղումներ առաջացնել:

Դիրքորոշումների ձևավորման գործում մեծ տեղ ունի աշխարհի պատկերը, որն անձի մոտ ձևավորվում է տարբեր առանձին երևույթների և օբյեկտների պատկերներից և գործում է որպես մի ամբողջություն: Աշխարհի պատկերի հիման վրա իրականացվում է իրադրությունների, երևույթների և դրանց անձնային նշանակության կանխատեսում և գնահատում: Ընդ որում անձի մոտ անընդհատ առկա է ենթագիտակցական սպասում, թե ինչ կարող է տեղի ունենալ որոշակի իրավիճակներում: Այսինքն անձն անընդհատ

գտնվում է չգիտակցված իրադրության գնահատման գործընթացում: Այսպիսի վիճակը անվանվում է պերցեպտիվ դիրքորոշում [33, էջ 253]:

Ինչ վերաբերվում է անձի ինքնավերաբերմունքի երևույթին, ապա չնայած այն բանին, որ այն ակտիվորեն ուսումնասիրվում է հոգեբանների կողմից, դրամասին ժամանակակից հոգեբանության մեջ չկա որոշակի միանշանակ մոտեցում: Մարդու վերաբերմունքը սեփական անձի նկատմամբ կարելի է գնահատել որպես ինքնազնահատական, ինքնահարգանք, ինքնընդունում, սեփական անձի նկատմամբ զգացմունքային-արժեքային վերաբերմունք, արժանապատվության զգացում, ինքնաբավության, ինքնահավանության, ինքնարժեքության գաղափար և այլն: Այս ամենի նշանակությունը Ուզնաձեն տեսնում է դիրքորոշումների, Լեոնտը՝ անձնային իմաստի, Մյասիսչևը՝ վերաբերմունքի, Ռոզենբերգը՝ ատիտյուդի, Կոնը՝ սոցիալական դիրքորոշման և Ռուբինշտեյնը՝ զգացմունքի մեջ: Որոշակի տերմինաբանության բացակայության պայմաններում նշված տերմինների մեծամասնությունը հաճախ օգտագործվում է որպես ինքնավերաբերմունք եզրույթի հոմանիշ: Սակայն առավելապես օգտագործելի տերմինները, որոնք բացահայտում են անձի վերաբերմունքն ինքն իր հանդեպ՝ գլոբալ ինքնազնահատական է, ինքնահարգանքը, ինքնավերաբերմունքը և զգացմունքային-արժեքային վերաբերմունքը սեփական անձի նկատմամբ:

Այս առումով հոգեբանության մեջ առավել կայունացել է գլոբալ ինքնազնահատական տերմինը (self-esteem). Ինքնազնահատական բառը ծագում է լատիներեն «aestimare» տերմինից, որը նշանակում է մարդու կողմից որևէ մեկի նշանակության գնահատում: Վերջապես գերմաներեն լեզվում «Selbswertgefühl» նշանակում է արժեքավորության զգացում, որն անձնունի ինքն իր հանդեպ:

Գլոբալ ինքնազնահատականի երևույթը հոգեվերլուծության առարկա է դարձել տասնիններորդերորդ դարի հոգեբան Ու. Ջեյմսի աշխատանքների շնորհիվ: Այս տերմինը նույնականացվում է ինքնաճանաչման տերմինի հետ: Ինքնազնահատականը իրենից ներկայացնում է անձի դրական կամ բացասական պատերազմները սեփական անձի մասին, ինչպես նաև սեփական

հնարավորությունների դրական կամ բացասական գնահատումը: Որպես անձի ինքնաճանաչման և ինքնագիտակցման երևույթի նշանակությունը բացահատող տերմին անգլերեն լեզվում կիրառվում է «self-evaluation» հասկացությունը:

Ինքնահարգանքը՝ որպես դիրքորոշումային երևույթ, կարելի է դիտարկել որպես անձի սեփական արժեքավորության դիրքորոշում, որը զգացմունքային բնույթ ունի: Անձի ինքնահարգանքի աստիճանից է կախված նրա դիրքորոշումների բնույթը: Ինքնահարգանքի ցածր մակարդակը որոշիչ է սննդային վարքի շեղումներ առաջացնող դիրքորոշումների ձևավորման գործում: Այն հանգեցնում է անձի ինքնագիտակցման և ինքնագնահատման ցածր մակարդակի, ինչի արդյունքում բարձրանում է անձի համար սոցիալական գնահատականների նշանակալիությունը, հետևաբար նաև սոցիալ - մշակութային կարծրատիպերին ամեն գնով համապատասխանելու հակվածությունը: Այս տեսդեցքը արտահայտվում է մի կողմից կանացի արտաքին կերպարին թելադրվող չափորոշիչներին, մյուս կողմից՝ անհատի առաջնային խմբում գործող սննդային վարքի ավանդույթներին համապատասխան վարքային դիրքորոշումների ձևավորման մեջ: Ինքնավերաբերմունքի եզրույթի էության մասին համեմատաբար նոր մոտեցում է առաջարկել Ա. Մ. Կոլիշկոն, որը եզրույթը բաժանում է երեք բաղկացուցիչների: Դրանք են.

- Գործունեությունը,
- Անձը՝ որպես գործունեության սուբյեկտ,
- Ինքնագիտակցումը՝ որպես անձի իմաստային կորիզ:

Ընդ որում, Կոլիշկոն որպես ինքնավերաբերմունքի երևույթի հիմնական գործառույթ տեսնում է դրա պոտենցիալում սոցիալական գործունեության դաշտ և որպես դրա արդյունք՝ անձի կողմից այս կամ այն տիպի վարքի դրսևորման պատրաստությունը: Ինքնավերաբերմունքի և ինքնաընկալման երևույթի վրա ազդում է սեփական անձի նույնականացումը որոշակի խմբի հետ: Անձը փորձում է նույնականացել իրեն այն խմբերի հետ, որոնց պատկանելը օգնում է իրեն կողմնորոշվել սեփական գոյության իմաստային հարցերում [16, էջ 102-104]: Այս պարագայում սննդային

վարքի շեղումների առաջացումը դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտանմիջականորեն կապված է առաջնային սոցիալական խմբում գործող սննդային վարքի առանձնահատկությունների հետ: Եթե անհատի ընտանիքում սննդի ընդունման գործընթացին գերնշանակություն է տրվում, ապավերջինը կյուրացնի այդ վարքային մոդելը: Եվ հակառակը. եթե անհատի ընտանիքը ասքետիզմի գաղափարախոսության հետևորդ է՝ մեծ է հավանականությունը, որ անհատը կդրսևորի ասքետիզմի բնորոշ սննդային վարքածև և նրա մոտկառաջանասննդային վարքի սահմանափակումային շեղում:

Սոցիալական նույնականացումը՝ որպես անձի կողմից շրջապատող աշխարհի և սեփական «ես»-ի ընկալման մեխանիզմ, արտահայտվում է սոցիալական փոխազդեցության այնպիսի սուբյեկտների ընտրողականության մեջ, որոնց հետ շփումը հաստատում է անձի կարծիքն իր մասին: Այսպիսով անձն ընտրում է շփման համար այնպիսի սուբյեկտներ, որոնք իր մասին ունեն միևնույն կարծիքը ինչ-որ ինքն անձամբ [16, էջ 100-103]:

Ժամանակակից հոգեբանության մեջ ինքնագիտակցման, ինքնաընկալման գաղափարը կարելի է բացատրել որպես մարդու կողմից իր սեփական զգացմունքների և մտքերի, վարքի դրդապատճառների, արարքների իմաստի բացահայտման և սեփական բնավորության առանձնահատկությունների բացատրման, ինչպես նաև սեփական անձի և աշխարհի հանդեպ վերաբերմունքի համակարգ:

Յուրմանիստական հոգեբանության մեջ ինքնաընկալումը դիտարկվում է որպես անձնային աճի և ինքնիրացման նախապայման: Սակայն, ի տարբերության հոգեվերլուծական մոտեցման, հուրմանիստական հոգեբանության մեջ շեշտավորվում է ինքնաընկալման զգացմունքային, զգայական, ապրումակցային, այլ ոչ թե ռացիոնալ բովանդակությունը: Ինքնաընկալումը սերտորեն կապված է ինքնընդունման, դրական ինքնագնահատականի հետ և անձին տալիս է առավել լիարժեք ապրելու հնարավորություն: Սննդային վարքի առանձնահատկությունների և շեղումների առաջացման գործում անձի զգացմունքային տեսանկյունից ինքնաընկալման և ինքնագնահատման ցածր մակարդակը՝



առաջ անալ ով սոցիալական կարծրատիպերի հետ համեմատության քաղաքական արդյունքներից, դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ կարող են հանգեցնել սեփական մարմնի նկատմամբ ատելության, այն մերժելու միտմանը: Այս պարագայում սննդային վարքի կտրուկ փոփոխությունների և շեղումների առաջացումը կարելի է դիտարկել որպես ինքնադեստրուկտիվ վարքի դրսևորում:

Ռ. Ֆրագերն ու Ջ. Ֆադիմանը անձի զարգացման առողջ ձգտումը չեն դիտարկում որպես ճնշող ուժ, որը ջնջում է իր ճանապարհին ամեն ինչ: Անդրադառնալով Ռոջերսի գաղափարախոսությանը՝ հեղինակներն այն տեսնում են որպես գերակայող և դրդիչ ուժ, որն ազատ գործում է և չի թուլանում ո՛չ անցյալի իրադարձությունների, ո՛չ էլ ներկա դիրքորոշումների ազդեցությունները: Ռոջերսի համար մարդու ինքնիրականացման տենդենցը ոչ թե մյուսներին հավասար որևէ մի դրդիչ է, այլ կենտրոնական երևույթ է, որի շուրջը ձևավորվում են անձի վարքի ձևավորման և դրսևորման այլ դրդիչները [82, էջ 350-356]:

Ինչպես պարզ է դառնում՝ գոյություն ունեն ինքնաընկալման հասարակական և անձնային դետերմինանտներ, որոնք ընկած են ինչպես արտաքին ազդեցությունների, այնպես էլ անձի ներքին հոգեկան ակտիվության հարթություններում:

Ինքնաընկալման և ինքնահարգանքի ձևավորման համար կարևոր նշանակություն ունի ինքնահաստատման երևույթը: Այն կարող է դիտարկվել որպես ինքնազնահատականի սոցիալ-հոգեբանական ասպեկտ: Ըստ Ռուբինշտեյնի, երեխայի կյանքում մարդկանց վերաբերմունքն իր հանդեպ որոշում են նրա վերաբերմունքը իր անձի նկատմամբ և նրա ինքնաընկալումը: Ինքնահաստատումը և բարձր ինքնազնահատական ունենալու անձի ձգտումը պայմանավորում է անձի գործունեության ուղղվածությունը և հանդիսանում է ինքնահաստատման նախապայման [16, էջ 315-316]:

Այսպես ինքնաընկալման և ինքնազնահատականի ցածր մակարդակի արդյունքում դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ առաջացող ինքնահաստատման ձգտումը հանգեցնում է կանացի արտաքին

կերպարին համապատասխանելու ցանկությանը թելադրված սենդային վարքի խիստ սահմանափակումային շեղման առաջացմանը:

Ձ. Նեյմերն ու Մ. Ռեյաչայդը անձի ինքնագնահատականի վերաբերյալ ունեն հետևյալ մոտեցումը՝ անձի այն հիշողությանը, որոնք համապատասխանում են սեփական անձի մասին իր պատկերացումներին, առավել հեշտորեն են ընդունվում և պահպանվում, քան նրանք, որոնք հակասության մեջ են մտնում այդ պատկերացումների հետ [98, էջ 562–569]:

Դ. Բեմը անձի գլոբալ ինքնագնահատականին հատուկ նշանակություն է տալիս:

Ըստ հեղինակի, գլոբալ ինքնագնահատականի շնորհիվ անձի դրական ինքնաընկալումը պահպանվում է նույնիսկ, երբ արտաքին միջավայրի հետ փոխներգործության որոշ ասպարեզներում անձի որոշ որակները և կարողությունները թերի են [64, էջ 1-62]:

Սենդային վարքի կտրուկ փոփոխությունների արդյունքում դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջկա մարմնի կերպարի փոփոխությունների նկատմամբ սոցիալական բարձր գնահատականները բարձրացնում են նրա ինքնագնահատականը և ինքնաընկալման մակարդակը: Հետևաբար սենդային վարքի սահմանափակումային դրսևորումները տվյալ անհատի մոտ ֆիկսվում են որպես ցանկալի վարքածև և վերածվում են սենդային վարքի սահմանափակումային շեղման: Նման կերպ զարգանում է նաև սենդային վարքի էքստերնալ շեղումը, երբ կախված արտաքին միջավայրում գործող սենդային վարքի մասին պատկերացումներից՝ անձը կտրուկ փոփոխության է ենթարկում սեփական սենդային վարքը, ձգտելով ցուցաբերել սոցիալական ադապտացման բարձր մակարդակ և այդ միջոցով պահպանել ինքնագնահատականի կայունությունը:

Կոլումբիայի Համալսարանի Պրոֆեսոր Ջորջ Բոննանոն՝ ուսումնասիրելով անձի ինքնագնահատականի և դիրքորոշումների երևույթները, եզրակացրեց,- «Ակնհայտ է, որ անձն ունի ինքն իր մասին լավ կարծիք ունենալու առեղծի ցանկություն և կարիք: Այսպիսով անձը՝ ընտրելով իր սոցիալական փոխներգործության օբյեկտներին և դրանց նկատմամբ ձևավորելով որոշակի

վարքային և դիրքորոշումային մոդելներ, առաջին հերթին առաջնորդվում է այդ կարիքի բավարարման հնարավորությամբ» [65, էջ 984–998]:

Հոգեբաններ Շմիթս ու Ալիքը՝ ուսումնասիրելով անձի գլոբալ ինքնագնահատականի և մշակութային պատկանելիության կապը, գալիս են այն եզրակացության, որ անձի ինքնարժեքման երևույթի արմատները սերում են հենց պատմամշակութային պատկանելության գործոնից: Գնահատելով սեփական անձը՝ անհատը հակված է ենթագիտակցորեն գնահատել իր արմատները [103, էջ 623–642]:

Այս ենթատեքստում հետաքրքիր է նաև Ռոյ Բաումեստրի մոտեցումը անձի ինքնաընկալման և ինքնագնահատականի երևույթներին: Բաումեստրը կարծում է, որ բարձր ինքնագնահատականի տեր անհատները ավելի հակված են զայրույթի պոռթկումների, երբ նրանց ինքնաընկալման կոնցեպցիան կասկածի տակ է առնվում [62, էջ 96-101]:

Այսպիսով, անձի ներքին և սոցիալական դիրքորոշումների ազդեցությունը նրա ինքնագնահատականի, ինքնաընկալման և վարքային մարտավարությունների ձևավորման հիմք են հանդիսանում: Ինչպես պարզ դարձավ դրանք իրարաբուխ երևույթներ են, քանի որ ինչպես անձի դիրքորոշումներն են ազդում նրա վարքային մարտավարությունների ձևավորման և ինքնագնահատականի վրա, այնպես էլ անձի ինքնաընկալումն ու ինքնագնահատականը կարող են ազդել նրա մոտ որոշակի դիրքորոշումների և դրանց համապատասխան վարքային մոդելների ձևավորման վրա: Բազմաթիվ հոգեբաններ անհերքելի են համարում անձի ինքնագնահատականի և նրա պերճեկցիանիստական հակումների կապը: Ինչպես օրինակ՝ սենդային վարքաձևի խեղաթյուրված դիրքորոշումների հիմքում շատ հեղինակներ տեսնում են և՛ անձնային ուղղվածության և՛ սոցիալապես պարտադրվող պերճեկցիանիզմի երևույթները:

Ըստ Սթրոբերի, անձի պերճեկցիանիստական հակումները՝ արտահայտվելով որոշակի վարքաձևում, ծառայում են երեք նպատակների, որոնք են անձի կատարյալ թվալու պահանջմուքը,

անկատար, կամ թերի չթվալու պահանջմունքը և իսկապես թերիություններից խուսափելու պահանջմունքը: Քանի որ պերֆեկցիանիստ անհատն ունի գնահատման գերնախանձախնդիր համակարգ, հետևաբար ամենաչնչին անհաջողությունը գնահատում է որպես սարսափելի անհաջողություն և նրա մոտ անհաջողության վարքային դիրքորոշումներն ամրապնդվում են: Ավելին, այսպիսի անձը ցանկացած ուսուցողական գործընթաց գնահատում է որպես սեփական թերիության, կամ ոչ կատարյալ լինելու ապացույց [107, էջ 354-373]:

Սննդային վարքի և դրա շեղումների ասպարեզում բազմաթիվ առաջատար մասնագետներ պերֆեկցիանիզմի երևույթը դիտարկում են որպես անձնային հատկանիշ, որը սննդային վարքի շեղումների առաջացման կենտրոնական բնորոշիչներից է [63, էջ 416-419], [84, էջ 301-327], [66, էջ 387-392]:

Ավելին, սննդային վարքածնի շեղումների մասին բազմաթիվ առաջատար մասնագետների տարիների հետազոտությունները, հանգեցրել են այն եզրակացության, որ սննդային վարքի խեղաթյուրված մոդելների առաջացումն անմիջականորեն կապված է ֆիզիկական գրավչության անիրատեսական կարծրատիպերի հետ, որոնք սոցիալապես ընդունելի նորմերն են համարվում [85, էջ 15-34]:

Անձի սննդային վարքի դրսևորումների շեղումները սոցիալական կարծրատիպերին համապատասխանելու հոգեբանական պատրաստության բարդ գործընթացի արդյունք են հանդիսանում: Իսկ ինչպես հայտնի է՝ հոգեբանական պատրաստությունը անվերջ և անընդհատ գործընթաց է: Ժամանակի պահանջներին համապատասխան՝ փոխվում է միայն նրա բովանդակությունը [8, էջ 80-86]:

Անշուշտ, հարմարումը բարդ հոգեֆիզիոլոգիական գործընթաց է, և այն տեղի է ունենում մեկը մյուսի շարունակականությունը կազմող հոգեֆիզիոլոգիական գործընթացների մասնակցությամբ: Այս տեսանկյունից հետաքրքրական է գերմանացի հոգեբանների կողմից իրականացված հետազոտությունը անձի արտաքին տեսքի և նրա ինքնաընկալման կապի վերաբերյալ: Այս հետազոտության արդյունքում հեղինակները եկել են այն եզրակացության, որ արտաքին ազդակների միջև գոյություն ունեն գերադասելիներ,

որոնց հատկանիշները առավել հարմար են տեսողական համակարգի  
ընկալման համար [44, Էջ 187-188]:

**ԳԼՈՒԽ 2. ԱՆՃԻ ԻՆՔՆԱՐԱՆԿԱԼ ՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅ ԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ  
ՄԱՆԴԱՅԻՆ ՎԱՐՔԻ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԱԿՈՒՆՔ**

**2.1 Սոցիալական աֆրոցեսիայի և ինքնաընկալման ազդեցությունը  
աննդային վարքի շեղումների առաջացման գործընթացի վրա**

Անձի սոցիալական կենսագործունեության հիմքում ընկած երևույթների էության ուսումնասիրությունները դարավոր պատմություն ունեն: Անձի սոցիալականացման, միջանձնային և խմբային հարաբերությունների, սոցիալական խմբում անձի ինտեգրման, տարաբնույթ սոցիալական ազդեցությունների երևույթներն ուսումնասիրվել են ու շարունակում են հետաքրքրության առարկա մնալ ինչպես հոգեբանների, այնպես էլ սոցիոլոգների, փիլիսոփաների համար:

Փոխակերպվող հասարակության մեջ առկա տարբեր իրավիճակների ներգործության հետևանքով մարդկանց բնորոշ են վարքի կտրուկ փոփոխությունները: Վերջինները նույնպես հանդիսանում են անձի սոցիալական և անձնային ինքնաընկալման որոշիչ գործոններ: Մի կողմից սոցիալական ընկալման երևույթի օգնությամբ է անձն ընկալում, գնահատում, ընդունում, կամ հերքում սոցիալական պայմանականությունները և պահանջները, որոնք անհրաժեշտ են նրա սոցիալական ինտեգրման, կամ ադապտացիայի համար, մյուս կողմից՝ էս-ը պահպանելու, ինքնիրացվելու, ինքնահաստատվելու և կրկին անգամ արդյունավետ կերպով սոցիումի սահմաններում ադապտացվելու համար անհրաժեշտ նախապայման է հանդիսանում սեփական էս-ը սոցիումից առանձնացնելու, այն որոշակիորեն գնահատելու և այդ գնահատականների վրա հենվելով սեփական տեղը սոցիումում գտնելու գործընթացները [4, էջ 188-193], [5, էջ 57-75], [6, էջ 91-98]:

Տվյալ երևույթների ուսումնասիրությունն իհարկե ընդհանուր հետաքրքրություն է ներկայացնում անձի սոցիալականացման խնդիրների էությունը հասկանալու համար: Սակայն դրանց հետազոտությունը հատկապես հետաքրքիր է իրենց

պաթուլ ոգիկ դրսևորումներում՝ որպես անձի մոտ դիրքորոշումային և վարքային շեղումների, մասնավորապես սննդային վարքի շեղումների հարուցիչներ:

Տվյալ խնդիրն առավել պարզ հասկանալու համար հարկ է նախ պարզաբանել, թե սոցիալական ընկալման և անձի ինքնաընկալման եզրույթները ինչպիսի երևույթներ են ներառում:

Սոցիալական ընկալման, կամ սոցիալական պերցեպցիայի երևույթը ենթադրում է անհատների կողմից սոցիալական օբյեկտների ընկալում, գիտակցում և գնահատում: Այս տերմինի հեղինակն է ամերիկացի հոգեբան Ջ. Բրյուները: Բրյուներն առաջին անգամ այն կիրառել է 1947 թվականին՝ մատնանշելու համար ընկալման սոցիալապես պայմանավորվածությունը և դրա կախվածությունը ոչ միայն օբյեկտի բնութագրական գծերից, այլ և սուբյեկտի նախկին փորձից, նպատակներից, և արժեքներից: Ներկայումս տերմինն օգտագործվում է մատնանշելու համար սուբյեկտի կողմից ինչպես նյութական աշխարհի, այնպես էլ սոցիալական օբյեկտների ընկալումը:

Ռ. Մոկչանցևը և Ա. Մոկչանցևան պնդում են, որ սոցիալական պերցեպցիայի, մասնավորապես այլ անձանց և խմբերի ընկալումը անհատի կողմից անմիջականորեն կապված է սուբյեկտի ինքնագիտակցման հետ և նրա հետ, թե ինչպես է սուբյեկտն ինքն իրեն ընկալում և գնահատում՝ ինչպես որպես անհատ, այնպես էլ որպես սոցիալական խմբի ներկայացուցիչ: «Մարդը հակված է սեփական սոցիալական խմբի դրական գնահատման, ինչը նպաստում է սեփական անձի դրական գնահատմանը», - ասում են հեղինակները [35, էջ 82]:

Այսպես, սոցիալական պերցեպցիայի երևույթը ներառում է անձի կողմից ինչպես խմբային հարաբերություններն ու ազդեցությունները, այնպես էլ խմբում սեփական անձի դերի ու դիրքի մասին պատկերացումներն ու վերաբերմունքները: Այսպես սոցիալական պերցեպցիայի որպես երևույթի մասին խոսելիս պետք է ինկատի ունենալ բոլոր հնարավոր օբյեկտների և սուբյեկտների հարաբերություններն ու վերաբերմունքները, ինչպես նաև որպես սուբյեկտը նդունել ոչ միայն դրանցում ներգրավված անձին, այլ և

սոցիալական խմբերը: Այսպես, երկու խմբերի միջև վերաբերմունքների և հարաբերությունների համակարգը, անձի սոցիալական դիրքի նկատմամբ խմբի վերաբերմունքը, անհատների և խմբերի կողմից կարծրատիպերի և ավանդույթների ձևավորումն ու ընդունումը նույնպես դասվում են սոցիալական պերցեպցիայի երևույթի շարքին: Յետևաբար սոցիալական պերցեպցիայի երևույթի շրջանակում կարելի է դիտարկել նաև անհատի կողմից նրա սոցիալական խմբերում գործող սննդային վարքի և կանացի արտաքին պատկերին վերագրվող սոցիալ - մշակութային չափորոշիչների նկատմամբ վերաբերմունքի, կարծրատիպերի և ավանդույթների յուրացումը, ինչի արդյունքում նաև որոշակի սննդային վարքի մոդելների ձևավորումը:

Ռուս հոգեբաններ Բելինսկայան և Տիխոմանդրիցկայան 2003 թվականին տպագրված սոցիալական հոգեբանության դասագրքում՝ խոսելով սոցիալական ընկալման, կամ սոցիալական պերցեպցիայի մասին, նշում են, որ տվյալ երևույթի հետազոտությունների ակունքները տանում են դեպի սոցիալական կոգնիտիվիզմ՝ սոցիալական ազդակների նկատմամբ սուբյեկտի հակազդումների ուսումնասիրություն: Այստեղ սոցիալ - հոգեբանական գործընթացներն ու երևույթները ընկալվում և բացատրվում են դրանցում ներգրավված սուբյեկտի սուբյեկտիվ արտացոլման տեսանկյունից: Կոգնիտիվիզմի տեսանկյունից սոցիալ - հոգեբանական երևույթները բաժանված են երկու տեսակների.

ա/ սոցիալ - հոգեբանական երևույթներ, որոնք դիտարկվում են որպես անմիջական սոցիալական փոխներգործություն, ինչպես օրինակ անձի դիրքը խմբում, լիդերությունը, խմբային ազդեցությունը, կոնֆլիկտը և այլն,

բ/ սոցիալ - հոգեբանական երևույթներ, որոնք արտացոլում են վերջինների նկատմամբ անձի սուբյեկտիվ վերաբերմունքները, ինչպես օրինակ՝ սեփական անձի սոցիալական դիրքի մասին պատկերացումները, լիդերության ընկալումը և գնահատումը, խմբային ազդեցության ապրումը, կոնֆլիկտի պատճառների վերլուծությունը և այլն:

Սոցիալական ընկալման մասին գաղափարը այստեղ ներառում է



հենց անձի սուբյեկտիվ վերաբերմունքների համակարգը: Ընդ որում՝ ըստ Ե. Բելինսկայայի և Օ. Տիխոմանդրիցկայայի, սոցիալական պերցեպցիայի երևույթը ներառում է ոչ միայն խմբային, այլ և միջանձնային ընկալման ոլորտը [12, էջ 146-148]:

Մ. Ենիկեևը սոցիալական պերցեպցիայի երևույթը բացատրում է որպես սոցիալապես պայամանավորված սոցիալական օբյեկտների ընկալում: Այն, ըստ հեղինակի, իրականացվում է կազուալատրիբուցիայի միջոցով: Այս տերմինն իր հերթին բացատրվում է որպես մարդկանց վարքի պատճառների և դրդապատճառների սուբյեկտիվ բացատրություն, ինչպես նաև նրանց անձնային հատկանիշների սուբյեկտիվ վերլուծություն: Ըստ հեղինակի՝ այս գործընթացում ընկալվող օբյեկտը նույնպես պասիվ կարգավիճակում չէ: Նա ձգտում է որոշակի տպավորություն, «իմիջ» ստեղծել սուբյեկտի աչքերում, որը կհամապատասխանի սոցիալական սպասումներին և առավելապես շահավետ կներկայացնի իր անձը հասարակության աչքերում: Ենիկեևը համոզված է, որ սոցիալական պերցեպցիայի երևույթը հակված է կարծրատիպայնացման: Տարատեսակ շտամպերը հանգեցնում են միջանձնային փոխընկալման գործընթացի դեֆորմացման և ոչ համարժեք վերլուծությունների ու գնահատումների [20, էջ 240-241]:

Այսպիսով, դիտարկելով սոցիալական ընկալման կամ պերցեպցիայի երևույթը և պարզաբանելով դրա էությունը՝ հասկանում ենք, որ այն հանդիսանում է անձի սոցիալական փոխներգործությունների հիմքը: Սոցիալական օբյեկտների և երևույթների ընկալումը, գնահատումը և համապատասխան վերաբերմունքների, դիրքորոշումների ու վարքային մոդելների ձևավորումը կայանում է հենց սոցիալական պերցեպցիայի երևույթի սահմաններում: Տվյալ երևույթի շրջանակում են ձևավորվում նաև անձի կողմից մարմնի պատկերի նկատմամբ գործող սոցիալական կարծրատիպերի ընկալումը և գնահատումը, ինչն իր հերթին համակցվելով անձի ինքնաընկալման, ինքնավերաբերմունքի, ինքնագնահատականի և սեփական մարմնի պատկերի գնահատման մակարդակի հետ՝ ձևավորում է համապատասխան սննդային վարքի մոդելներ, որոնք կարող են լինել ինչպես

Նորմայի սահմաններում, այնպես էլ նորմայից շեղված: Այսպիսով, տվյալ երևույթների սոցիալ-հոգեբանական ակունքների առավել պարզ պատկերացման համար հարկ է պարզաբանել նաև այնպիսի երևույթների էությունը, ինչպիսիք են անձի ինքնաընկալումը, մարմնի պատկերի նկատմամբ վերաբերմունքների ձևավորումն ու նշանակությունը և դրանց արդյունքում ձևավորված անձի անձնային և սոցիալական ինքնագնահատականը:

Այսպիսով, մարդու մարմնի և նրա ինքնաընկալման նշանակությունը բազմակողմանիորեն հետազոտվել է բազմաթիվ հեղինակների կողմից և շարունակում է արդիական լինել առայսօր: Մարդու մարմնի պատկերի և անձի սոցիալականացման գործընթացում դրան նշանակություն մասին հարյուրավոր հետազոտություններ կան: Այս երևույթի պատմությունը ներառում է հոգեբանների, ֆիզիոլոգների, սոցիոլոգների, փիլիսոփաների ուսումնասիրություններ:

Գերմանացի գիտնականներ Դ. Վասկուլևսկու և Պ. Վան Դեր Ռիեթը գտնում են, որ մարդու մարմինը, կամ ֆիզիկական անձը, իր կենսագործունեության և սոցիալական կյանքի տարբեր ասպարեզներում հանդես է գալիս և՛ որպես գործունեության օբյեկտ և՛ որպես սուբյեկտ: Ընդ որում այս երկու գաղափարներն իրարաբուխ անբաժանելի են [115, էջ 487–513]:

Մարդու մարմնի պատկերի և դրա սոցիալ-հոգեբանական նշանակության մասին պատմական հետազոտությունների շարք է իրականացրել Սեյմուր Ֆիշերը՝ 1958 և 1968 թվականներին ներկայացնելով «մարմնի պատկերի սահմանների» վերաբերյալ իր տեսությունը: Տեսությունը լույս է սփռում անձի կողմից սեփական մարմնի պատկերի ընկալման մասին պատկերացումների օբյեկտիվության վրա: Այն մինչև օրս նշանակալի դեր ունի մարմնի պատկերի ընկալման խեղաթյուրումների բացահայտման ասպարեզում [81, էջ 3-20]:

Ֆիշերի տեսության հիմնաքարն է հանդիսանում այն գաղափարը, որ անձի մարմնի պատկերի և ինքնաընկալման արմատները գտնում են դեպի խոր մանկություն, որտեղ երեխան յուրացնում է ծնողի վերաբերմունքը օրինակ սննդի, դրա ընդունման գործընթացի,

սեփական մարմնի նկատմամբ և հասուն տարիքում այդ վերաբերմունքը պրոեկտում է դեպի սեփական մարմինը: Այսպես, ըստ Ֆիշերի, երեխայի ֆիզիկական ինքնագնահատականը ձևավորվում է ծնողների ինքնագնահատականի արտացոլմամբ: Ս. Ստեպանովը երեխայի ես կոնցեպցիայի ձևավորման հիմքում տեսնում է ծնող-երեխա և երեխա-ուսուցիչ փոխհարաբերությունները: Իր հանրամատչելի հոգեբանական հանրագիտարանում Ստեպանովն ասում է,- «Այն երեխաների մոտ, ում ուսուցիչը նախապես վերաբերվում է որպես տաղանդավոր, բարձրանում է ինքնագնահատականը և լավանում էս կոնցեպցիան»: Այս տեսակետը հատկապես իրավացի է, եթե ուսուցիչը երեխայի համար նշանակալի անձ է հանդիսանում: Միևնույն մեխանիզմով է աշխատում նաև ծնող-երեխա հարաբերությունների արդյունքում երեխայի ինքնաընկալման ձևավորումը: Մարդու վարքը նրաներաշխարհի, դիրքորոշումների, արժեքների և իդեալների արտաքին արտացոլումն է: Այսպես մարդու վարքում արտացոլվում են նրա անհատական հոգեբանական հատկանիշները՝ բնավորության գծերը, զգացմունքային կայունության աստիճանը, հակումները և այլն [50, էջ 454-455]:

Ֆ. Շոնցը 1969 թվականին տպագրած իր «Մարմնական կենսափորձի պատկերավոր և գիտակցական ասպարեզները» աշխատանքում միահյուսում է մարմնի պատկերի մասին անձի պատկերացումները այն զգացմունքային, կամ հուզական փորձի հետ, որն անձը կրում է՝ դրանք տեսնելով որպես միմյանցից բխող երևույթներ [104, էջ 149–169]:

1990-ականներին ամերիկացի հոգեբանները մարմնի պատկերի նկատմամբ վերաբերմունքի ասպարեզում լայնածավալ հետազոտություններ իրականացրեցին՝ բացահայտելով, անձի վարքային և դիրքորոշումային փոփոխությունները կապված ալ աստիկ վիրահատությունների արդյունքում մարմնի պատկերի փոփոխությունների հետ: Նրանք հայտնաբերեցին, որ ալ աստիկ վիրահատությունների արդյունքում արտաքին փոփոխությունների ենթարկված անձի մոտ փոփոխության են ենթարկվում ինչպես աշխարհահայացքը, այնպես էլ վարքային դրսևորումները: Այսպիսի մարդու ինքնագնահատականը կտրուկ բարձրանում է մասնավորապես

այն դեպքերում, երբ անձը սևեռուն կերպով կենտրոնացած է սեփական մարմնի պատկերի և դրա թերու թյունների նկատմամբ [102, էջ 23-36]:

Մարմնի պատկերը և դրանով գոհունակության աստիճանը անձի գլոբալ ինքնագնահատականի հիմք են հանդիսանում: Այն մասնավոր նշանակություն է ձեռք բերում շփման գործընթացում և որոշիչ է սոցիալական միջավայրում անձի ինքնագագացողության համար: Ըստ Քլարկի և Թիգեմանի՝ սեփական մարմնակազմի նշանակությունը անձի արժեքային համակարգում ձևավորվում է մանուկ հասակում, ինչի հիմքում առաջին հերթին ընկած է ծնողների, հասակակիցների և մասսայական լրատվամիջոցների ազդեցությունը: Ըստ հեղինակների, բարակիրանության իդեալի միջազգայնացման ազդեցությունը երեխաների մոտ սեփական մարմնի բացասական պատկերի ընկալման առաջացման պատճառ է դառնում [72, էջ 1124-1134]:

Այսպես մարմնի պատկերի նկատմամբ դժգոհության բարձր մակարդակը դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ կարող է հանգեցնել թերարժեքության սուր բարդության, սոցիալական դեզադապտացիայի: Որպես խնդրի լուծման միջոց՝ վերջինս դիմում է սննդային վարքի կտրուկ փոփոխությունների:

Եթե այդպիսի փոփոխությունների արդյունքում անձի սոցիալական ադապտացիայի և ներխմբային շփման որակն ու մակարդակը բարձրանում են, ապա այդպիսի վարքածևիյունրացումը կարող է հանգեցնել դրահետագազարգացմանը և վերաճել սննդային վարքի շեղումների:

Մարմնի պատկերի նշանակության վերաբերյալ գոյություն ունեցող տեսությունների թվում է սոցիալ-մշակութային տեսությունը, որի համաձայն գոյություն ունեն տարբեր լրատվամիջոցների կողմից քարոզվող և անհատների կողմից միջազգայնացվող սոցիալ-մշակութային գեղեցկության չափորոշիչներ: Դրանք որոշիչ դեր ունեն դեռահաս աղջիկների և կանանց մոտ սեփական մարմնի պատկերի նկատմամբ գոհության, կամ դժգոհության և դրանցից բխող սոցիալականացման որակի ասպարեզում:

Սորադի և Յուլիանոսի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն կանայք ում մոտ սեփական մարմնի պատկերի գնահատման օբյեկտիվության մակարդակը բարձր է, առավել հակված են դրանկատմամբ դժգոհության [96, էջ 377–398]:

Այս երևույթը հավանաբար պայմանավորված է նրանց չափազանց խիստ կենտրոնացմամբ սեփական մարմնի պատկերի և դրա թերությունների վրա: Սոցիալական գործոնների ազդեցության ներքո մարմնի պատկերի նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորումը, չնայած փաստ է, սակայն այն իրավացի է ոչ բոլորի համար: Ինչպես օրինակ, Սթրիգել-Մուրն ու Կաչելինը հարում են այն տեսակետին, որ մարմնի պատկերի նկատմամբ ցածր կենտրոնացում ունեցող կանայք առավել ասես դրական վերաբերմունք ունեն դրանկատմամբ և յուրովի շրջանցում են կատարյալ մարմնի սոցիալ-մշակութային կարծրատիպերի ու քարոզի ազդեցությունները [108, էջ 85–108]:

Այսինքն որքան կինն ավելի քիչ է կենտրոնացած սեփական մարմնի և դրա թերությունների վրա, այնքան նրա վերաբերմունքը սեփական մարմնի և դրա պատկերի նկատմամբ ավելի դրական է և այնքան նա քիչ է հակված կատարյալ մարմին քարոզող սոցիալական ազդեցություններին ենթարկվելուն:

Յետաբոլոր է խնդրի առնչությամբ Դուրկինի, Պաքսթոնի և Սորբելլոյի մոտեցումը: Սոցիալական և սոցիալ-մշակութային ազդեցությունների դերը գեղեցկության չափանիշների ձևավորման գործում սկսվում է ոչ միայն լրատվամիջոցների, հեռուստատեսության, ամսագրերի, ֆիլմերի, և ինտերնետային կայքերի ազդեցությունից, այլև նախևառաջ խաղալիքների արտադրության ասպարեզից: Ըստ հեղինակների, ժամանակակից տիկնիկները երեխային ներկայանում են անիրատեսական մարմնական կառուցվածքով, որն իր հերթին սերմանում է խեղաթյուրված պատկերացումներ գեղեցկության մասին և ավելի ուշ տարիքում հանգեցնում է սեփական մարմնի պատկերի նկատմամբ դժգոհության բարձր մակարդակի: Սեփական մարմնի պատկերի համեմատությունները տիկնիկներից անցնում են հասակակիցներին և մեդիա-աստղերին, որոնց ազդեցությունը առավել ասես

հավանական է այն աղջիկների վրա, որոնք չափազանց մեծ նշանակություն են տալիս դրան [74, էջ 1092–1117]:

Այսօրիական երևույթների առաջացումը դեռահասության, կամ վաղ պատանեկության շրջանում հանգեցնում է սննդային վարքի շեղումների առաջացմանը:

Պերվուշինան իր «Ընդհանուր հոգեբանությունում» մեջբերում է Սեչենովին՝ ասելով,- «Գիտակցությունը ինքնագիտակցական ակտի արտացոլումն է: Ինքնագիտակցությունը թույլ է տալիս անձին ոչ միայն արտացոլել արտաքին աշխարհը, այլև առանձնացնելով սեփական անձն այդ արտաքին աշխարհում՝ որոշակիորեն վերաբերվել դրան»:

Այսպես ինքնագիտակցումը ձևավորվում է մարդկանց հետշփման գործընթացում և կապված է մարդու հաջողականության կամ արդյունավետության մասին անձի ընդհանուր պատկերացումների և կարծրատիպերի շրջանակներում սեփական անձի գնահատումից: Ինքնագիտակցման հիմնական ֆունկցիան կայանում է նրանում, որ այն հասուն է դարձնում սեփական գործողությունների դրդապատճառները և հնարավորություն է տալիս որոշակիորեն գնահատելով դրանք՝ հասկանալ սեփական ինքնությունը: Այս պարագայում, եթե գնահատականը չբավարարի անհատին նա կամ կդիմի ակտիվ ինքնկատարելագործմանը, կամ պաշտպանական մեխանիզմների միջոցով այդպիսի տիպի տեղեկատվությունը կարտամղի գիտակցական ուղորտից դեպի ենթագիտակցություն [40, էջ 34]:

Միևնույն հայեցակետին է հարում Պ. Սորոկունը: Ըստ վերջինի՝ անձի սուբյեկտիվ ներաշխարհի արտահայտումը նրա գիտակցությունն է և ինքնագիտակցությունը, որոնց շնորհիվ անձի մոտ ձևավորվում է սեփական կյանքի իմաստը [48, էջ 35]:

Լ. Դ. Ստոլյարենկոյի «Յոգեբանության հիմքունքներ»-ում մենք գտնում ենք այն գաղափարը, որ անձի ձևավորման համար գոյություն ունեն երեք ասպարեզներ՝ գործունեությունը, շփումը և ինքնագիտակցումը: Սեփական անձի մասին պատկերացումները մարդու մոտ անմիջապես չեն հայտնվում, այլ ձևավորվում են կենսագործունեության ընթացքում:

Մեջբերելով Ռ. Ս. Մերլինին՝ հեղինակն ասում է, որ անձի ինքնաընկալման ու գլոբալ ինքնագնահատականի ձևավորման վրա ազդում են չորս հիմնական գործոններ, որոնք են.

ա/ Սեփական անձի արտաքին աշխարհից տարբերվելու գիտակցումը, բ/ Ես-ի գիտակցումը որպես գործունեության սուբյեկտու ալտիվ սկիզբ,

գ/Սեփական հոգեբանական հատկանիշների գիտակցումը, զգացմունքային ինքնագնահատականը,

դ/Սոցիալ-բարոյական ինքնագնահատականը, ինքնահարգանքը, որը ձևավորվում է շփման և գործունեության կուտակված փորձի հիման վրա [51, էջ 237]:

Որքանով ավելի զարգացած է անձի ինքնագիտակցումը, այնքանով նա ավելի անազատ է, քանի որ նրան կառավարում են ներքին արտամղված բովանդակությունները, պայմանական կապերը որոնք ձևավորվել են մանկության տարիքում [16, էջ 35-36]:

Անձի ինքնաընկալման երևույթի առանցքային մաս է կազմում վերաբերմունքը արտաքին աշխարհի և սեփական անձի նկատմամբ: Անձի դրական ինքնաընկալումը կախված է անձի դրական մտածողությունից, որը նույնպես ձևավորվում է մանկության շրջանում: Լայն իմաստով՝ դրական մտածողությունը ենթադրում է անհատի դրական վերաբերմունքը աշխարհի, մարդկանց և սեփական անձի նկատմամբ [1, էջ 49-57]: Հատկապես սուր է անձի ինքնաընկալման, սեփական Ես-ի ինքնագնահատականի ձևավորման գործընթացում դեռահասուն փուլում ինքնավարությունն ստանալու երևույթի նշանակությունը: Պատանեկան տարիքում ինքնուրույնության պահանջմունքը մտնում է նոր, զարգացման ամենաբարձր մակարդակը և հանդես է գալիս որպես ինքնավարության ձգտում, պահանջ [3, էջ 98-100]:

Անձի ինքնընկալման ձևավորման համար որոշիչ գործոն է հանդիսանում արտաքին կերպարի երևույթը: Ընդհանուր հոգեբանության մեջ կերպարի տակ լայն իմաստով հասկացվում է աշխարհի կամ նրա մասերի սուբյեկտիվ պատկեր, ինչը ներառում է իր մեջ հենց սուբյեկտին, այլ մարդկանց տարածական շրջապատը և իրադարձությունների ժամանակային հերթականությունը [9, էջ 75-

80]:

Ինքնաընկալման չափորոշիչներից հիմնականն է սեփական անձի արտաքին աշխարհից առանձնացումը: Ինքնաընկալման մեկ այլ անհրաժեշտ կարևորագույն բնորոշիչ է սեփական ուժի գիտակցումը: Այս երևույթի կադապարում հասկանում ենք ինքնավստահությունը, սեփական անձի արդյունավետությունը, խոչընդոտների հաղթահարման ունակությունը [15, էջ 110]:

Այսպես ինքնաընկալման և ինքնագնահատականի ցածր մակարդակ ունեցող, դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկները՝ ձգտելով համապատասխանել կանացի արտաքինին վերագրվող ամսագրային կարծրատիպերին, դիմում են խիստ սահմանափակումային սննդային վարքի՝ անտեսելով սննդի ընդունման սեփական մարմնի ֆիզիոլոգիական պահանջները: Տվյալ տիպի վարքի դրսևորումները այդպիսի անհատը հակված է գնահատել որպես սեփական ուժի դրսևորում:

Ռուս հոգեբան Նեմովը հանդիսանալով Ֆրոյդի տեսակետների արժանի ժառանգորդը, մեջբերում է վերջինիս գաղափարները իր «Հոգեբանություն» կոչվող աշխատանքում: Ֆրոյդն անձի ինքնընկալումը համեմատում էր սառցաբեկորի կատարի հետ: Նա կարծում էր, որ այն ամենը, ինչ կատարվում է մարդու հոգում և որոշում է նրա ինքնաընկալման բովանդակությունը, իրականում անտեսանելի է և միայն դրամի չնչին մասն է նրա կողմից իսկապես գիտակցվում և երևում [37, էջ 349]:

Իհարկե, անձի ինքնաընկալման երևույթի բաղկացուցիչներից է սոցիալական կարգավիճակի երևույթը: Չնայած հարաբերական կայունության, այնուամենայնիվ, սոցիալական կյանքում տեղի ունեցող տեղաշարժերը լայն իմաստով ազդում են նաև կարգավիճակային տեղաշարժերի վրա [7, էջ 73-80]:

Անձի ինքնաընկալման մասին տարաբնույթ մոտեցումների և տեսությունների թվում համեմատաբար նոր մոտեցում է առաջարկել ռուս հոգեբան Արթուր Ռեանը: Ըստ Ռեանի անձի ինքնաընկալումը կազմված է երկու գործոններից՝ «ես կոնցեպցիան» որպես անձի ինքն իր մասին պատկերացումների համակարգ և այդ պատկերացումների նկատմամբ նրա դրական կամ բացասական



վերաբերմունքները, կամ նրա ինքնագնահատականը:

«Ես կոնցեպցիայի» երևույթը Ռեանը սահմանում է որպես անձի կողմից նախանձախնդիր վերլուծության արդյունքում ստացված սեփական Ես-ի մասին պատկերացումները և դրանց գնահատումը: Դեռահասուն, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սեփական անձի մասին դրական պատկերացումների և բարձր ինքնագնահատականի պարագայում ինչպիսի ազդեցիկություն էլ, որ ունենան կնոջ արտաքին կերպարին վերագրվող սոցիալ-մշակութային կարծրատիպերը, սննդային վարքի շեղումների առաջացումը քիչ հավանական է: Հակառակ դեպքում՝ անձի բացասական ինքնաընկալման և մասնավորապես մարմնի պատկերի ցածր ինքնագնահատականի պարագայում, այդպիսի կարծրատիպերի ազդեցությունն ուղղակիորեն հանգեցնում է սննդային վարքի կտրուկ փոփոխության և շեղումների առաջացմանը:

Ե. Սոկոլովան հարում է այն տեսակետին, որ անձի մարմնի պատկերի կոնցեպցիան նախառաջ ներառում է մարմնի սենսորային պատկերը, ինչը մասնագետների կողմից դիտվում է որպես սեփական մարմնի տեսողական պատկեր: Ընդ որում մարմնի պատկերի ընկալման և Ես կոնցեպցիայի երևույթները տարբերվում են նրանով, որ վերջինս առավելապես հակված է դրդապատճառային ազդեցությունների: Մարմնի պատկերի ընկալման միջոցով ձևավորվում է անձի վերաբերմունքը սեփական մարմնի պատկերի նկատմամբ, իրականացվում է դրա գնահատումը և դրա հիման վրա ձևավորվում է անձի վերաբերմունքը սեփական մարմնի պատկերի նկատմամբ [49, էջ

22-24]: Հետևաբար սննդային վարքի շեղումների առաջացումը դեռահասուն, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ անմիջականորեն կապված է սոցիալ-մշակութային կարծրատիպերի հետ համեմատության արդյունքում ձևավորված սեփական մարմնի ընկալման և գնահատման հետ: Եթե այդ գնահատման արդյունքում ձևավորվում է մարմնի պատկերի նկատմամբ բացասական վերաբերմունք, ապա առաջացած սեփական մարմնի նկատմամբ սուր բացասական զգացմունքները հանգեցնում են այն փոփոխության ենթարկելու միջոցով ինքնագնահատականը

հավասարակշռել ու ձգտմանը: Այդ ձգտման արդյունքում առաջանում են սննդային վարքի կտրուկ փոփոխություններ և շեղումներ:

Այսպիսով, անձի ինքնակալման երևույթը ըստ վերոհիշյալ հեղինակների տեսակետների, ներառում է երեք ընդհանուր գործոններ, որոնք ներառում են անձի արդյունավետության ինքնագնահատումը, նպատակներ դնելու և խոչընդոտներ հաղթահարելու ունակությունը, սոցիալական դիրքը:

Չգայական-արժեքային ինքնավերաբերմունքի հիմքում Կուլիշկոն տեսնում է կենսափորձը՝ հիմնված անհատի համար նշանակալի անձանց հետ շփման վրա, որոնք մասնավորապես ծնողներն են: Այս երևույթը ոչ այնքան կարելի է դիտարկել որպես ինքնավերաբերմունք, որքան սեփական անձի նկատմամբ որոշակի վերաբերմունք ցուցաբերելու դիրքորոշում: Այն անձի ինքնիրականացման ճանապարհին որոշակի գործունեության իրականացման համար անձնային իմաստ է հանդիսանում:

Այսպիսով, անձի ինքնավերաբերմունքը բարդ հոգեկան գործընթացների արդյունք է, որի հիմնական բաղկացուցիչներն են գնահատային և զգայական ենթահամակարգերը:

Ա.Մ.Կուլիշկոն ինքնավերաբերմունքի հիմքում նույնպես տեսնում անձի «գնահատային» և «զգայական-արժեքային» ինքնագնահատման երևույթները [24, էջ 16]: Գ. Ս.Պռիգինը ինքնագիտակցումը բնորոշում է որպես սուբյեկտի սեփական անձի մասին պատկերացումների համակարգ, որը ներառում է տարաբնույթ պատկերացումներ սեփական անձի, սեփական հնարավորությունների, վերաբերմունքների և արժեքների մասին: Ինքնավերաբերմունքը ներառում է սեփական անձի նկատմամբ դրական կամ բացասական պատկերացումների և գնահատականների համակարգը և որպես վերջիններիս արդյունք՝ ինքնահարգանքի, աուտոհամակրանքի, սեփական անձի նկատմամբ

հետաքրքրություն, ինչպես նաև շրջապատող այլ անձնացից սպասվող վերաբերմունքի դրական կամ բացասական ուղղվածությունը: Ինքնավերաբերմունքի ձևավորման նշանակալի մասը պատկանում է անձի ինքնագնահատականին, որը ներառում է անձի կողմից սեփական հնարավորությունների,

վիճակների, արարքների և դրանց արդյունքների, ինչպես նաև սեփական սոցիալական դերի, դիրքի և նշանակության վերլուծությունը [42, էջ 213-214]: Անձի ինքնակալ ման մասին առաջին տեսությունների թվում է Չարլզ Զորթոն Քուլիի «հայելային»-ի տեսությունը, որը Քուլիին առաջադրել է 1902 թվականին տպագրված

«Մարդկային բնույթը և սոցիալական պահանջը» գրքում: Այս տեղ Քուլիին ասում է,- «Այն ինչ մենք անվանում ենք «ես», «Իմ» «Ինքս» չի կարող դիտարկվել որպես ընդհանուր կյանքից առանձին երևույթ, այլ միայն որպես դրա ամենահետաքրքիր մասը: «ես»-ի գաղափարը չի կարող գոյություն ունենալ առանց «Դու»-ի, կամ «Նրանց»-ի: Մարդն ընդունակ է ընկալել իր սեփական անձը միայն այլ անձնաց ընկալելու միջոցով և ձևավորել իր ինքնաընկալումն այն պատկերացման հիման վրա, թե ինչպես են իր անձը գնահատում այլ ոք»: Անձի ինքնաընկալումը հիմնված է պատկերացումների վրա, որոնց բնույթը որոշվում է սոցիոմիկոլոգից [67, էջ 138-160]:

Քուլիի տեսության համաձայն, այն պատկերացումները, որ մարդիկ ունեն միմյանց մասին կազմում են սոցիալական իրականությունը: Զետևաբար մարդու մարմինը կենտրոնական նշանակություն ունի: Մարդիկ, միմյանց նայելով՝ որոշակիորեն գնահատում են այն ինչ տեսնում են, միևնույն ժամանակ պատկերացնելով, թե ինչպես են նրանց տեսնում ուրիշները և ինչպես են նրանք գնահատում այն ինչ տեսնում են [67, էջ 86- 90]:

Քուլիի «հայելային»-ի տեսությունը հեղափոխական դարձավ մարդու սոցիալականացման խնդիրների ուսումնասիրությունների ասպարեզում:

Պարզ է, որ այս տեսության համաձայն անձի ինքնաընկալումը և սոցիալական ինքնագնահատականը իրականանում է ոչ թե ուղղակի դատողությունների, այլ պատկերացումների հիման վրա, թե ինչպիսին է անձը երևում ուրիշների աչքերում: Քուլիի տեսությունը զարգացնում է Թըրները, ասելով, որ «մարդկային մարմինը ստիպված է անընդհատ ներկայացվել հանրությանը իր ամենօրյա սոցիալական կյանքում, հետևաբար այն իրենից ներկայացնում է պոտենցիալ, որը գիտակցվում և ինքնիրականացվում է առօրյա սոցիալապես կառավարվող

գործողութիւններում և գործունէութիւններում» [113, էջ 24]:

Իհարկէ այս երևույթը որոշակի ազդեցութիւն ունի դեռահասութեան, կամ վաղ պատանեկութեան փուլում գտնվող աղջիկների ինքնաընկալման և ինքնագնահատականի ձևավորման գործընթացի վրա: Եթէ անձի մոտառկայէն սեփական մարմնի պատկերի նկատմամբ որոշակի դժգոհութիւններ, նա համոզված է, որ այդ իրական, կամ երևակայական թերութիւնները շրջապատի համար ակնհայտ են: Այդ երևույթը բերում է մարմնի պատկերը փոփոխութեան ենթարկելու ցանկութեանը և կարող է հիմք հանդիսանալ սննդային վարքի շեղումների առաջացման համար: Սիմվոլիկ ինտերակցիոնիզմի լավագույն ավանդութեան վրա այս նշանակալի շեշտադրումը թելադրում է, որ անձը ոչ միայն ունի մարմին, այլև ստեղծում է այն սոցիալական պահանջներին համապատասխան: Մարդու մարմինը սոցիալական ավանդութեան և մշակութային պահանջների համապատասխան կերտվում է, գնահատվում է, ենթարկվում է նորաձևութեան ազդեցութեանը և այլն:

Ըստ Գոֆֆմանի, երբ անհատը հայտնվում է այլ անձանց շրջապատում, վերջինները ձգտում են նրա մասին որոշակի տեղեկութեան ստանալ, քանի որ դա անհրաժեշտ է նրա հետ շփվելիս այնպիսի հակազդումների ձևավորման համար, որոնք լավագույն կերպով կանդորառնան շփման գործընթացի վրա: Այս տեղեկութեան ստացում է դատելով մասնավորապէս անձի արտաքին տեսքից: Այսպէս անձի արտաքինը՝ համեմատելով նախկինում հանդիպած նման արտաքին ունեցող անձանց հետ, նրա մասին ստացվում է որոշակի կարծրատիպային տպավորութիւն, ինչի հիման վրա էլ որոշվում են նրա հետ շփման լավագույն ուղիները: Յետևաբար, անձի արտաքին տեսքը շփման գործընթացում կարևորագույն դեր ունի [87, էջ 1-3]:

Այս տեսակետի ցայտուն օրինակ է արևելյան և արևմտյան մշակութային տարբերում կանացի արտաքին պատկերին վերագրվող սոցիալ-մշակութային կարծրատիպերի և չափորոշիչների տարբերութիւնը: Այսպէս արևելյան մշակութային համար բնորոշ է կնոջ մարմնի բնական կերպարի մեծարումը, իսկ արևմտյան մշակութային ակտիվորեն քարոզվում են անոռեկսիկ բարակիրանութեան

չ ափանիշ ները: Պարզ է, որ այսպիսի հանգամանքներում արևելյան մշակույթին պատկանող աղջկամոտ սոցիալական դիրքորոշումների արդյունքում սննդային վարքի շեղումների առաջացումը գրեթե անհավանական է: Բացասական մարմնի պատկեր ունեցող անձը համարում է որ շրջապատող մարդիկ իրենից ավելի հաճելի արտաքին ունեն: Այսպիսի մարմնի պատկեր ունեցող անհատի մոտ սննդային վարքի շեղումների առաջացումը խիստ հավանական է:

Ինչպես ասում է Գլորիա Շթեյնեմը,- «Անձի ինքնագնահատականն ամեն ինչ է: Դա այն է առանց ինչի ոչ ինչ չկա» [109, էջ 26]:

Ինքնագնահատականի զարգացման հիմնական պայմանների թվում բազմաթիվ հոգեբաններ դիտարկում են անձի շփումը շրջապատող աշխարհի հետ: Շփման գործընթացում յուրացվում են գնահատման չափանիշները՝ դրանց տեսակներն ու ձևերը, իսկ ահա արդեն անհատական փորձը թույլ է տալիս գործնականում ստուգել նշված չափանիշները և հաղորդել դրանց «անձնային» իմաստներ [2, էջ 76-79]:

Այսպես բարակիրանության և ասքետիզմի հակված սոցիալական խմբում շփում իրականացնող, դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջկա համար սննդային վարքի նորմա են դառնում ասքետիզմի և սննդային վարքի սահմանափակումային շեղման դրսևորումները: Այսպիսի սոցիալական խմբերում անձի արժեքավորության երևույթի գնահատումը սովորաբար կախված է նրա արտաքին պատկերի գնահատման արդյունքներից: Այսպիսի խմբում ադապտացվելու ձգտումը դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջկան ստիպում է սեփական սննդային վարքը համապատասխանեցնել խմբում գործող կարծրատիպերին:

Միևնույն կերպ սննդի ընդունման գործընթացին հատուկ նշանակություն տվող և այն գերագնահատող սոցիալական խմբում շփվող, դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկը հակված է իր սննդային վարքը համապատասխանեցնելու այդ խմբում գործող սննդային կարծրատիպերին, ինչը կարող է հանգեցնել սննդային վարքի էքստերնալ շեղման առաջացմանը:

Սննդային վարքի շեղումներն առաջանում են որպես ոչ իրական

մարմնի պատկերի և արտաքին ազդեցությունների համադրության արդյունք:

Սննդային վարքի շեղումների առաջացման աղբյուր է հանդիսանում հասակակիցների հետ շփումը մասնավորապես այնպիսի միջավայրում, որտեղ մարմնակազմին գերնշանակություն է տրվում: Հասակակիցների ազդեցությունը մասնավորապես ուժեղ է անձի սոցիալական սպասումներին համապատասխանելու գործում: Մ. Լ. Էմերսոնի ուսումնասիրությունները հեղինակին հանգեցրել են այն եզրակացության, որ աղջիկների հարաբերությունները այլ աղջիկների հետ կարող են ճակատագրական լինել նրանց ինքնագնահատականի, ուսումնական հաջողությունների և ֆիզիկական առողջության տեսանկյունից ինչպես դրական այնպես էլ բացասական առումներով:

Եթե աղջիկների խմբում մեկը խոսում է իր անձի մասին որպես գեր, այլ անդակ և այլն մյուսների մոտ նույնպես կարող է ավտոմատաբար ձևավորվել սեփական մարմնի բացասական պատկեր: Այսպիսի հանգամանքներում աղջիկները միմյանց խթանում են անառողջ սննդային վարքի, ինչն իր հերթին խթանվում է մասսայական լրատվամիջոցների կողմից և սննդային վարքի խանգարումը պատրաստ է», - ասում է հեղինակը [75, էջ 34]:

Բացի ընտանիքից և ընկերներից մասսայական լրատվամիջոցները նույնպես ճակատագրական կարող են լինել բացասական մարմնի պատկերի ձևավորման և, որպես արդյունք, սննդային վարքի շեղումների առաջացման համար:

Ակնհայտ կամ թաքնված տեղեկատվությունները, որ կանայք և աղջիկները ստանում են լրատվամիջոցներից, թելադրում են, որ հաջողակ լինելու համար կինը պետք է լինի բարակիրան և գեղեցիկ: Ահաթե ինչու բարակիրանությունը դարձել է մշակութային արժեք:

Այսպիսով, մարմնի պատկերի նկատմամբ անձի վերաբերմունքը կախված է ոչ միայն ներքին հատկանիշներից, բնավորության և խառնվածքի բնորոշիչներից, այլև մի շարք արտաքին, կամ սոցիալական ազդեցություններից, որոնց թվին է դասվում մասսայական լրատվամիջոցների ազդեցությունը [68, էջ 163–170], [69, էջ 38–46]:

Ամերիկացի գիտնականների հետազոտությունները ցույց են տվել, որ Միացյալ Նահանգներում հեռուստատեսությամբ, կամ ամսագրերում հանրությանը երևացող, մեդիա ոլորտում աշխատող կանանց 94% -ը շատ ավելի բարակիրան են միջին կանացի մարմնի համեմատությամբ: Այս կանանց կերպարները մեդիա ոլորտի միջոցով քարոզվում են որպես երջանիկ, հաջողակ կանանց օրինակելի կերպարներ [112, էջ 91–98]:

Դրան զուգահեռ նույն մեդիա ոլորտում ակտիվորեն քարոզվում են բազմազան դիետաներ, վարժանքներ, դեղորայք և սննդային հավելումներ, պլաստիկ վիրահատական միջամտություն և այլ բարակիրանության կարծրատիպին համապատասխանելու միջոցներ: Այսպիսի քարոզը թելադրում և պարտադրում է հաջողակ լինել ցանկացող կնոջը լինել բարակիրան: Այսպես սոցիալապես ձևավորվող բարակիրանության պարտադիր կարծրատիպը միջին կնոջ մոտ առաջացնում է դժգոհության զգացում սեփական մարմնի պատկերի նկատմամբ [110, էջ 836–840]:

Այս երևույթն իր հերթին համակցվում է սոցիալական անբավարարվածության, դեպրեսիվ վիճակների, սննդային վարքի շեղումների և ցածր ինքնազնահատականի հետ:

Լ. Գրոեսի, Մ. Լեվինի և Ս. Մուրնենի իրականացրած հետազոտությունները ցույց են տվել, որ վերոհիշյալ \$որմատի հեռուստահաղորդումների, կամ ամսագրերի դիտումից հետո սեփական մարմնի պատկերի նկատմամբ դժգոհության մակարդակը կանանց մոտ բարձրանում է [88, էջ 1–16]:

Մի շարք ակնառու հոգեբանների կարծիքով՝ մարմնի պատկերի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը կախված է երկու հիմնական գործոններից, որոնք են.

ա/ Մեդիա ոլորտում քարոզվող բարակիրանության կարծրատիպերի միջազգայնացում [70, էջ 220–239],

բ/ Սոցիալական համեմատության երևույթը [89, էջ 335–344]:

Այսպիսի միջազգային մակարդակի քարոզումը իհարկե հանգեցնում է դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող բազմաթիվ աղջիկների մոտ սեփական մարմնի պատկերի նկատմամբ դժգոհության առաջացմանը:

Սննդային վարքի շեղումների առաջացումը հենց սոցիալ-մշակութային կարծրատիպերի քարոզման ներգործության արդյունք է: Ըստ բազմաթիվ կարծիքների, այդպիսի ազդեցության աղբյուր են հանդիսանում ծնողները, հասակակիցները և լրատվամիջոցները, որոնցից վերջնը ամենաազդեցիկն է [93, էջ 323–339]:

Այս տեսակետը զարգացնում են Յ. Ծրոֆն ու Ջ. Թոմսոնը՝ ասելով, որ չնայած մարմնի պատկերի նկատմամբ գոհության, կամ դժգոհության մակարդակի առաջացման աղբյուր են հանդիսանում վերոհիշյալ երեք գործոնները, այնուամենայնիվ, գոյություն ունեն մի շարք այլ արտեսցիալ աղբյուրներ, որոնք կարող են առաջացնել տվյալ երևույթները: Այդ աղբյուրների թվում հեղինակները տեսնում են ուսուցիչներին, մարզիչներին, բժիշկներին և այլն [105, էջ 17–23]:

Այսպիսով, մարմնի պատկերի նկատմամբ անձի վերաբերմունքը և նրա սոցիալականացման գործընթացի փոխկապակցվածությունը ներառում է ոչ միայն լրատվամիջոցային քարոզը: Այն ներառում է սոցիալական սպասումների, կարծիքների, վերբալ և ոչ վերբալ շփման, ընտանեկան դաստիարակության գործոնների ազդեցությունները: Ծնողների դերը անձի մոտ մարմնի պատկերի նկատմամբ վերաբերմունքի ձևավորման գործում կարող է ներառել երեխայի մարմնի պատկերի վերաբերյալ նույնիսկ աննշան թվացող մեկնաբանություններ և փառաբանական խոսքեր:

Ըստ Քլարկի և Թիգեմանի՝ վաղ մանկության տարիներին ծնողների դերը երեխայի մոտ մարմնի պատկերի նկատմամբ վերաբերմունքի ձևավորման գործում ամենանշանակալիկն է: Ավելի ուշ դրա ձևավորման նկատմամբ զգալի ազդեցություն ունի հասակակիցների հետ շփումը և այն արժեքները, որոնք «գործում են» այն հասակակիցների խմբում, որում անձն իրականացնում է իր սոցիալականացման գործընթացը: Այն է՝ ընկերական շրջապատը, դպրոցը և այլն [72, էջ 1124–1134]:

Ընտանիքի կողմից իրեն տրված գնահատականը երեխան ընդունում է որպես սեփական ինքնագնահատական [10, էջ 124-129]:

Այսպես մանկության տարիներին ծնողների կամ հասակակիցների կողմից սեփական մարմնի պատկերի նկատմամբ



բացասական գնահատականներ ստացած աղջկա մոտ ձևավորվում է իր մարմնապատկերի բացասական ընկալում և ցածր ինքնագնահատական: Մեծ է հավանականությունը, որ այդպիսի անհատը, ինքնահաստատվելու միտման ազդեցության ներքո, դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում կձգտի հավասարակշռել մարմնի պատկերի նկատմամբ ինքնավերաբերմունքը և կայունացնել ցածր ինքնագնահատականը սննդային վարքի շեղումների առաջացման միջոցով:

Ավալոսը և թիլկան իրենց համատեղ աշխատանքում մատնանշում են, որ մարմնի պատկերի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորումը կախված է չորս հիմնական գործոններից, որոնք են.

ա/ անկախ իրական տեսքից, ցանկալի կարծիքի ձևավորում սեփական մարմնի նկատմամբ,

բ/ մարմնի ընդունում ինչպիսին որ այն կանկախ քաջից, ձևից և հնարավոր թերություններից,

գ/ մարմնի նկատմամբ հարգանքի դրսևորում, որն արտահայտվում է առողջ սովորություններում,

դ/ մարմնի պաշտպանություն, որը ենթադրում է անցանկալի մեդիա-քարոզից խուսափումը [61, էջ 486–497]:

**2.2 Մարմնակազմի նկատմամբ վերաբերմունքի  
ազդեցությունը սննդային վարքի շեղումների առաջացման  
գործընթացի վրա**

Սեփական մարմնակազմի նկատմամբ մարդու գոհության, կամ դժգոհության աստիճանը կախված է դրա մասին նրա պատկերացումներից, որոնք որոշակիորեն գնահատվում են սոցիալ-մշակութային ազդեցությունների, մասսայական լրատվամիջոցների ինտերնետային կայքերի և շփման հիմնական սոցիալական խմբերում գործող գեղեցկության մասին կարծրատիպերի հիման վրա: Անձը, ինչպես վերը նշվեց՝ ելնելով սեփական շահերի ու դրդապատճառների ունորտից, ինքնագնահատականից, ինքընկալման մակարդակից, սոցիալական պահանջներին համապատասխանելու միտումից և մի շարք այլ սուբյեկտիվ պատճառներից, ձգտում է ենթարկվել այդօրինակ կարծրատիպերին՝ դրանց համապատասխանեցնելով սեփական վարքը, ինչը կարող է արտահայտվել նորմայի սահմաններում, կամ պաթոլոգիկ բնույթ ունենալ: Իհարկե, միանշանակ պարզ է դառնում, որ բոլոր վերոհիշյալ գործընթացների հիմքում ընկած է անձի կողմից սեփական Ես-ի ընկալումը: Որքան սուբյեկտի Ես-ի ընկալումն ավելի դրական է, այնքան նա ավելի քիչ է հակված սոցիալական թելադրանքներին ու կարծրատիպերին համապատասխանելու իր ճանապարհին դիմել վարքի խեղաթյուրված դրսևորումների:

Միևնույնը կարելի է ասել սննդային վարքի շեղումների երևույթի առաջացման մասին: Որքան անձի Ես-ի ընկալումն ու գնահատումը դրական են, այնքան բարձր է նրա ինքնագնահատականի մակարդակը, ինչով էլ որոշվում է բարակիրանությունն քարոզող սոցիալական կարծրատիպին համապատասխանելու համար սեփական մարմնի նկատմամբ կիրառվող գործողությունների բնույթը: Դեռահասույթան, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի շեղումների առաջացման հիմքում նախևառաջ սեփական արտաքինի նկատմամբ ակտիվ դժգոհությունն է: Նման անձինք սոցիալական ադապտացիայի խնդիրները,

միջանձնային հարաբերությունների, շփման խնդիրները հակված են վերագրել մարմնակազմի իրական կամ ենթադրյալ թերություններին: Այս տեղից էլ բխում է այն հավատը, որ մարմնակազմի թերությունների շտկումը կվերացնի սոցիալական փոխհարաբերությունների խնդիրները:

Դիսմորֆաֆոբիկ երևույթների առաջացումը պայմանավորված է անձի ինքնաուսումնասիրման հակվածությամբ, կամ ռեֆլեկսիայով: Ա. Գ. Մակլակովն իր «Ընդհանուր Յոգեբանությունում» ռեֆլեկսայի երևույթը բացատրում է որպես անձի ինքնաուսումնասիրման ունակություն՝ ուղղված սեփական զգացմունքների, զգացողությունների և վիճակների նկատմամբ: Ընդ որում հարկ է նշել, որ գիտակցության տվյալ ունակությունները հիմք են հանդիսանում անհատական Ես կոնցեպցիայի կամ ինքնաընկալման ձևավորման համար:

Յեղիևակը համոզված է, որ արտաքին աշխարհի մասին ստացված ամբողջ տեղեկությունը մարդը գնահատում է սեփական անձի մասին պատկերացումների հիման վրա և որոշակի վարքային մոդելներ է ձևավորում՝ հենվելով սեփական դրդապատճառների, արժեքային համակարգի, իդեալների վրա:

Պարզ է, որ անձի ինքնաընկալումն ինչպես նաև նրա աշխարհահայացքների համակարգը խիստ անհատական է: Միևնույն օբյեկտի ընկալումն ու գնահատումը նույնպես անհատական է:

Ըստ Մակլակովի, անձի Ես կոնցեպցիայի, կամ ինքնաընկալման ադեկվատության համար հիմնական է հանդիսանում անձի ինքնաքննադատման հակումը: Այս տեսակետը բավական վիճելի է, քանի որ որքանով ավելի բարձր է անձի ինքնաքննադատման հակումը, այնքան ավելի հավանական է, որ նա կգտնի, կամ երևակայության օգնությամբ կստեղծի մարմնական թերություններ, որոնց առկայությունը առավել հավանական կդարձնի մարմնի պատկերի նկատմամբ դժգոհության բարձր աստիճանը, գուցե նաև դիսմորֆիկ երևույթների առաջացումը: Խոսելով սոցիալական ընկալման մասին՝ Մակլակովն ասում է, որ ըստ երևույթին, այն ամբողջ տեղեկատվությունը, որ անձը ստանում է շրջակա իրականության և սեփական անձի մասին, ոչ ամբողջությամբ է գիտակցվում: Այս

Երևույթը կապված է ստացված տեղեկատվության զգացմունքային գունավորման, կամ դրա բացակայության հետ: Չավանաբար որոշիչ է հանդիսանում այն, թե որքանով է տվյալ տեղեկատվությունը նշանակալի տվյալ անձի համար [33, էջ 70-71]:

Չետևաբար, եթե այս գաղափարը տեղափոխենք դիսմորֆաֆոբիայի հարթություն, ապա դրանով տառապողի անձի համար առավելապես կարևոր է հանդիսանում այն ամբողջ տեղեկատվությունը, որն այս կամ այն կերպ կապված է երևակայական կամ իրական թերություն հետ, հետևաբար մինչև նրա գիտակցությունը անտեսում է այն ամբողջ տեղեկատվությունը, որ դրա հետ կապված չէ, մյուս կողմից կատարի կերպով կլանում է այն ամենը ինչ կապված է դիսմորֆիկ երևույթի հարուցիչի հետ: Այսպիսով էլ, տվյալ անձի հավատը սեփական թերաթեթություն նկատմամբ այնքան խորն է, որ նրա գիտակցությունը հերքում է այն ամենն ինչ հակառակվում է այդ համոզմունքին և ակտիվորեն ընդունում է այն ամենն ինչ հաստատում է այդ համոզմունքը: Այս երևույթը բացատրում է սննդային վարքի շեղումների հակված, դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սեփական մարմնակազմի նկատմամբ կայուն բացասական վերաբերմունքը:

Սննդային վարքի պաթոլոգիկ փոփոխությունների հիմքում ընկած է մարմնի պատկերի նկատմամբ խիստ դժգոհությունը, որի ազդեցության ներքո ձևավորվում է սեփական մարմնի նկատմամբ ամոթի զգացում: Այս երևույթը կարող է անմիջականորեն հանգեցնել սննդային վարքի շեղումների առաջացմանը՝ որպես աուտոագրեսիվ վարքի դրսևորումներ:

Աուտոագրեսիվ, կամ սեփական անձի նկատմամբ ուղղված դեստրուկտիվ վարքի երևույթի ուսումնասիրությունները բազմազան և բազմաշերտ են: Դրանք անդրադառնում են անձի սեփական Ես-ի նկատմամբ ուղղված ագրեսիայի տարաբնույթ դրսևորումներին, որոնց թվին կարելի է դասել սննդային վարքի շեղումները:

Աուտոագրեսիվ վարքի դրսևորումների ուսումնասիրություններին նվիրված ասպարեզում հետաքրքիր է Օ.Յոռնի և Է. Սիպկեյի առաջարկած տեսությունը, ըստ որի աուտոագրեսիվ վարքածներ դրսևորող անձանց մոտ մարմնական

զգացողությունների և զգացմունքների միջև տարբերության գիտակցումը ցածր է [90, էջ 655–667]:

Տվյալ տեսակետից ելնելով՝ խոսելով սննդային վարքի շեղումների մասին, որպես անձի ինքնավնասմանս ուղղված ագրեսիվ գործողությունների շարք, հասկանում ենք, թե ինչու են սթրեսային պայմաններում սննդային վարքի շեղումների դրսևորումները առավել արտահայտված, քան սովորական առօրյայում: Այստեղ խոսքը վերաբերվում է սննդային վարքի հուզածին շեղման դրսևորումներին, երբ սթրեսային պայմաններում անձի սննդային վարքը կտրուկ փոփոխությունների է ենթարկվում:

Յոգեբաններ Ռ. Սենսոնը և Լ. Սենսոնը զարգացնում են այս տեսակետը՝ ասելով, որ աուտոագրեսիվ վարք դրսևորող անձինք փորձում են շտկել իրենց մարմինը ֆիզիկական զգացողությունների օգնությամբ: Այսպես, ըստ հեղինակների, դեռահաս աղջիկը կարող է փորձել շտկել իր մարմինը խիստ սահմանափակումային սննդային վարքածևի դրսևորման միջոցով: Այսպիսի հանգուցալուծումը առավել հնարավոր է, եթե տվյալ անձը ապրում է այնպիսի ընտանիքում, կամ իր շփումն իրականացնում է այնպիսի միջավայրում, որտեղ մասնավորապես շեշտավորվում է բարակիրանության նշանակությունը [101, էջ 333–346]:

Որոշ հեղինակներ ֆրոստրացիան բնորոշում են որպես անձի հատուկ զգացմունքային վիճակ, որն առաջանում է իրական, կամ հնարածին անհաղթահարելի խոչընդոտների առկայության պարագայում: Այսպիսով, ցանկացած ագրեսիայի դրսևորում կարող է դիտարկվել որպես ֆրոստրացիայի արդյունք:

Տեղափոխելով ֆրոստրացիոն գործոնի ազդեցության տեսությունը աուտոագրեսիվ վարքի, մասնավորապես սննդային վարքի շեղումների ուսումնասիրության ապարեզ՝ պարզ է դառնում, որ ցածր ինքնագնահատականի, սեփական մարմնի նկատմամբ խիստ դժգոհության երևույթները անձի

ընդհանուր ինքնաընկալման մակարդակի համար կործանանար կարող են լինել՝ դրսևորվելով, որպես սոցիալական սպասումների և կարծրատիպերի անհամապատասխանության

կաղապարում ֆրոնտորացիոն երևույթներ: Բացասական արտաքին ազդեցությունները անուղղակիորեն հանգեցնում են կանացի սննդային վարքի շեղումների առաջացմանը: Սակայն մյուս կողմից վիճելի է, թե որքանով դրական արտաքին ազդեցությունները, որպիսիք են կնոջ մարմնակազմի առնչությամբ այլոց վերաբերմունքի արտահայտումները, կարող են ազդել կանացի սննդային վարքաձևի ձևավորման վրա: Փաստ է, որ կանանց մոտ սեփական մարմնակազմի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորման համար որոշիչ գործոն է հանդիսանում այլոց վերաբերմունքը դրան: Փաստ է նաև, որ սեփական մարմնի նկատմամբ դրական վերաբերմունք ունեցող կանայք առավել բարձր ինքնագնահատական ունեն [61, էջ 486–497]:

Ստույյարենկոն իր «Յոգեբանության հիմունքներ»-ում մեջբերում է Ա. Բանդուրայի հայեցակետը, ըստ որի անձը հակված է յուրացնել այն վարքաձևերը որոնք տեսնում է [51, էջ 405]: Յետևաբար, եթե երեխան դաստիարակվում է մարմնի բացասական պատկեր ունեցող և խեղաթյուրված սննդային վարքաձևեր դրսևորող ծնողների կողմից, մեծ է հավանականությունը, որ այդպիսի երեխան հակված կլինի բացասական մարմնի պատկեր ունենալուն և հետագայում դրա շտկմանն ուղղված գործողություններում կգերադասի հենց խեղաթյուրված սննդային վարքը:

Ինքնագնահատականի և ինքնավերաբերմունքի խնդիրները աուտոագրեսիվ վարքում ներառում են ցածր ինքնագնահատականի և ինքնավերաբերմունքի ցածր մակարդակի երևույթները: Աուտոագրեսիվ վարքի երևույթը ներառում է ինտերակտիվ և սոցիալ-պերցեպտիվ գործոններ: Դրա ինտերակտիվ մասը կազմում են սոցիալական ադապտացիայի խնդիրները, միջանձնային հարաբերությունների ցածր որակը, իսկ սոցիալ-պերցեպտիվ մասը կազմում է այլ անձանց ընկալման առանձնահատկությունները: Աուտոագրեսիվ վարքի հակված անձանց մոտ շեշտված է նշանակալի ուրիշների չափազանց բարձր գնահատումը, ի համեմատություս սեփական անձի գնահատման:

Աուտոագրեսիվ վարքի ձևավորման համար մասնավոր ազդեցություն ունեն մեղքի զգացման, վիրավորանքի և սեփական

անձի չընդունման երևույթները, որոնց առաջացման համար հիմնային գործոններից մեկն է խեղաթյուրված մեղքի զգացումը [43, էջ 391-393]:

Ինքնադեստրուկտիվ, կամ աուտոդեստրուկտիվ վարքի դրսևորումները, որոնք չեն կրում նախապես կանխամտածված սուիցիդի նպատակ, ամերիկացի հոգեբաններն անավանել են «թաքնված սուիցիդ» տերմինով, որը ներառում է աուտագրեսիվ վարքի այնպիսի մոդելներ, ինչպիսիք են անուշադիր մեքենավարությունը, էքստրեմալ սպորտաձևերը, ծխելը և խեղաթյուրված սննդային վարքը [97, էջ 224-244]:

Ն. Ֆարբերոուն «անուղղակի ինքնառնչացում» տերմինով բացատրում է այնպիսի երևույթներ, ինչպիսիք են պլյոհոլիզմը, թմրամոլությունը, ծխելու մոլուծքը, սեփական առողջության նկատմամբ անհարիր վերաբերմունքը, աշխատամոլությունը, խաղամոլությունը, սուր զգացողությունների և ռիսկի սիրահարությունը և սննդային վարքի խեղաթյուրված դրսևորումները [77, էջ 251-256]: Սննդային վարքի շեղումները որոշ հեղինակներ դիտարկում են որպես սևեռուն աղափարների արդյունքում ի հայտ եկած աուտոդեստրուկտիվ վարքային մոդելներ: Սևեռուն գաղափարների հիմնական բնորոշ գիծն այն է, որ վերջինների հիմքում ընկած է որևէ իրական, սակայն աննշան փաստ: Սակայն այդ աննշան փաստերի հիման վրա անձի դատողությունները և մտահանգումները գերազնահատվում են և անձի կողմից դրանց չափազանց մեծ նշանակություն է տրվում: Այսպես սեփական մարմնակազմի իրական կամ երևակայան թերությունների նկատմամբ սևեռված վիճակը դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող արջիկների մոտառաջացում է մարմնակազմն ամեն գնով փոփոխելու սևեռուն ձգտում, ինչը հանգեցնում է սննդային վարքի շեղումների առաջացմանը: Այսպիսի անհատների ուշադրությունը սևեռված է սեփական մարմնակազմի, սննդակարգի կազմակերպման, դիետաների, արտաքին տեսքի, մարզումների, ասքետիզմի գաղափարախոսությամբ տոգորված «առողջ ապրելակերպի» երևույթների նկատմամբ:

Ըստ Մ. Ի. Ենիկեևի հայեցակետի՝ աուտագրեսիվ վարքը անձի

պաթոլոգիկ փոփոխությունների ցուցանիշ է [20, էջ 312]: Այսպես մանկության տարիներին ծնողների և հասակակիցների կողմից քննադատության ազդեցության ներքո ձևավորված մարմնի պատկերի նկատմամբ բացասական վերաբերմունքը դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջկան ստիպում են սննդային վարքի կտրուկ փոփոխություններ կատարել՝ դրդված վերջինների կողմից ընդունված լինելու և սեփական ինքնագնահատականը կայունացնելու ձգտումով:

Անձի ինքնառջնչացման միտման հիմքում կարելի է դիտարկել սոցիալական ադապտացիայի խնդիրների առկայությունը, ինչը մատնանշում է սննդային վարքի շեղումների և աուտոագրեսիվ վարքի կլինիկական պատկերների ընդհանրությունը: Ըստ Վ.Ա.Պետրովսկիի՝ անձի մոտ առկա ադապտացիայի խնդիրները կարող են դիտարկվել որպես ակտիվ կենսական դիրքորոշում [41, էջ 197-198]:

Հետաքրքիր և բազմաբովանդակ է Յորնիի մոտեցումը աուտոագրեսիվ վարքին: Հեղինակը համարում է որ, ցանկացած անձի ինքն իր դեմ ուղղված դեստրուկտիվ վարքի հիմքում ընկած է սեփական անձը տանջելու միտումը: Աուտոագրեսիվ վարքի ծայրահեղ դրսևորումները Յորնին տեսնում է ինքնառջնչացման տարաբնույթ ակտերում, որոնց հիմքում սեփական անձի ֆիզիկական, հոգեկան և հոգևոր ոչնչացման միտումն է: Յորնին սեփական անձի նկատմամբ ֆիզիկական բռնությունը բացատրում է պիխոզով, մինչդեռ ներոտիկ տիպի աուտոագրեսիվ հակումները նատեսնում է մանրունք թվացող երևույթներում, ինչպիսիք են մազերը արկելու սովորությունը և այլն: Կան դեպքեր, երբ ֆիզիկական վնասը անձն ինքն իրեն պատճառում է պատահաբար, սակայն դրանք Յորնին նույնպես գնահատում է որպես ինքնառջնչացման չգիտակցված միտման արդյունք [91, էջ 135-136]:

Մի շարք հեղինակներ սննդային վարքի շեղումների և ինքնավնասման հակվածության միջև կապի հիմքում տեսնում են իմարլսիվ վարքը կառավարել չկարողանալու միտումը [78, էջ 157-165], [79, էջ 352-361]:

Այս միտումն ընկած է սննդային վարքի հուզածին շեղման առաջացման հիմքում, երբ սթրեսային պայմաններում անձի



սննդային վարքն անկառավարելի փոփոխությունների է ենթարկվում:

Չետագոտությունները ցույց են տվել, որ ինքնավստահության հավաճությունն առաջանում է մասնավորապես այն անձանց մոտ ում մոտ առկա են անօգնականության, մեղքի, բարկության զգացումները, որոնք մասնավորապես հիմքում ունեն ֆիզիկական, հոլզական, կամ սեռական բռնության պատմություն, որևէ ֆիզիկական լուրջ հիվանդության, կամ վիրահատական միջամտության դրվագներ մանկության տարիքում, պերֆեկցիանիզմի երևույթը, սեփական մարմնի պատկերի նկատմամբ չբավարարվածությունը, դեպրեսիվ վիճակների առկայությունը, ծնողների ակոհող իզմը և այլն [80, էջ 77–85], [111, էջ 531–554]:

**ԳԼՈՒԽ 3. ՄՆԵՐՈՒՄԻ ՎԱՐՔԻ ՇԵՂՈՒՄԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆԸ ՆՊԱՏՈՂ  
ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԵՐԻ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՊԻ  
ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ**

**3.1 Հետազոտության քննարկում կիրառված մեթոդների նկարագրը և արդյունքների վերլուծությանը**

Աշխատանքի շրջանակում իրականացված հետազոտության հիմնական իմաստն է եղել ուսումնասիրել սննդային վարքի սահմանափակումային, հուզածին, կամ էքստերնալ շեղում ունեցող, դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների անձնային, սոցիալական և դիրքորոշումային որակներն ու խնդիրները՝ նախկինում ապարեզում չամփոփված տեսանկյունից: Հետազոտությունում կիրառվել են դիտման, զրույցի և հոգեբանական թեստավորումների հոգեախտորոշիչ մեթոդները: Արդյունքում բացահայտվել են հետազոտվողների բազային համոզմունքների և իռացիոնալ դիրքորոշումների, դժվարության նստի հաղթահարման մեխանիզմների առանձնահատկությունները, ընդհանուր մտավոր զարգացածության մակարդակը, ինչպես նաև ինքնագնահատականի և ինքնաընկալման խնդիրների առկայությունը՝ «ԵՍ իրականի» և «Ես կատարյալի» միջև տարբերությունները: Հետազոտության արդյունքների քանակական արժանահավատության ապահովման համար հիմք է ընդունվել Կ. Ա. Օտդելնովայի մշակած հետազոտության ճշգրտության չափման աղյուսակը, ընտրվել է թիրախային խմբի 200 մասնակից, որոնց շրջանում կատարվող հետազոտության ցանկալի ճշգրտությունը կազմում է՝ 0,2, հավաստիության գործակիցը՝ 2,5-3,0 և արդյունքների հավանականության կանխատեսումը՝ 0,98-0,99 հետազոտության միջին ճշգրտության արդյունքի գործակից [39, Էջ 18-22]: /Աղյուսակ 1./

Կ. Ա. Օտդեղնովայի հետազոտության ճշգրտության չափման  
աղյուսակ

Հետազոտության տեսակը	Հետազոտության անցանկալի ճշգրտություն	t=2.0/ P=0.95	t=2.5/ P=0.98	t=3.0/ P=0.99
Ցածր ճշգրտության	0.5	16	25	39
Միջին ճշգրտության	0.4	25	39	56
Բարձր ճշգրտության	0.2	100	156	225
Բարձր ճշգրտության	0.1	400	625	900

Որտեղ k-ն՝ հետազոտության անցանկալի ճշգրտության շեղումն է, t-ն՝ հավաստիության գործակիցն է, իսկ P-ն՝ հավանականության կանխատեսման գործոնը:

Հետազոտության թիրախային խմբի 200 մասնակիցները հավաքագրվեցին Երևան քաղաքի ուսումնական հաստատությունների 14-18 տարեկան 520 աղջիկ սաների շրջանում կատարված թեսթավորման արդյունքում, որում կիրառվեց 1986 թվականին Տ. Վան Շթրեյնի գլխավորությամբ մշակված «Սննդային վարքի հոլլանդական հարցաշարը», ինչի արդյունքները կներկայացվեն ստորև:

Հետազոտությունն իրականացվել է դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի սահմանափակումային, հոլգածին, կամ էքստերնալ շեղման առաջացման գործում սոցիալական դիրքորոշումների ազդեցության դերը պարզելու համար, ինչի համար հարկ է եղել բացահայտել.


ա/ Հետազոտվողների մոտ սննդային վարքի սահմանափակումային, հոլգածին, կամ էքստերնալ շեղման հակվածության պարագայում ինքնազնահատականի և ինքնավերաբերմունքի խնդիրները՝ մասնավորապես «ԵՍ իրականի» և «Ես կատարյալի» տարբերությունները:

բ/ Յետազոտության մասնակիցների մոտ սննդային վարքի սահմանափակումային, հոլզածին, կամ էքստերնալ շեղման առաջացման գործում բազային համոզմունքների, իռացիոնալ դիրքորոշումների և դժվարությունների հաղթահարման մեխանիզմների առանձնահատկությունների նշանակությունը:

ե/ Սննդային վարքի սահմանափակումային, հոլզածին, կամ էքստերնալ շեղում ունեցող աղջիկների ընդհանուր մտավոր զարգացածության աստիճանը:

Յետազոտության մեթոդական ապարատը ներառում է դիտման, գրույցի և հոգեբանական թեստավորումների մեթոդները՝ հետևյալ հերթականությամբ (նկար 2)

Նկար 2



Յետազոտությունում կիրառված հոգեբանական թեստերը մշակված են ակնառու մասնագետների հեղինակությամբ: Դրանք են.

- 1986 թվականին Տ.Վան Շթրեյնի գլխավորությամբ հոլլանդացի գիտնականների կողմից մշակված «Սննդային վարքի հոլլանդական հարցաշարը» [114, էջ 295-315],

- 1954 թվականին Ջ. Բաթլերի և Գ. Յայդի կողմից մշակված «Ես իրականի» և «Ես կատարյալի» տարբերությունները բացահայտող թեստը [57, էջ 281-283],

•Ռ. Ջանոֆֆ-Բուլլմանի մշակած բազային համոզմունքների հարցաշարը [94, էջ 113— 136],

•Ա. Էլլիսի կողմից մշակված իռացիոնալ դիրքորոշումների առկայություն և արտահայտվածություն ախտորոշման հարցաշարը [22, էջ 201-205],

•Ռ. Լազարուսի և Ս. Ֆոլքմանի «Գերակշռող վարքի միջոցներ» հարցաշարը [29, էջ 93-112],

•Ջ. Ռավենի ընդհանուր մտավոր զարգացածության աստիճանի բացահայտման պրոգրեսիվ մատրիցաների աղյուսակը [100, էջ 185–194]:

«Սննդային վարքի հոլլանդական հարցաշարը» (DEBQ) կազմված է երեսուներեք հարցերից, որոնցից յուրաքանչյուրի համար առաջարկված է պատասխանների մի քանի տարբերակ. «երբեք», «հազվադեպ», «երբեմն», «հաճախ», «շատ հաճախ», որոնք արդյունքում գնահատվում են 1-5 միավոր, բացառությամբ 31-րդ կետի, որի արդյունքը հակառակ է տրված պատասխանին: Հարցաշարը կազմված է երեք ենթաբաժիններից, որոնցից յուրաքանչյուրը վերաբերվում է սահմանափակումային, հուզածին, կամ էքստերնալ սննդային վարքի շեղումներին: Ստացված արդյունքների վերլուծությունը կատարվում է ըստ ենթաբաժինների: Դրանց գումարը բաժանվում է ենթաբաժնում առկա հարցերի քանակի թվին: Առաջին ենթաբաժինը կազմված է 10 հարցերից և վերաբերվում է սննդային վարքի սահմանափակումային շեղմանը: Երկրորդ ենթաբաժինը կազմված է 13 հարցերից և վերաբերվում է սննդային վարքի հուզածին շեղմանը: Երրորդ ենթաբաժինը կազմված է 10 հարցերից և վերաբերվում է սննդային վարքի էքստերնալ շեղմանը: Ընդ որում՝ առաջին ենթաբաժնում ստացված արդյունքների նորման կազմում է 0 – 2,4, երկրորդ ենթաբաժնում՝ 0 – 1,8 և երրորդ ենթաբաժնում՝ 0 – 2,7 միավոր: Առաջարկված նորմայից ցածր միավորները ենթադրում են տվյալ ենթաբաժնին համապատասխան սննդային վարքի շեղման բացակայություն: Առաջարկված նորմայից բարձր ցուցանիշները ցույց են տալիս տվյալ ենթաբաժնին հատուկ սննդային վարքի շեղման առկայություն:

Համապատասխանաբար՝ սննդային վարքի սահմանափակումային շեղումը ցույց է տալիս մարմակազմի և քաշի շտկման, կամ

պահպանման նպատակով սննդի ընդունումը խիստ սահմանափակելու անձի հակվածությունը:

Սննդային վարքի հոլզածին շեղումը ցույց է տալիս անձի հոգեբանական վիճակից սննդային վարքի կախվածություն: Այս պարագայում հնարավոր է հոլզական լարվածության հանգամանքներում, կամ սթրեսային պայմաններում անձի կողմից թե՛ սննդի ընդունման խիստ սահմանափակում և թե՛ շատակերություն:

Սննդային վարքի էքստերնալ շեղումը ցույց է տալիս անձի կողմից սննդի ընդունման խիստ սահմանափակման, կամ շատակերության հակվածությունը՝ կախված սոցիալական միջավայրի առանձնահատկություններից և դրա փոփոխությունից: Թեսթավորման արդյունքում ստացված տվյալների համաձայն՝ սննդային վարքի սահմանափակումային շեղում բացահայտվեց 102, հոլզածին շեղում՝ 78 և էքստերնալ շեղում՝ 20 մասնակիցների մոտ:

Իրականացված սննդային վարքի սահմանափակումային, հոլզածին և էքստերնալ շեղումները բացահայտող թեսթավորման արդյունքում առանձնացված թիրախային խմբի ներկայացուցիչները հանդիսացան հետազոտության հետագա օբյեկտներ: Մասնակիցների մոտ սննդային վարքի շեղումների առաջացման գործընթացում անձնային հատկանիշների և սոցիալական դիրքորոշումների դերը պարզելու նպատակով հոգեախտորոշիչ միջոցառումները պլանավորելու համար, հետազոտության հաջորդ փուլում կիրառվեց դիտման հոգեախտորոշիչ մեթոդը: Դիտման մեթոդը սուբյեկտիվ հոգեախտորոշիչ մեթոդ է, որի կիրառման նպատակահարմարությունը տվյալ աշխատանքում կայանում է հետազոտվողների մոտ վարքային դրսևորումներն անմիջականորեն ֆիկսելու և դրանք վերլուծելու հնարավորությունում: Մեթոդը սուբյեկտիվ է, քանի որ որևէ հաշվարկային վերլուծություն չի նախատեսում: Դրա արդյունքների վերլուծությունը հիմնված է գուտ հետազոտվողների վերբալ և ոչ վերբալ ինքնադրսևորման մոդելների ու սուլմնասիրման վրա: Դիտման մեթոդի բնորոշ գծերն են. Որոշակի նպատակաուղղվածությունը, տեսական

պատկերացումների առկայությունը, այլ անավորվածությունը:  
Դիտման մեթոդի առարկան է.

ա/վարքի մոտորային դրսևորումները, բ/վարքի վերբալ  
դրսևորումները, գ/վարքի ոչ վերբալ արտահայտումները,  
դ/վեգետատիվ հակազդումների արտաքին արտահայտումները,  
ե/հրադրային վարքի տարբերությունները:

Դիտման մեթոդի կիրառումը թույլ է տվել սուբյեկտիվորեն  
գնահատել հետազոտության մասնակիցների անձնային  
հատկանիշների, սոցիալական դիրքորոշումների ազդեցության  
աստիճանը սննդային վարքի շեղումների առաջացման գործում:  
Դիտման մեթոդը որպես հոգեախտորոշման ինքնուրույն մեթոդ  
կիրառվել է չի կարող և այդ պատճառով աշխատանքում համադրվել են  
հոգեախտորոշիչ գրույցի և հոգեբանական թեսթավորումների  
մեթոդները:

Դիտման մեթոդի կիրառումն իրականացվել է երեք ամիսների  
ընթացքում՝ ուսումնական հաստատություններում, ուսումնական  
գործընթացի և դրա ընդմիջումների պայմաններում:

Մեթոդը կիրառելիս ակնկալվել է.

1. Պարզել սննդային վարքի սահմանափակումային, հուզածին,  
կամ էքստերնալ շեղում ունեցող, դեռահասության, կամ վաղ  
պատանեկության փուլում գտնվող աղջիկների սննդային վարքի  
դրսևորման առանձնահատկությունները՝ պարզելով սննդի  
ընդունման հաճախականությունը և դրա կախվածությունը  
իրավիճակներից:

2. Որոշել հարցվողների մոտ խմբում միջանձնային  
հարաբերությունների վիճակը՝ պարզելով ակտիվ շփվելու, կամ  
մեկուսանալու հակվածությունների առկայությունը, շփման  
գործընթացում վերբալ և ոչ վերբալ ակտիվության  
դրսևորումները:

3. Որոշել կանացի կերպարին վերագրվող սոցիալ-մշակութային  
կարծրատիպերի նշանակությունը հետազոտվողների առօրյա  
կյանքում և արժեքային համակարգում:

Ստացված տվյալները դասակարգվել են ըստ.

ա/ Տվյալ ժամանակահատվածում մասնակիցների սննդային վարքի

դրսևորման առանձնահատկություններին,

բ/ Վարքի մոտորային դրսևորումների առանձնահատկություններին, ինչը ներառել է հետազոտվողների միջև հեռավորության առկայությունը, հպումները, համատեղ գործողությունները,

գ/ Վարքի վերբալ դրսևորումների, որոնք ներառում են խոսքի բովանդակությունը, ուղղվածությունը, հաճախականությունը, ինտենսիվությունը, տևողությունը,

դ/ Վարքի ոչ վերբալ դրսևորումների, որոնք ներառում են դեմքի միմիկան, ժեստերը, դրանց արտահայտվածությունն ու ինտենսիվությունը, մասնավորապես սննդի, սննդային վարքի, մարմնակազմի և նման թեմաների շուրջ խոսակացությունների ժամանակ:

Տրամաբանական և պատճառահետևանքային վերլուծության արդյունքում պարզվեց.

ա/ Սննդային վարքի սահմանափակումային շեղում ունեցող աղջիկները ուսումնական գործընթացի և դրա ընդմիջումների ընթացքում սննդից հրաժարվում են, միջանձնային հարաբերություններում ձգտում են խուսափել հպումներից, խմբի մյուս անդամներից պահպանել ֆիզիկական հեռավորություն: Ընդմիջումներին կամ մեկուսանում են, կամ հավաքվում միմյանց հետ սննդակարգի առանձնահատկություններ, մարմնակազմ քննարկելու և ամսագրեր թերթելու համար: Այս գործընթացի ընթացքում վերջինների շարժումների, միմիկայի, ժեստերի ինտենսիվությունը կտրուկ բարձրանում է: Խմբում սկսում է տիրել ոգևորության մթնոլորտ: Մասնակիցները միմյանց հաճախի ընդհատում են: Այս խմբի ներկայացուցիչները իրենց սննդային վարքի գաղափարները չկիսող հասակակիցներին անտեսում են և շփման հավանականությունը վերջինների հետ ձգտում են կանխել:

Այս տեղից կարող ենք եզրակացնել, որ «սննդային վարքի հոլլանդական հարցաշարի» արդյունքում ստացված տվյալ մասնակիցների մոտ սննդային վարքի սահմանափակումային շեղման առկայության մասին տվյալները հաստատվում են: Վերջինները՝ ձգտելով սահմանափակել սննդային վարքը, ուսումնական



գործընթացի ժամանակահատվածում հրաժարվում են սննդի ընդունումից: Սահմանափակումային վարքի հակվածությունն արտահայտվում է նաև խոսակցից ֆիզիկական հեռավորությունն պահպանելու միտման մեջ: Խոսակցության մեջ մարմնակազմի, ամսագրերի, դիետաների, սննդակարգի թեմաների գերակայությունը խոսում է տվյալ մասնակիցների մոտ կանացի արտաքինին վերագրվող ամսագրային չափանիշներին տրվող մեծ նշանակության մասին: Թեմաների քննարկման ընթացքում շարժումների, ժեստերի, դեմքի միմիկայի ինտենսիվության բարձրացումը վկայում է դրանցում վերջինների հետաքրքրվածության բարձր մակարդակի մասին: Չետևաբար, ըստ դիտման հոգեախտորոշիչ մեթոդի արդյունքում ստացված տվյալների գնահատման՝ դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի սահմանափակումային շեղման առաջացումը սեփական մարմնակազմի նկատմամբ սևեռվածության, սոցիալ-մշակութային կարծրատիպերի և անձնային հատկանիշների արդյունք է:

բ/ Սննդային վարքի հուզածին շեղում ունեցող աղջիկները ուսումնական գործընթացի ընդմիջումներին չեն հրաժարվում սննդից: Դրա ընդունումն իրականացվում է մասնավորապես այն առարկաների դասաժամերից առաջ, կամ հետո, որոնցում վերջինների առաջադիմությունը ցածր է: Առանձնապես խուսափում են շփումից խմբի այն անդամների հետ, որոնց մոտ առկա է սննդային վարքի սահմանափակումային շեղում: Խուսափում են սննդակարգին ու մարմնակազմին վերաբերող թեմաների քննարկումից: Այդպիսի թեմաների քննարկման հանգամանքներում վերջինների շարժումների և դեմքի միմիկայի ինտենսիվությունն արագանում է՝ արտահայտելով ստույգ տհաճություն: Խմբի ներսում կամ ընգծվածորեն մեկուսացած են, կամ ուսումնական գործընթացի և ընդմիջումների ընթացքում շփվում են գույգերով:

Այստեղից կարող ենք հետևությունն անել, որ տվյալ մասնակիցների մոտ «սննդային վարքի հոլլանդական հարցաշարի» կիրառման արդյունքները՝ սննդային վարքի հուզածին շեղման առկայության մասին հաստատվում են: Սննդային վարքի կտրուկ

փոփոխությունները՝ կախված առարկայական առաջադիմության գործոնից, խոսում է այն մասին, որ տվյալ մասնակիցները հոլգական լարվածություն են ապրում այն առարկաների դասաժամերից առաջ, կամ հետո, որոնցում ունեն ցածր առաջադիմության ցուցանիշ: Այդպիսի լարվածության պարագայում նրանց մոտ արտահայտվում է սննդային վարքի հոլգածին շեղման առկայությունը: Սննդակարգի, մարմնակազմի, դիետաների թեմաների քննարկման ժամանակ շարժումների, միմիկայի, ժեստերի ինտենսիվության արտահայտվածությունը և տհաճության զգացումի ցուցաբերումը պայմանավորված են տվյալ անձանց համարկանացի կերպարի սոցիալ-մշակութային կարծրատիպերի նշանակությամբ, որոնց սակայն վերջինները՝ ի գորու անձնային հատկանիշների, չեն ձգտում, կամ չեն կարողանում համապատասխանել: Շփման մակարդակի ցածրությունը այս հանգամանքներում խոսում է ինքնագնահատականի անկայուն վիճակի մասին:

գ/ Սննդային վարքի էքստերնալ շեղում ունեցող մասնակիցները ձգտում են շփվել խմբի բոլոր, այդ թվում սննդային վարքի սահմանափակումային և հոլգածին շեղում ունեցող անդամների հետ: Ուսումնական գործընթացում և դրա ընդմիջումներում ստույգ ձևավորված սննդային վարք չեն դրսևորում: Ունեն խոսակցին հավելում, նրա հագուստին, գրենական պիտույքներին, գրքերին ձեռք տալու արտահայտված հակվածություն: Դեմքի միմիկայի, ժեստերի, շարժումների ինտենսիվությունն անկախ հանգամանքներից բարձր է: Չակված են միևնույն միտքը մի քանի անգամ արտահայտելու:

Չետևաբար, «սննդային վարքի հոլլանդական հարցաշարի» կիրառման արդյունքները հաստատվում են նաև սննդային վարքի էքստերնալ շեղում ունեցող մասնակիցների պարագայում: Սննդային վարքի ստույգ կողմնորոշման բացակայությունը խոսում է դրա կախվածության մասին արտաքին միջավայրից: Շփման վերբալ և ոչ վերբալ առանձնահատկությունները վկայում են շփման պահանջի բարձր մակարդակի մասին: Այդ պահանջի բավարարման համար տվյալ մասնակիցները դրսևորում են սննդային վարքի հարմարվողականություն: Չետևաբար, վերջինների մոտ

սննդային վարքի էքստերնալ շեղման առաջացումը պայմանավորված է շփման պահանջի բարձր մակարդակի արդյունքում սոցիալական խմբում ընդունված լինելու ձգտմամբ: Հետազոտության հաջորդ փուլում սննդային վարքի սահմանափակումային, հուզածին, կամ էքստերնալ շեղում ունեցող 200 մասնակիցների շրջանում կիրառվեց հոգեախտորոշիչ գրույցի մեթոդը: Մեթոդի կիրառման իմաստն էր հաստատել դիտման մեթոդի արդյունքում ստացված տեղեկատվության ճշգրտությունը և պարզաբանել, թե որպիսին են այն սոցիալական դիրքորոշումները, որոնք ընկած են տվյալ անձանց մոտ սննդային վարքի շեղումների առաջացման հիմքում:

Հոգեախտորոշիչ գրույցի մեթոդի կիրառումը հոգեախտորոշիչ աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ գործընթաց է: Այն հնարավորություն է տալիս պարզաբանելու հետազոտվողների անձնային հատկանիշների այնպիսի նրբություններ, որոնք անկարելի է բացահայտել այլ հոգեախտորոշիչ մեթոդների կիրառման միջոցով: Հոգեախտորոշիչ գրույցի ընթացքում հոգեբանը հնարավորություն ունի հետազոտության մասնակցի համար վստահության մթնոլորտ ստեղծելու, պարզելու նրա մոտ առկա ներընտանեկան, միջանձնային, ներանձնային խնդիրների մանրամասները, կյանքի պատմությունը, հոգեախտորոշման առարկայի ձևավորման պատմությունը:

Տվյալ աշխատանքի շրջանակում կիրառված հոգեախտորոշիչ գրույցն անց է կացվել ազատ հարցազրույցների տեսքով: Մեթոդի կիրառման պլանը ներառել է.

1. Հոգեբանական հարմարում, ինչը ներառել է հարցվողների մարմնի դիրքի, խոսքի առանձնահատկությունների /խոսքի արագություն, ձայնի բարձրություն և այլն/, ժեստերի, շարժողական ակտիվության, միմիկայի, շնչառության, ռեպրեզենտատիվ համակարգերի հետ հարմարում: Այս փուլում հարցվողների մոտ առաջացել է հոգեբանի հետ հուզական նմանության զգացում:

2. Զրույցի ընթացքում տրվող հարցերի ստույգ պլանավորում: Իրականացված հոգեախտորոշիչ գրույցի ընթացքում մասնակիցներին տրվող հարցերը վերաբերվել են.

1. Ծնողների հետ փոխհարաբերությունների առանձնահատկություններին,
2. Ընտանիքում գործող սննդային վարքի մոդելներին,
3. Ընտանիքում գործող կանացի արտաքին տեսքի նկատմամբ վերաբերմունքին,
4. Մասնակիցների ներխմբային հարաբերությունների առանձնահատկություններին,
5. Միջանձնային և միջսեռային հարաբերությունների առանձնահատկություններին,
6. Սննդի և դրա ընդունման նկատմամբ վերաբերմունքին,
7. Կանացի արտաքին տեսքին թելադրվող սոցիալ-մշակութային կարծրատիպերի մասին պատկերացումներին և վերաբերմունքին,
8. Սեփական արտաքին տեսքի, մարմնակազմնի նկատմամբ վերաբերմունքի առանձնահատկություններին:

Մեթոդի կիրառման արդյունքներն օրինաչափային են:

Սննդային վարքի սահմանափակումային շեղում ունեցող 102 հետազոտության մասնակիցների պատասխանները հոգեախտորոշիչ գրոլյցի փուլում նախատեսված հարցերին ցույց տվեցին, որ.

1. Ծնողների հետ փոխհարաբերությունները հիմնականում բարդ են, ծնողական սպասումները վերջինների ուսումնական առաջադիմության և արտաքին տեսքի նկատմամբ բարձ են:

2. Ընտանիքում սննդային վարքին հատուկ նշանակություն է տրվում: Ծնողները «առողջ ապրելակերպի» հետևորդներ են, ոմանք հաճախակի մարզվում են, մյուսներն օգտագործում են բուսական սնունդ, երրորդները՝ հատուկ սննդակարգով են սնվում և միևնույնը պահանջում են երեխաներից:

3. Այսպիսի ընտանիքներում կանացի արտաքինի նկատմամբ վերաբերմունքը նախանձախնդիր է: Ծնողները խստորեն հետևում են իրենց մարմնակազմին և միևնույնը պահանջում են երեխաներից: Հատուկ նշանակություն է տրվում մոդայիկ տենդենցներին:

4. Ներխմբային հարաբերությունների ոլորտում կարելի է ասել, որ ընդհանուր առմամբ տվյալ մասնակիցների մոտ ներխմբային շփումը դժվարացած է, ակնհայտորեն բաց կոնֆլիկտային հարաբերություններ չկան:

5. Այս մասնակիցները միջանձնային հարաբերությունների որակը գնահատել են դրական, ունեն մշտական շփման ընկերական շրջապատ, խմբում շփումը գնահատել են բավարար: Միջսեռային հարաբերությունների ոլորտում այս մասնակիցները համարում են, որ կանացի արտաքինը մեծ նշանակություն ունի հակառաս սեռի հետ հարաբերություններում:

6. Սննդի և դրա ընդունման գործընթացի նկատմամբ վերաբերմունքը այս խմբի մասնակիցների մոտ խուսափողական է:

7. Կանացի արտաքին տեսքին վերաբերվող պատկերացումների քննարկումը ցույց տվեց, որ տվյալ խմբի մասնակիցների համար մարմնակազմն ու մոդայիկ տենդենցները մեծ նշանակություն ունեն: Նրանք հաճախակի մարզվում են, ձգտում են խուսափել տրանսպորտային միջոցներից և վերելակներից օգտվելուց, հատուկ ուշադրություն ամբեն հետևում սեփական հագուկապին:

8. Չնայած հաճախակի մարզումներին, արտահայտված սահմանափակումային սննդային վարքին, մարմնակազմի ակնհայտ թերությունների բացակայությամբ, այս խմբի մասնակիցները համոզված են, որ իրենց մարմնակազմը հեռու է կանացի մարմնի իդեալներից և իրենք նիհարելու կարիք ունեն:

Սննդային վարքի հուզածին շեղում ունեցող հետազոտության մասնակիցների պատասխանները զրույցի փուլում տրված հարցերին ցույց տվեցին, որ.

1. Ծնողների հետ հարաբերություններն այս խմբի մասնակիցներից 72-ը բնորոշեցին որպես ալիքածև՝ կախված ծնողների զբաղվածության աստիճանից: Մնացած 6-ը ծնողների հետ հարաբերությունների վերաբերյալ հարցին գերադասեցին չպատասխանել: Այս երևույթը մատնանշում է, որ վերջինների մոտ առկա է ծնողական ուշադրության և քնքշանքի պակաս:

2. Ընտանիքում ընդունված սննդային վարքի մոդելը այս խմբի մասնակիցները գնահատել են, որպես իրադրային՝ կախված օրվա հանգամանքներից: 68 մասնակիցները նշել են, որ սննդի ընդունման որոշակի ժամ ընտանիքում չկա: Այս մասնակիցների ծնողները մինչև ուշ երեկո աշխատավայրում են գտնվում, հետևաբար դստեր սննդային սովորությունները ծնողական աչքի համար անտեսանելի

են: Այս խմբի մնացած 10 մասնակիցները պարզապես նշել են, որ սննդի ընդունման որոշակի ժամային ռեժիմ չունեն: Յետևաբար վերջինները չունեն ստույգ սննդակարգ և սննդային վարքի կողմնորոշված ընտանեկան մոդել:

3. Այս մասնակիցների ընտանիքներում կանացի արտաքին տեսքի նկատմամբ ուշադրության մակարդակը բարձր է: Մոդայիկ տենդենցները ընտանիքում չեն քննարկվում: Յագուստն ընտրվում է՝ ելնելով հարմարավետության տեսանկյունից:

4. Սննդային վարքի հուզածին շեղում ունեցող 78 աղջիկներից 73-ը ներխմբային հարաբերությունները գնահատել են ոչ բավարար:

Վերջինները հակված են մեկուսացման: Սակայն խմբում ակնհայտ կոնֆլիկտային հարաբերություններ չունեն: Գերադասում են խուսափել խմբի ներքին գործընթացների մասնակցելուց: Մնացած 5 մասնակիցները ներխմբային հարաբերությունները գնահատել են միջին:

5. Միջանձնային և միջսեռային հարաբերությունների մասին այս խմբի մասնակիցների կարծիքը համընկավ սննդային վարքի սահմանափակումային շեղում ունեցող մասնակիցների կարծիքի հետ՝ առայն, որ միջսեռային հարաբերություններում կանացի արտաքին տեսքը որոշիչ գործոն է:

6. Սննդին և դրա ընդունմանը հատուկ նշանակություն է տրվում: Մասնակիցները նշել են, որ սիրում են համեղ ուտել և հատկապես հաճախ քաղցրավենիք են օգտագործում:

7. Կանացի արտաքին տեսքին թելադրվող սոցիալ-մշակութային կարծրատիպերի նշանակությունը այս խմբի մասնակիցների մոտ ցածր է, սակայն վերջինները հակված են էքսցենտրիկ հագուստ կրելուն: Առանձնանում են հագուստի մեջ ոճային և գունային առումներով անհամատեղելի համատեղելու միտմամբ:

8. Այս խմբի մասնակիցների վերաբերմունքը սեփական մարմնակազմին խիստ բացասական է: Սակայն վերջինները համոզված են, որ իրենց բնական կառուցվածքը անհնար է փոփոխել:

Սննդային վարքի էքստերնալ շեղում ունեցող 20 մասնակիցների հետ կիրառված հոգեախտորոշիչ գրույցի արդյունքում ստացված տվյալները հետևյալն են.

1. Ծնողների հետ հարաբերությունները այս խմբի մասնակիցներից 19-ը գնահատել են որպես վստահելի: 1 մասնակից նշել է, որ լարված հարաբերությունների հոր և վստահելի հարաբերությունների՝ մոր հետ:

2. Ընտանիքում ընդունված սննդային վարքի մոդելը ենթադրում է ժամային և սննդատեսակային առումով ստույգ սննդակարգ, սեղանի շուրջ հաճախակի բարեկամական և ընկերական հավաքներ: Սննդի ընդունման ժամերը ստույգ որոշված են և ընտանիքում դրանից հրաժարվելու հավանականությունը բացառվում է:

3. Կանացի արտաքին տեսքին, մասնավորապես մոդային տենդենցներին ընտանիքում տրվում է մեծ նշանակություն:

4. Ներխմբային հարաբերություններում այս խմբի մասնակիցները որևէ դժվարություն չունեն: Ակնհայտ կոնֆլիկտների, կամ մեկուսացման հակված չեն: Ներխմբային շփման մակարդակը բարձր են գնահատել:

5. Միջանձնային հարաբերությունները բոլոր 20 մասնակիցները դրական են գնահատել: Միջսեռային հարաբերությունների վերաբերյալ՝ համարում են, որ կանացի արտաքին տեսքը նշանակալի գործոն է հակառակ սեռի մոտ հաջողություն ունենալու համար:

6. Սննդի և դրա ընդունման նկատմամբ վերաբերմունքը միանշանակ է: Ընտանիքում առկա սննդային ռեժիմը չեն խախտում: Նշում են, որ շատակերության դրվագներ են ունենում բարեկամական և ընկերական հավաքույթների ժամանակ:

7. Կանացի արտաքին տեսքին թելադրվող սոցիալ-մշակութային կարծրատիպերի թվում նշանակություն է տրվում ոչ այնքան մարմնակազմին, որքան մոդային տենդենցներին:

8. Սեփական արտաքինի, մարմնակազմի նկատմամբ վերաբերմունքը բավարար է: Սակայն, չնայած ակնհայտ թերությունների բացակայությանը, վերջինները նշում են, որ կցանկանային նիհարել:

Այսպիսով, զրույցի փուլում ստացված տվյալները ցույց տվեցին, որ.

ա/ Սննդային վարքի սահմանափակումային շեղում ունեցող, դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների սննդային վարքի մոդելի ձևավորման գործում դեր են ունեցել ծնողական սննդային վարքի առանձնահատկությունները, ընտանիքում կանացի արտաքինին և մարմնակազմին տրվող բարձր նշանակությունը, միջսեռային հարաբերություններում կնոջ արտաքինին վերագրվող նշանակությունը, կանացի արտաքինին թելադրվող սոցիալ-մշակութային կարծրատիպերի և ամսագրերի ազդեցությունը:

բ/ Սննդային վարքի հոլգածին շեղում ունեցող, դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների սննդային վարքի մոդելի ձևավորման գործընթացին նպաստել են ծնողների հետ հարաբերությունների անկայունությունը, հետևաբար ապահովության զգացման բացակայությունը, ընտանիքում ստույգ սննդակարգի և սննդային վարքի մոդելի բացակայությունը, ներխմբային հարաբերություններից անբավարարվածությունը, մեկուսացման միտումը (ինչը հավանաբար ներքին ապահովության զգացման բացակայության արդյունք է), միջսեռային հարաբերություններում կնոջ արտաքինին վերագրվող նշանակությունը, սեփական մարմնակազմի նկատմամբ բացասական վերաբերմունքը:

գ/ Սննդային վարքի էքստերնալ շեղում ունեցող, դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ տվյալ շեղման առաջացման գործընթացին նպաստել են ընտանիքում ընդունված սննդային խրախճանքների վարքային մոդելը, ընտանիքում կանացի արտաքին տեսքին տրվող մեծ նշանակությունը, միջսեռային հարաբերություններում կնոջ արտաքինին վերագրվող նշանակությունը, միջանձնային հարաբերություններում հարմարվողականության միտումը, մոդայիկ տենդենցների նշանակության գերազնահատումը, սեփական մարմնակազմի նկատմամբ դժգոհությունը:

Հաջորդ փուլում սննդային վարքի սահմանափակումային, հոլգածին, կամ էքստերնալ շեղում ունեցող 200 հետազոտվողների



շրջանում իրականացվեցին հետազոտության ծրագրով նախատեսված հոգեբանական թեսթավորումներ:

Յոգեախտորոշիչ թեսթն, ըստ էության, անձի վարքային մոդելների ընտրության չափման հարաբերականորեն օբյեկտիվ և արժանահավատ մեթոդ է: Յոգեախտորոշիչ թեսթը անձի հոգեբանական հատկանիշների չափման հատուկ գործիք է, որը կազմված է հարցերի և առաջադրանքների համակարգերից և ուղղված է անձի անձնային առանձնահատկությունների և մտավոր ընդունակությունների բացահայտմանը [14, էջ 99-100]:

Յոգեախտորոշիչ հետազոտության շրջանակում հոգեբանական թեսթերի անհրաժեշտությունը հիմնավորվում է դրանց օբյեկտիվության, վալիդայնության և արժանահավատության բարձր մակարդակով:

Յոգեախտորոշիչ թեսթավորումների մեթոդի կիրառումը տվյալ հետազոտության շրջանակում թույլ է տվել բացահայտել այն անձնային հատկանիշները և դիրքորոշումները, որոնք նպաստել են հետազոտության մասնակիցների մոտ սննդային վարքի շեղումների առաջացմանը:

Այսպիսով, հետազոտության հաջորդ փուլում մասնակիցների հետ իրականացվեց 1954 թվականին Ջ. Բաթլերի և Գ. Յայդի կողմից մշակված «ԵՍ իրականի» և «Ես կատարյալի» տարբերությունները բացահայտող թեսթավորում՝ վերջինների մոտ սննդային վարքի շեղումների առաջացման կապը սեփական անձի և արտաքինի բացասական գնահատման հետ: Յարգաշարը կազմված է 50 հաստատական նախադասություններից: Այն ներառում է գնահատման երեք սանդղակ, որոնցից առաջինը նախատեսված է իրական, երկրորդը՝ կատարյալ «ԵՍ»-ի հատկանիշների, իսկ երրորդ սանդղակը՝ այդ տարբերությունների գնահատման համար:

Թեսթի արդյունքների վերլուծությունը կատարվում է երեք փուլերով: Առաջին փուլի նպատակն է պարզել, թե ինչպիսին է անձը տեսնում ինքն իրեն ներկայում, ինչպիսի սոցիալական ինքնազգացողություն և ինքնազնահատական ունի, ինչպես է գնահատում ինքն իրեն որպես անձ, ինչպիսի որակներ է վերագրում ինքն իրեն: Այս ենթաբաժնի արդյունքները հաշվարկվում են

հետևյալ կերպ.

ա/ Տրված 50 հաստատական նախադասություններից հարցվողն ընտրում է հինգ առավելապես իրեն բնորոշ հատկանիշներ և դրանք գնահատում 1 միավոր:

բ/ Հարցվողն ընտրում է ընդհանուր առմամբ իրեն բնորոշ 12 հատկանիշներ և դրանք գնահատում 2 միավոր:

գ/ Հարցվողն ընտրում է 5 առավելապես իրեն ոչ բնորոշ հատկանիշներ և դրանք գնահատում 5 միավոր:

դ/ Հարցվողն ընտրում է 12 ընդհանուր առմամբ իրեն ոչ բնորոշ հատկանիշներ և դրանք գնահատում 4 միավոր:

ե/ Մնացած 16 հարցերը գնահատվում են 3 միավոր:

Թեսթի գնահատման երկրորդ փուլի արդյունքների հաշվարկը կատարվում է նախորդ փուլի հրահանգների համաձայն, և ստացված արդյունքները դրվում են երկրորդ սանդղակում:

Թեսթի արդյունքների գնահատման երրորդ փուլում՝ երրորդ սանդղակում կատարվում է առաջին երկու սանդղակների համեմատություն և ստացված միավորների տարբերությունները լրացվում են երրորդ սանդղակում: Բոլոր երեք սանդղակներում ստացված արդյունքները գումարվում են ըստ սանդղակների: Ստացված արդյունքի մեծությունը ցույց է տալիս իրական «ԵՍ»-ով անձի չբավարարվածության մակարդակը: Չբավարարվածության ամենաբարձր ցուցանիշը 4 միավորի տարբերությունն է յուրաքանչյուր հարցի համար: Այն հարցերը, որոնց արդյունքները 4 միավորի տարբերություն են ցույց տալիս՝ մատնանշում են սեփական

Ես-ի նկատմամբ անձի չբավարարվածության հատկանիշները: Այն հարցերը, որոնց արդյունքների տարբերությունը գրոյական է՝ մատնանշում են այն հատկանիշները, որոնցով անձը ընդհանուր առմամբ բավարարված է:

Տվյալ թեսթավորման արդյունքները ցույց տվեցին, որ.

1.Սահմանափակումային սննդային վարքի շեղում ունեցող մասնակիցների շրջանում 4 միավորի օրինաչափային տարբերություն բացահայտվեց հետևյալ կետերում.

ա/ Ես գոհ եմ ինձանից,

բ/Ես հակառակ սեռի համար գրավիչ եմ,

գ/Ինձ սովորաբար դուր են գալիս շրջապատող մարդիկ:

Այս տեղից եզրակացնում ենք, որ դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի սահմանափակումային շեղման առկայությունը զուգակցվում է սեփական արտաքին տեսքի նկատմամբ դժգոհության բարձր մակարդակով, ինքնաքավարարվածության զգացման բացակայությամբ և շփման խնդիրներով:

2.Սննդային վարքի էքստերնալ շեղում ունեցող մասնակիցների շրջանում տվյալ թեսթավորման արդյունքում 4 միավորի տարբերությունն բացահատվեց հետևյալ կետերում.

ա/Ես հաճելի անձնավորություն եմ, բ/Ես համառ եմ,

գ/Ես նախաձեռնող եմ,

դ/Ես պատասխանատու եմ:

Չե տեսաբար, դեռահասության, կամ վաղ պատանեկության

փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի էքստերնալ շեղումը զուգակցվում է շրջապատի հավանությանը արժանանալու ձգտմամբ, սեփական կարծիքի և կամային որակների նկատմամբ անվստահությամբ:

3.Սննդային վարքի հուզածին շեղում ունեցող մասնակիցների մոտ տվյալ թեսթավորման արդյունքում 4 միավորի տարբերությունն բացահատվեց հետևյալ կետերում.

ա/Ես բացարձակ հանգիստ եմ և ինձ ոչինչ չի անհանգստացնում, բ/Ես ինքնավստահ եմ,

գ/Ես շփվող եմ,

դ/Ես հավասարակշռված եմ,

ե/ Սովորաբար ես շրջապատիս հետ հարմարավետ հարաբերություններ եմ ստեղծում, գ/ Ինձ համար ինքնակառավարման խնդիր գոյություն չունի:

Ստացված արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի էքստերնալ շեղման առաջացումը զուգակցվում է ներքին հանգստության զգացման և հավասարակշռվածության պակասի, ինքնավստահության ցածր

մակարդակի և շփման խնդիրների առկայություն հետ:

Յետազոտության մասնակիցների բազային համոզմունքների դուրս բերման և սննդային վարքի սահմանափակումային, հուզածին ու էքստերնալ շեղումների առաջացման հետդրանց հնարավոր կապի բացահայտման համար հետազոտվողների շրջանում կատարվել է ամերիկացի հոգեբան Ռ. Ջանոֆֆ-Բուլլմանի մշակած բազային համոզմունքների բացահայտման թեսթի կիրառում: Թեսթն իրականացվել է հետազոտության մասնակիցների մոտ շրջապատող աշխարհի, բարու և չարի վերաբերյալ պատկերացումները, մարդկանց նկատմամբ սպասումների առանձնահատկությունները, անձնային իմաստների համակարգը, սեփական Ես-ի արժեքավորություն մասին պատկերացումները բացահայտելու համար:

Տվյալ հարցաշարը մշակվել է անձի բազային համոզմունքների կոգնիտիվ կոնցեպիայի համաձայն, ըստ որի անձի բազային զգացմունքներից է ապահովության զգացումը: Թեսթը կազմված է 32

հաստատական նախադասություններից, որոնց համար առաջարկված են պատասխանների 6 տարբերակներ, որոնք են. ա/ Բացարձակապես համաձայն չեմ (1 միավոր), բ/ Յամաձայն չեմ (2 միավոր), գ/ Այնքան էլ համաձայն չեմ (3 միավոր), դ/ Յամարյա համաձայն եմ (4 միավոր), ե/ Յամաձայն եմ (5 միավոր) և զ/ Լրիվ համաձայն եմ (6 միավոր): Թեսթի արդյունքների վերծանումը կատարվում է ըստ միավորների քանակի: Դրանց ցուցանիշների գնահատումը բաժանված է ըստ 8 ենթամասերի, որոնցից յուրաքանչյուրը վերաբերվում է բազային համոզմունքների տարբեր ասպարեզներին: ( - նշանով առանձնացված հարցերն ունեն հակառակ նշանակություն) Ընդ որում յուրաքանչյուր ենթամասում ներառված է 4 հարց: Բազային ապահովության զգացումը համարվում է նորմայի սահմաններում այն ենթամասերի համար, որոնց պատասխանների գումարը կազմում է 3,5 միավոր: Դրանից բարձր արդյունքները ցույց են տալիս լավատեսական տրամադրվածություն, մինչդեռ 3,5-ից ցածր արդյունքները մատնանշում են այն ասպարեզները, որոնցում հարցվողը հոգեբանական խնդիրներ ունի:

1) Աշխարհի դրական տրամադրվածություն (BW, benevolence of world)

5, 9, 25, 30

2) Մարդկանց բարություն (BP, benevolence of people)

-2, 4, -12, 26

3) Աշխարհի արդարություն (J, justice)

1, 7, 14, 19

4) Աշխարհի կառավարելիություն (C, control)

11, 20, 22, 29

5) Իրարարձությունների պատահականություն (R, randomness)

3, 6, 15, 24

6) Սեփական «ԵՍ»-ի արժեքավորություն (SW, self-worth)

-8, -18, 28, -31

7) Ինքնակառավարում և սեփական կյանքի իրարությունների կառավարում (SC, self-control)

13, 17, 23, 27

8) Հաջողականություն (L, luckiness)


10, 16, 21, 32

Այսպիսով սննդային վարքի սահմանափակումային, հոլզածին, կամ էքստերնալ շեղում ունեցող, դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների շրջանում իրականացված բազային համոզմունքների բացահայտման թեսթավորման արդյունքում ստացվեցին հետևյալ տվյալները.

ա/ Բազային համոզմունքների բացահայտման թեսթավորման արդյունքները 3,5-ից ցածր միավորների առկայությունն ցույց տվեցին սննդային վարքի հոլզածին շեղում ունեցող 78 մասնակիցներից 44-ի մոտ՝ թեսթի 1, 2, 7 ենթաբաժիններում: 9 մասնակիցների արդյունքները 3,5-ից ցածր միավոր ցույց տվեցին 2, 3, և 25 մասնակիցների արդյունքները՝ 1, 6, 7 ենթաբաժիններում: /Աղյուսակ 2./

Աղյուսակ 2

Բազային համոզմունքներ. Սննդային վարքի հոլզածին շեղում.



Այս տեղից կարելի է եզրակացնել, որ սննդային վարքի հոլզածին շեղում ունեցող, դեռահասու թյան, կամ վաղ պատանեկու թյան փուլում գտնվող աղջիկների համար բնորոշ է բազային ապահովու թյան զգացման բացակայու թյունը՝ մասնավորապես աշխարհի և մարդկանց նկատմամբ վստահու թյան, արդարու թյան, սեփական «ԵՍ»-ի արժեքավորու թյան և ինքնակառավարման ասպարեզներում:

Չե տևաբար սննդային վարքի հոլզածին շեղման առկայու թյունը դեռահասու թյան, կամ վաղ պատանեկու թյան փուլում գտնվող աղջիկների մոտ զուղակցվում է բացասական մտածողու թյամբ և արտաքին աշխարհի, ինչպես նաև սեփական անձի նկատմամբ բացասական վերաբերմունքով:

Այս տեղից կարելի է եզրակացնել, որ սննդային վարքի հոլզածին շեղում ունեցող, դեռահասու թյան, կամ վաղ պատանեկու թյան փուլում գտնվող աղջիկների համար բնորոշ է բազային ապահովու թյան զգացման բացակայու թյունը՝ մասնավորապես աշխարհի և մարդկանց նկատմամբ վստահու թյան, արդարու թյան, սեփական «ԵՍ»-ի արժեքավորու թյան և ինքնակառավարման ասպարեզներում:


Չե տևաբար սննդային վարքի հոլզածին շեղման առկայու թյունը դեռահասու թյան, կամ վաղ պատանեկու թյան

փուլում գտնվող աղջիկների մոտ զուգակցվում է բացասական մտածողությամբ և արտաքին աշխարհի, ինչպես նաև սեփական անձի նկատմամբ բացասական վերաբերմունքով:

բ/ Սննդային վարքի էքստերնալ շեղում ունեցող մասնակիցների շրջանում իրականացված բազային համոզմունքների բացայտման թեստավորման արդյունքները ցույց տվեցին 3,5-ից պակաս միավորների առկայություն 20 մասնակիցներից 19-ի մոտ՝ թեստի 6 և 8 կետերում, որոնք համապատասխանաբար ենթադրում են տվյալ անձնաց մոտ բազային ապահովության զգացման բացակայություն՝ մասնավորապես սեփական «ԵՍ»-ի արժեքավորության և հաջողակության ապարեզներում: 1 մասնակցի արդյունքները 3,5-ից ցածր միավորներ ցույց տվեցին թեստի 6 և 7 ենթաբաժիններում: /Աղյուսակ 3./

Աղյուսակ 3.

Բազային համոզմունքներ. Սննդային վարքի էքստերնալ շեղում




Այս տվյալները տվյալ անձանց մոտ ցույց են տալիս սեփական հնարավորությունների նկատմամբ թերահավատություն և, ընդհանուր հոռետեսական տրամադրվածություն, բացասական կողմնորոշման սոցիալական սպասման բարձր մակարդակ և ցածր ինքնագնահատական:

գ/ Սննդային վարքի սահմանափակումային շեղում ունեցող,

դեռահասու թյան, կամ վաղ պատանեկու թյան փուլում գտնվող աղջիկների շրջանում իրականացված բազային համոզմունքների որոշման թեսթավորման արդյունքները տվյալ մասնակիցներից 94-ի մոտ 3,5-ից պակաս միավորների ցուցանիշ ցույց տվեցին թեսթի 1, 3, 4 և 6 ենթաբաժիններում: 8 մասնակիցների արդյունքները 3,5 միավորից ցածր գնահատվեցին 2, 5 և 8 ենթաբաժիններում: /Աղյուսակ 4./

Աղյուսակ 4.

Բազային համոզմունքներ. սննդային վարքի սահմանափակումային



շեղում

Չե տեսաբար տվյալ մասնակիցների մոտ մասնավորապես աշխարհի նկատմամբ վստահության, արդարության, աշխարհի կառավարելիության և սեփական «ԵՍ»-ի արժեքավորության ասպարեզներում ապահովության զգացումը

բացակայում է: Չե տեսաբար, սննդային վարքի սահմանափակումային շեղման առկայությունը դեռահասու թյան, կամ վաղ պատանեկու թյան փուլում գտնվող աղջիկների մոտ գուցակցվում է ցածր ինքնագնահատականով, սեփական կյանքի կառավարման զգացման բացակայությամբ:

Հատկանշական է, որ տվյալ թեսթավորման արդյունքները սննդային վարքի հուզածին և սահմանափակումային շեղում ունեցող մասնակիցների մոտ համընկան 1 և 3 կետերում, ինչը



ցույց տվեց, որ սննդային վարքի և՛ սահմանափակումային և՛ հուզածին շեղում ունեցող աղջիկների համար բնորոշ է աշխարհի նկատմամբ վստահության պակասը, արդարության նկատմամբ անհավատությանը:

Հատկանշական է նաև, որ թեսթավորման արդյունքները սննդային վարքի սահմանափակումային, հուզածին և էքստերնալ շեղում ունեցող մասնակիցների մոտ համընկան թեսթի 6-րդ կետում, ինչը մատնանշում է սեփական անձի արժեքավորության զգացման բացակայությունը:

Հետազոտության հաջորդ փուլում սննդային վարքի սահմանափակումային հուզածին, կամ էքստերնալ շեղում ունեցող մասնակիցների շրջանում Ա. Էլլիսի կողմից մշակված իռացիոնալ դիրքորոշումների բացահայտման թեսթավորում կատարվեց:

Իռացիոնալ դիրքորոշումների բացահայտման թեսթը կազմված է 50 հաստատական նախադասություններից, որոնք բաժանված են հետևյալ սասնդակների.

- «ոդբերգականացումե
- «սեփական անձի նկատմամբ պարտավորության զգացումե,
- «ուրիշների նկատմամբ պարտավորության զգացումե,
- «ինքնագնահատական և մտածողության ռացիոնալությունե,
- «ֆրոստրացիոն տլերանտությունե:

Թեսթի լրացման հրահանգը թելադրում է պատասխանների երեք տարբերակ. ա/ «Լրիվ համաձայնեմե (նշվում է A տառով),

բ/ «Համոզված չեմ (նշվում է B տառով),

գ/ «Բացարձակ համաձայն չեմե (նշվում է C տառով):

Թեսթի արդյունքների գնահատումը կատարվում է հետևյալ կերպ.

ա/A տառով նշված պատասխանները գնահատվում են 1 միավոր, բացի 1, 4, 13, 17, 20, 22, 25, 26, 28, 34, 38, 42, 46, 49 հարցերից, որոնք գնահատվում են 3 միավոր:

բ/ B տառով նշված բոլոր պատասխանները գնահատվում են 2 միավոր:

գ/ C տառով նշված բոլոր պատասխանները գնահատվում են 3 միավոր, բացի

1,4,13,17,20,22,25, 26,28,34,38,42,46,49 հարցերից, որոնք գնահատվում են 1 միավոր:

Արդյունքների վերծանումը կատարվում է ըստ առաջարկված սանդղակների հետևյալ կերպ.

- «ողբերգականացում» սանդղակին վերաբերվող կետերն են. 1,6,11,16,21,26,31,36,41,46,

- «սեփական անձի նկատմամբ պարտավորության զգացում» սանդղակին վերաբերվող կետերն են. 2,7,12,17,22,27,32,37,42,47,

- «ուրիշների նկատմամբ պարտավորության զգացում» սանդղակին վերաբերվող կետերն են. 3,8,13,18,23,28,33,38,43,48,

- «ինքնագնահատական և մտածողության ռացիոնալություն» սանդղակին վերաբերվող կետերն են. 5,10,15,20,25,30,35,40,45,50,

- «ֆրոստրացիոն տուերանտություն» սանդղակին վերաբերվող կետերն են. 4,9,14,19,24,29,34,39,44,49:

Թեսթի արդյունքների վերծանումը կատարվում է ըստ յուրաքանչյուր սանդղակում դրանց գումարային միավորների քանակի: Ընդ որում.

- 15 միավորից պակաս ցուցանիշը ցույց է տալիս սթրեսի հանգեցնող վառ արտահայտված իռացիոնալ դիրքորոշումների առկայություն,

- 15-22 միավորների ցուցանիշը ցույց է տալիս միջին արտահայտվածության իռացիոնալ դիրքորոշումների առկայություն, սթրեսի ծագման միջին հավանականություն,

- 22-ից ավելի միավորների թիվը ցույց է տալիս իռացիոնալ դիրքորոշումների բացակայություն:

Թեսթի արդյունքների վերլուծությունը կատարվում է ըստ սանդղակների.

«Ողբերգականացում» սանդղակը արտացոլում է իրադրությունների նկատմամբ անձի վերաբերմունքը: Այս սանդղակում ցածր միավորների առկայությունը ցույց է տալիս ամեն մանրուսքից ողբերգությունն սարքելու և տառապելու անձի հակվածությունը: Այս սանդղակում բարձր միավորները վկայում են հակառակի մասին:

«Սեփական անձի նկատմամբ պարտավորության զգացում»

սանդղակում ցածր միավորները վկայում են սեփական անձի նկատմամբ չափազանց բարձր պահանջներ դնելու անձի հակվածության մասին:

«Ուրիշների նկատմամբ պարտավորության զգացում» սանդղակում ցածր միավորները վկայում են ուրիշների նկատմամբ չափազանց բարձր պահանջներ դնելու և սպասումներ ունենալու անձի հակվածության մասին:


«Ինքնագնահատական և մտածողության ռացիոնալություն» սանդղակում ցածր ցուցանիշների առկայությունը ցույց է տալիս երևույթները համեմատելու և ամբողջությամբ գնահատելու անձի հակվածության մասին: Այս սանդղակի բարձր ցուցանիշները վկայում են հակառակի մասին:

«Ֆրոլստրացիոն տղերանտություն» սանդղակում բարձր ցուցանիշները վկայում են անձի բարձր սթրեսակայունության և մտածողության ռացիոնալության բարձր մակարդակի մասին: Այս սանդղակում ստացված ցածր ցուցանիշները վկայում են սթրեսակայունության ցածր մակարդակի և զգացմունքայնության մասին:

Տվյալ աշխատանքի շրջանակում այս թեսթավորման իրականացման իմաստն է եղել բացահայտել, թե սննդային վարքի սահմանափակումային, հուզածին, կամ էքստերնալ շեղում ունեցող մասնակիցների մոտ ինչպիսի իռացիոնալ դիրքորոշումներն են գերակշռում ու որքանով դրանք կարող են արտահայտվել սննդային վարքի շեղումների առաջացման ասպարեզում:

Թեսթավորման արդյունքում մենք ստացանք հետևյալ օրինաչափային տվյալները. ա/ Սննդային վարքի հուզածին շեղում ունեցող 78 աղջիկներից 56-ի մոտ 15-ից ցածր միավորներ ստացվեցին թեսթի «ողբերգականացում» սանդղակում: Այս տվյալները ցույց են տալիս, որ հարցվողները հակված են իրավիճակների գերազնահատման, կարող են փոքր անհաջողություններից ողբերգություն և սարքել և երկար տառապել այդ կապակցությամբ: Այս խմբի մասնակիցներից 22-մոտ ցածր ցուցանիշներ արձանագրվեցին «Ֆրոլստրացիոն տղերանտություն» սանդղակում, ինչը վկայում է

Իռացիոնալ դիրքորոշ ու մներ.




Այ սպիսի անձանց բնորոշ է գերզգայ ու նու թյ ու նը սոցիալ ական գնահատականների նկատմամբ: Մենդային վարքի հուզածին շեղումն այ ս անհատների մոտ հանդիսանում է ներքին ներդաշնակ ու թյ ան բացակայ ու թյ ան և անընդհատ հոգեբանական լարված ու թյ ան արդյ ու նքում ձևավորված կեղծ կոմպենսատոր մեխանիզմ, որն առանձնապես ցայ տու ն արտահայ տվում է սթրեսային պայ մաններում: Մի փոքր իրական կամ հնարածին բացասական սոցիալ ական գնահատականը տվյալ անձանց մոտ սուր տագնապի զգացող ու թյ ու ն է արթնացնում և վերջինները հակված են «վիշտը խեղդել ու »սենդային խրախճանքներում:

բ/ Մենդային վարքի էքստերնալ շեղում ու նեցող 20 աղջիկների մոտ թեսթավորման արդյ ու նքները ցույց տվեցին 15-ից պակաս միավորների առկայ ու թյ ու ն «սեփական անձի և ուրիշների նկատմամբ պարտավոր ու թյ ան զգացում» սանդղակում, ինչը ցույց է տալիս սեփական անձի և ուրիշների նկատմամբ չափազանց բարձր

պահանջներ դնելու, սոցիալական բարձր սպասումներ ունենալու հակվածություները: /Աղյուսակ 6./

Աղյուսակ 6.

Իռացիոնալ դիրքորոշումներ. Սննդային վարքի էքստերնալ



Այսպիսի արդյունքների հիման վրա կարելի է ենթադրել, որ սննդային վարքի էքստերնալ շեղում ունեցող, դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների համար հատկանշական է սոցիալական միջավայրի պայմաններին ամբողջությամբ վստահելու, դրանց անմնացորդ ենթարկվելու հակվածություները: Միևնույն մոդելով վերջիններն առաջնորդվում են նաև սննդային վարքի դրսևորումներում՝ անկայուն սննդային վարք ցուցաբերելով տարբեր սոցիալական խմբերում շփման ընթացքում:


գ/ Սննդային վարքի սահմանափակումային շեղում ունեցող 102 աղջիկներից 88-ի մոտ թեսթավորման արդյունքները ցույց տվեցին 15-ից ցածր միավորների առկայություն

«սեփական անձի նկատմամբ պարտավորվածության զգացում» և «ուրիշների նկատմամբ պարտավորվածության զգացում» սանդղակներում: Այս ցուցանիշները մատնանշում են սեփական անձի և ուրիշների նկատմամբ չափազանց բարձր պահանջներ և սպասումներ ունենալու հակվածություները: 10 մասնակիցների մոտ 15 -ից ցածր միավորների առկայությունն բացահայտվեց

«ողբերգականացում» և 4 մասնակիցների մոտ՝ «ինքնագնահատական և մտածողության ռացիոնալ ու թյուն սանդղակներում»: /Աղյուսակ 7./

Աղյուսակ 7.

Իռացիոնալ դիրքորոշումներ. Սննդային վարքի



սահմանափակումային շեղում

Կարելի է ենթադրել, որ սննդային վարքի սահմանափակումային շեղում ունեցող, դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ առկա են սեփական անձին և վարքածներին վերաբերվող իռացիոնալ դիրքորոշումներ: Դրանք արտահայտվում են սեփական անձի նկատմամբ չափազանց բարձր պահանջներ դնելու հակումով, ինչը հատկանշական է նաև սեփական մարմնակազմի ձևավորմանն ուղղված վարքային դրսևորումների համար:

Չե տազոտության հաջորդ փուլում նախատեսված էր Ռ. Լազարուսի և Ս. Ֆոլքմանի «գերակշռող վարքի միջոցներ» թեսթի կիրառումը, որն ուղղված է դժվարությունների հաղթահարման մարտավարությունների առանձնահատկությունների բացահայտմանը: Թեսթը բաղկացած է 50 հաստատական

նախադասություններից, որոնք ներառում են դժվարությունների հաղթահարման մարտավարությունները բնորոշող 8 սանդղակներ. - - «Կոնֆրոնտացիոն կոպիսզ», որը ներառում է 2,3,13,21,26,37 կետերը,

- «Յեռավորացում», որը ներառում է 8,9,11,16,32,35 կետերը,

- «Ինքնակառավարում», որը ներառում է 6,10,27,34,44,49,50 կետերը,

- «Սոցիալական աջակցության որոնում», որը ներառում է 4,14,17,24,33,36 կետերը,

- «Պատասխանատվության ընդունում», որը ներառում է 5,19,22,42 կետերը,

- «Փախուստ-խուսափում», որը ներառում է 7,12,25,31,38,41,46,47 կետերը,

- «Ինդրի լուծման պլանավորում», որը ներառում է 1,20,30,39,40,43 կետերը,

- «Դրական վերագնահատում», որը ներառում է 15,18,23,28,29,45,48 կետերը:

Թեսթի արդյունքների գնահատումը կատարվում է ըստ ստացված պատասխանների՝ հետևյալ կերպ.

- Երբեք – 0 միավոր,

- Չազվադեպ-1 միավոր,

- Երբեմն – 2 միավոր,

- Չաճախ- 3 միավոր:

Թեսթի արդյունքների վերծանման բանալին ենթադրում է միավորների նորմայ յուրաքանչյուր սանդղակի համար: Այսպես, ըստ հերթականության.

- «Կոնֆրոնտացիոն կոպիսզ»՝ 12-16 միավոր,

- «Յեռավորացում»՝ 12-16 միավոր,

- «Ինքնակառավարում»՝ 16-19 միավոր,

- «Սոցիալական աջակցության որոնում»՝ 14-17 միավոր,

- «Պատասխանատվության ընդունում»՝ 10-12 միավոր,

- «Փախուստ-խուսափում»՝ 15-22 միավոր,

- «Ինդրի լուծման պլանավորում»՝ 14-18 միավոր,

- «Դրական վերագնահատում»՝ 15-19 միավոր:

Թեսթի արդյունքների վերծանումը կատարվում է ըստ տրված սանդղակների.

1) Կոնֆրոնտացիա. Ենթադրում է ոչ միշտ նպատակային վարքային ակտիվության միջոցով խնդրի լուծում: Կոնֆրոնտացիոն մարտավարությունը դիտարկվում է որպես ոչ արդարացի: Դրա համար բնորոշ է անձի բարձր սթրեսակայունություն, խնդիրների լուծման նախաձեռնողականություն, սեփական շահերի պաշտպանման ունակություն:

2) Հեռավորացում. Բացասական զգացողություններին ցագառվելու հակվածություն՝ իրադարձություններին շանակությունը, դրանցում զգայական ներգրավվածության մակարդակը սուբյեկտիվորեն ցածրացնելով: Բնորոշ է ռացիոնալացման, ուշադրության շեղման, հումորի, իրավիճակի արժեքազրկման հակվածությունը:

3) Ինքնակառավարում. Առաջացած խնդրի նկատմամբ բացասական զգացողություններին նպատակաուղղված հաղթահարման մարտավարություն է, որի համար բնորոշ է վարքի կառավարման բարձր մակարդակը, ինքնակառավարման ձգտումը:

4) Սոցիալական աջակցության որոնում. Այս ռազմավարության համար բնորոշ է արտաքին ռեսուրսների ներգրավման միջոցով խնդրի լուծման ուղիների որոնումը, աջակցության, գործնական օգնության, ուշադրության, ապրումակցման սպասումը:

5) Պատասխանատվության ընդունում. Դժվարությունների հաղթահարման ռազմավարության համար բնորոշ է պարտքի սուր զգացումը, մեղքի զգացումը, ինքնամեղադրանքը:

6) Փախուստ-խուսափում. Այս ռազմավարության համար բնորոշ է խնդրից փախչելու հակվածությունը, դրա հերքումը: Այս ռազմավարության արտահայտվածությունը վկայում է սթրեսային իրավիճակներում ինֆանտիլ վարքաձևերի դրսևորման հակվածության մասին:

7) Խնդրի լուծման պլանավորում. Այս ռազմավարության համար բնորոշ է իրավիճակի նպատակաուղղված գնահատումը, դրա վերլուծությունը, հնարավոր վարքային մարտավարությունների ընտրությունը և անցյալի փորձի ու առկա ռեսուրսների վրա հիմնվելով՝ գործողություններին պլանավորումը:

8) Դրական վերագնահատում. Այս ռազմավարության համար



բնորոշ է բացասական ապրումների հաղթահարումը՝ դրա դրական վերագնահատման միջոցով: Այս մարտավարությունը գերադասող անձը դժվարություններին վերաբերվում է որպես անձնային աճի խթանիչներ: Հակված է խնդիրները գնահատել փիլիսոփայորեն և ձգտել ինքնազարգացման:


Այսպիսով, սննդային վարքի սահմանափակումային, հուզաճին, կամ էքստերնալ շեղում ունեցող աղջիկների շրջանում կատարված դժվարությունների հաղթահարման մարտավարությունները որոշող թեսթավորման արդյունքները ցույց տվեցին, որ.

ա/ Սննդային վարքի հուզաճին շեղում ունեցող 78 մասնակիցներից 70-ի մոտ բարձր արդյունքներ արձանագրվեցին դժվարությունների հաղթահարման «փախուստ-խուսափում» կոպիևգ ռազմավարության սանդղակում: Այս ռազմավարության ընտրությունը հատուկ է մասնավորապես թուլակամ անհատներին՝ բնավորության ինֆանտիլ գծերով: Այն բնորոշվում է անձի կողմից բացասական, կամ սթրեսային իրավիճակների նկատմամբ խուսափողական վարքաձևով՝ խնդրի ժխտմամբ, ուշադրության շեղմամբ, երևակայան պատկերացումներով, պաշտպանական փախուստով դեպի ինֆանտիլ վարքաձևեր: 8 մասնակիցների մոտ տվյալ թեսթավորման բարձր արդյունքներ արձանագրվեցին «հեռավորացում» սանդղակում, ինչը բնորոշում է բացասական զգացողություններից ազատվելու համար տարբեր ինտրենսկոպի լիբրառելու անձի հակվածությունը: /Աղյուսակ 8./

Աղյուսակ 8.

Դժվարությունների հաղթահարման մարտավարություններ.

**Սննդային վարքի հուզաճին շեղում**




Վերոհիշյալ բնորոշիչները պրոեկտվում են նաև սննդային վարքի սահմանափակումային, հուզածին և էքստերնալ շեղումների առաջացման հարթություն:

Այսպես տվյալ վարքային ռազմավարության ընտրությանը հակված աղջիկները մի կողմից ունեն սեփական մարմնի պատկերի նկատմամբ թերարժեքության զգացողության ժխտման միտում: Մյուս կողմից՝ նրանց հատուկ խնդիրներից է փախուստը դեպի ինֆանտիլ վարքային դրսևորումներ, ինչը բացատրում է «սթրեսը սննդում խեղդելու» նրանց հակվածությունը: Այս վարքաձևը անհատի կողմից յուրացվում է մանուկ հասակում, երբ երեխայի լացի պատճառը չհասկանալու արդյունքում ծնողները անմիջապես արձագանքում են երեխային քաղցած համարելով և կերակրելով: Միևնույն մեխանիզմով արդեն հասունացման փուլում անհատը սթրեսային պայմաններում ի հայտ եկած ցանկացած անհարմարության հիմքում ենթագիտակցորեն փնտրում է սովի զգացումը և դրա բավարարումը կապում անհարմարությունից ազատելու զգացողության հետ:

բ/ Սննդային վարքի էքստերնալ շեղումներ ունեցող 20 մասնակիցներից 18-ի մոտ բարձր միավորների արդյունք ստացվեց «սոցիալական աջակցության որոնման» և 2-ի մոտ՝ «պատասխանատվության ընդունման» սանդղակներում: Ընդ որում՝ «սոցիալական աջակցության որոնման» ռազմավարության ընտրությունը հատուկ է այն անձանց, ովքեր գերադասում են բարդ իրադրություններում դիմել հասարակական օգնությանը, լինի դատեղեկատվական, հուզական, թե գործնական օգնություն: Այս մարտավարությունն ընտրող անձանց բնորոշ է շփման ձգտումը, օգնության, կամ աջակցության, ուշադրության, խորհրդի, ապրումակցման սպասումը: Այս անձանց մասնավորապես հատուկ է կախվածությունը հասարակական կարծիքից և սոցիալական գնահատականներից: «Պատասխանատվության ընդունում» մարտավարությունը ցույց է տալիս պարտքի սուր զգացման և մեղքի գերզգացման առկայության հակվածություն: /Աղյուսակ 9./

Դժվարությունների հաղթահարման մարտավարություններ.

Սննդային վարքի էքստերնալ շեղում



Այսպիսի անձանց համար բնորոշ է սեփական անձի սոցիալական Նշանակության ցածր գնահատումը, ինքնաքննադատության և մեղքի զգացման բարձր մակարդակը: Կարելի է ասել, որ այս մարդիկ խրոնիկապես դժգոհ են սեփական անձից: Ընդ որում վերջիններին հատուկ է սեփական անձը խղճալու, ինքնատվայտման երևույթը: Այսպիսի անհատները պատրաստիլ ու ծումներ են փնտրում ցանկացած ասպարեզում և հակված են ընդունել ուրիշների դիրքորոշումները որպես սեփական դիրքորոշումներ: Ավելին, նրանք հակված են ուրիշների դիրքորոշումները համարել սեփական կարծիքից առավել և դրանց համապատասխան որոշակի վարքային մոդելներ դրսևորել: Միևնույն կերպ տվյալ հակումն արտահայտվում է նաև սննդային վարքի էքստերնալ խեղաթյուրումների հարթությունում:


գ/ Սննդային վարքի սահմանափակումային շեղում ունեցող 102 աղջիկներից 66-ի մոտ 13-18 միավորների արդյունք ստացվեց «կոնֆրոնտացիա», 30-ի մոտ՝ «ինքնակառավարում» և 6-ի մոտ՝ «խնդրիլ ու ծման պլանավորում» մարտավարությունների սանդղակներում: Ընդ որում. «Կոնֆրոնտացիա» մարտավարությունը հատուկ է անձանց,

ովքեր ունեն սոցիալական ադապտացիայի ցածր մակարդակ՝ մյուս կողմից օժտված լինելով բարձր կամային որակների առկայությամբ: /Աղյուսակ 10./

Աղյուսակ 10.

Դժվարությունների հաղթահարման մարտավարություններ.

Մենդային վարքի սահմանափակումային շեղում



Այս հանգամանքներում տվյալ գծերով օժտված անհատը ընդունում է սննդային վարքի սահմանափակումային մոդելը որպես սեփական կամային որակների իրացման դաշտ, ինչը միևնույն ժամանակ հանդիսանում է ինքնահաստատման և սեփական կյանքի կառավարման զգացողության հիմք: Այսպիսի անձինք հակված են սեփական հաղորդակցային և սոցիալական ադապտացման խնդիրները կապել արտաքին իրական կամ երևակայական թերությունների հետև դրանց լուծումը տեսնում են այդ թերություններից ձերբազատվելու մեջ: Այսպիսի հեռանկարում ի հայտ են գալիս սննդային վարքի խիստ սահմանափակումային մոդելները, որոնք կոչված են այդ թերությունների, հետևաբար նաև անհատի միջանձնային և ներխմբային հարաբերությունների շտկմանը: «Ինքնակառավարման» կոպիսզ մարտավարությունը նախընտրում են հուզական զսպվածություն և ցուցաբերող անձինք, ընդ որում հուզական ապրումները մինիմալ կերպով են ազդում այսպիսի անձանց ընտրության, վարքածևի, կամ կամային որակների արտահայտման վրա: Պարզ է, որ դեռահասության, կամ վաղ

պատանեկության փուլում գտնվող այսպիսի աղջիկների համար խիստ սահմանափակումային սննդային վարքը հանդիսանում է սեփական մարմնի նկատմամբ թերարժեքության զգացման կոմպենսացման միջոց: «Խնդրի լուծման պլանավորում» մարտավարությունը ցույց է տալիս իրավիճակների նպատակաուղղված գնահատման, դրանց վերլուծության, հնարավոր վարքային մարտավարությունների ընտրության և անցյալի փորձի ու առկա ռեսուրսների վրա հիմնվելով՝ գործողությունների պլանավորման անձի հակվածությունը:

Տվյալ աշխատանքի շրջանակում նախատեսված հետազոտությունների եզրափակիչ փուլը՝ սննդային վարքի սահմանափակումային, հուզածին, կամ էքստերնալ շեղում ունեցող աղջիկների շրջանում Ջ. Ռավենի ընդհանուր մտավոր զարգացածության աստիճանի չափման պրոգրեսիվ մատրիցաների աղյուսակի կիրառումն էր: Թեսթը նախատեսված է անձի ընդհանուր մտավոր զարգացածության աստիճանի չափման համար՝ անկախ ազգային պատկանելիությունից, կրթությունից, կենսափորձից: Թեսթը բաղկացած է 60 սանդղակներից: Յուրաքանչյուր սանդղակում ներառված հանձնարարությունը նախորդից բարդ է: Թեսթի լրացման համար տրվում է 20 րոպե ժամանակ: Յուրաքանչյուր հանձնարարության ճիշտ լուծումը գնահատվում է 1 միավոր: Այնուհետև հաշվարկվում է ստացված միավորների ընդհանուր գումարը և դրանց գումարն ըստ բաժինների: Արդյունքների վերծանումը կատարվում է հետևյալ աղյուսակի համաձայն/Աղյուսակ 11/.

Աղյուսակ 11.

Ջ. Ռավենի ընդհանուր մտավոր զարգացածության աստիճանի չափման պրոգրեսիվ մատրիցաների աղյուսակ

Ճիշտ պատասխանների քանակ	A	B	C	D	E	IQ	Ախորոշում
-------------------------	---	---	---	---	---	----	-----------

5	8	4	2	1	0	62	Մտավոր
16	8	4	3	1	0	65	Ինտամնացոլթյուն 0-
17	8	5	3	1	0	65	20
18	8	5	3	2	0	66	Իմբիցիլոլթյուն 21-
19	8	6	3	2	0	67	50
20	8	6	4	2	0	69	Արտաբնական
22	9	6	4	2	1	71	Ցածր դեբիլոլթյան
23	9	7	4	2	1	72	ցուցանիշ 71-80
24	9	7	4	3	1	73	
25	10	7	4	3	1	75	
26	10	7	5	3	1	76	
27	10	7	5	4	1	77	
28	10	7	6	4	1	79	
29	10	7	6	5	1	80	

Աղյուսակ 11 շարունակությունը

ճիշտ պատասխանների քանակ	A	B	C	D	E	IQ	Ախտորոշում
30	10	7	6	5	2	82	Մտավոր
31	10	7	7	5	2	83	զարգացած ոլթյան
32	10	8	7	5	2	84	միջինից ցածր
33	11	8	7	5	2	86	ցուցանիշ 82-90
34	11	8	7	6	2	87	
35	11	8	7	7	2	88	

37	11	9	8	7	2	91	Մտավոր
38	11	9	8	8	2	92	զարգացած ության
39	11	10	8	8	3	94	միջին ցուցանիշ
40	11	10	8	8	3	95	91-100
41	11	10	9	8	3	96	
42	11	10	9	9	3	98	
43	12	10	9	9	3	99	
44	12	10	9	9	4	100	
45	12	10	9	9	5	102	Մտավոր զարգացա-
46	12	10	10	9	5	104	ծ ու թյան նորմալ
47	12	10	10	9	6	106	մակարդակ
48	12	11	10	9	6	108	101-110
49	12	11	10	10	6	110	
50	12	11	10	10	7	112	Մտավոր
51	12	11	11	10	7	114	զարգացած ության
52	12	11	11	10	8	116	նորմայից բարձր մա-
53	12	11	11	11	8	118	կարդակ 112- 120
54	12	12	11	11	8	120	
55	12	12	11	11	9	122	Մտավոր զարգացա-
56	12	12	12	11	9	124	ծ ու թյան բարձր
57	12	12	12	11	10	126	ց ու ց անիշ
58	12	12	12	12	10	128	/հանճարեղ ու թյ ու ն 121-
59	12	12	12	12	11	130	130
60	12	12	12	12	12	140	

Կատարված թեսթավորման արդյունքները ցույց տվեցին, որ.

ա/Սննդային վարքի սահմանափակումային շեղում ունեցող 102 հետազոտող թյան մասնակիցների ընդհանուր մտավոր զարգացած ության միջին ցուցանիշը՝ ըստ Ջ.Ռավենի արոգրեսիվ մատրիցաների աղյուսակի միջին արդյունքների, կազմեց 94,85 միավոր, ինչը ցույց է տալիս ընդհանուր մտավոր զարգացած ության միջին մակարդակ: Բ/Սննդային վարքի էքստերնալ շեղում ունեցող 20 մասնակիցների մոտ ընդհանուր մտավոր զարգացած ության

ցուցանիշն ըստ Ջ. Ռավենի աղյուսակի միջին արդյունքների՝ կազմեց 96,82 միավոր, ինչը ցույց է տալիս ընդհանուր մտավոր զարգացածության միջին մակարդակ:

գ/ Սննդային վարքի հուզածին շեղում ունեցող 78 մասնակիցների մոտ ընդհանուր մտավոր զարգացածության մակարդակի ցուցանիշն ըստ Ջ. Ռավենի աղյուսակի միջին արդյունքների կազմեց 114,5 միավոր, ինչը ցույց է տալիս ընդհանուր մտավոր զարգացածության նորմայից բարձր մակարդակ: Այսպիսով, որ սննդային վարքի սահմանափակումային, կամ էքստերնալ շեղում ունեցող, դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների ընդհանուր մտավոր զարգացածության մակարդակը միջին է: Մինչդեռ սննդային վարքի հուզածին շեղում ունեցող աղջիկների ընդհանուր մտավոր զարգացածության մակարդակը նորմայից բարձր է:



## ԵՅՐԱԿԱՏՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

Կատարված հետազոտության արդյունքում ստացված տեղեկատվությանը որոշակիորեն լույս է սփռել դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի սամանափակումային, հուզածին և էքստերնալ շեղումների առաջացման գործընթացում անձնային և սոցիալական դիրքորոշումների ազդեցության մեխանիզմների խնդրի վրա: Կիրառված մեթոդների և ստացված արդյունքների վերլուծությանը թույլ է տալիս պարզաբանել, թե որպիսին են այն դիրքորոշումները, որոնք վերոհիշյալ սննդային վարքի շեղումներ են առաջացնում դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ:

Հետազոտության ընթացքում իրականացված գիտական գրականության ուսումնասիրության արդյունքում պարզաբանվեց, որ դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի սամանափակումային, հուզածին և էքստերնալ շեղումների առաջացման հիմքում ընկած են այնպիսի գործոններ, ինչպիսիք են.

Նորածնությանը տրվող նշանակությանը, դրա տեղը անձի արժեքային համակարգում,

Դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների ընտանիքում և առաջնային սոցիալական խմբերում գործող սննդային վարքի կարծրատիպերը,

Սննդի ընդունման գործընթացի և մարմնակազմի ձևավորման վերաբերյալ ընտանեկան ավանդույթները,

Կանացի կերպարի սոցիալ-մշակութային կարծրատիպերին համապատասխանելու շահադիտական դիրքորոշումը՝ կախված անձի արժեքային համակարգի յուրահատկություններից,

Սոցիալական միջավայրին ադապտացվելու, նմանվելու, դրա կողմից ընդունված լինելու ձգտումը,

Սոցիալական խմբի սպասումներին, խմբային պատկերացումներին և ավանդույթներին համապատասխանելու ենթագիտակցական մղումը, ճնողական վարքի մոդելների

յ ու ր ա գ ու մ ը ,

Սոցիալ -մշակու թայ ին կարծրատիպերի հետ  
ինքնահամեմատության հակվածությունը:

Ինչպես պարզ դարձավ, դեռահասության, կամ վաղ  
պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի  
սահմանափակումային, հուզածին և էքստերնալ շեղումների  
